

Jahakir...

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Kevorkian, Vartan (1893-1933). Jahakir.... 1919.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment possible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

Ամսալուս

Վարդի Գյուղակն

(ԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՑ)

Թ Ե Խ Բ.



Տպարան
ԴՐԵՖԱՆ ՀԻՇԱԿԱՆԱԿ
Գ. Ա. Հ Ե Ր Ե
1919

41270665

ՎԱՐԴԱՆ ԳԵՂՐԳԵՎԱՆ

ԶԱՀԱԿԻՐ

(ԳՐԱԿԱՆ ՀԱԽԱՔԱԾՈՅՑ)



Բ. ՇԵԽ




ՏՊԱՐԱՆ
ԳՐԱԿԱՆ ՀԱԽԱՔԱԾՈՅՑ
Գ. Ա. Հ. Ի. Բ.
1919

FCH TOL 2008 1953
2008 126873

0474







Տաղանդաւոր գրագետն ու մեծ երգիչը հայ
տառապանին. — Ենթայիս նախագահի Բարիկ
զնուող Արարատեան Համբավետուրեան
պատգամաւորութեան:

BnF
L & A







ՈՒԽՏԱԿՈՐԸ

ՊԵՏՕՑԻ ԵՒ ԻՐ ԽՄԲԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ուստացութեան ամօթը ճակտիս, անյագ վրէժի՝ զայրոյթը կրծքիս, սար ու ձոր անցած ուխտի եմ եկել: Եւ մէկիկ-մէկիկ ես կը համբռութիմ ոռւրբ շիրիմները նահատակների, թողութիւն կ'ուղիմ նրանց ոստերից, որ աղատութեան սրբազան մարտին ես անմասն եղայ, ես ապրում եմ դեռ . . .

Եւ լուռ զիշերւայ այս տխուր ժամին, երբ մեռելները մեզմ փախում են և պատմում իրար իրենց վիշտ ու ցաւ, երբ մոռացութեան, ապերախտութեան խորունկ կսկիծը ցաւի երգ շինած ողը են մրմնջում շիրիմների տակ, — զլուխս դրած հողի թմբերին՝ ես ականջ կը դնեմ նրանց զրոյցին, անգիր կ'ուսանեմ նրանց շշուկներ և սրախս վրայ բոցեղէն տառով ես կը դրոշմեմ մահու աշխարհից հնչւող ձայները, ես կը հառաջեմ նրանց հառաջով, ես կը կսկծամ նրանց ցաւերով, ես լաց կը լինեմ նրանց արցունքով, ապա անըզգայ, քարսիրտ աշխարհին ցաւը կը պատմեմ նահատակների . . .

Լուռ է ամէն ինչ, զիշերը՝ խաւար, դաշտերը՝ մռայլ, լեռները՝ համբ, վտակի՝ անձայն, քամիներն՝ զգոյշ կաղաղութիւնը նւիրական է — այսուեղ են հանգչում նահատակները

Շիրիմ չկայ, թումբեր չկան, քար չկայ, անյիշատակ ու անդարդ, հոկտյական դամբարան . . .

Դաշտ, արիւնոտ վայր՝ զիտեմ, դու տեսար այն ահեղ
մարտը, ուր մէկը տասի դէմ, նզովք կարդալով սեւ ճակատագրին՝
մէկ-մէկ փռւեցին իմ եղբայրները՝ խեղճ հայրենիքի մօտիկ փրկու-
թեան անհուն կարօտը այրած սրտերում, անկատար իղձերի, վառ
երազների ցաւը կրծքերում . . . Ասա՛, գաշտ, ո՞ւր, ի՞նչպէս ընկան
նահատակները, ո՞ւր են նրանց սրբազան շիրիմները . . .

Լուռ է սեւ գաշտը, զիշերը՝ խտւար, քամիներն՝ անձայն
Մեծ լութիւն, դուատը անհունիւ դու, որ ոճիրն ու ազ-
նիւ զործը միեւնոյն սիրով համր խաւարի բիւրածալ՝ քօղով ընդ-
միշտ ծածկելու տխուր դերն ունես. միայնութեան, խուլ անկիւն-
ների, լուռ զիշերների մուայլ սիրահար, որ անհուն դարուց, ով
զիտէ ինչու, քո անզգայ ծոցում արիւնոտ դէպքի, անյայտ ցաւերի,
ծածուկ արցունքի, կորած հառաջի՛, անզօր դայրոյթի զաղտնիքն
ունես, — դու տեսար մի օր այս սեւ դաշտերում, ինչ որ աշխար-
հում ոչ ոք չտեսաւ. Դո՛ւ ասա զոնէ, ի՞նչպէս ընկան նահատակ-
ները և ո՞ւր են նրանց սուրբ շիրիմները . . .

Լուռ է ամէն ինչ, խաւարը՝ խեղդող, վտակը՝ համր
Գարահիսար լեռ, անէծքի՛ անուն. քո կանաչ մէջքին այն
սեւ զիշերում դու լոսորային ծիրանիւ առար, խոչ ու խոռոչ-
ներ և մերկ կողերդ ալ — կարմիր քօղով մէկէն պատեցիր. թէ որ
խոր ցաւից, անհուն ամօթից բարդ-բարդ ամպերով չէիր պատել
դէմքդ, ասա՛ դու ինձ, լե՛ռ, քո ո՞ր ժայռի տակ լուռ ընկառ
Պետօն, ո՞րտեղ պառկեցին իր ընկերները . . . Դու միայն էիր քո
ստւերի հետ լուռ յուղարկաւոր նահատակներին. ասա՛ լացեցի՛ր
այնքան մահերը, և քո այրերի լուռ կամարները արձագանգ տւի՞ն
քո հոկայ սուզին . . .

Լուռ է սեւ լեռը, խաւարը՝ ճնշող, քամիներն՝ անշշունչ:
Մոլար, թափառական, խելազար քամի. դու, որ մենաւոր
եղէզների հետ ողբ ես յօրինում ուշ զիշերներին և նրանց դալար
մէջքերին փարած՝ մեղմ հեծեծում ես մի անյայտ ցաւից. դու որ
կորած, անտէր շիրիմների զաղտնիքն ես երգում մեղմիկ շշունջով.
դու որ արիւնոտ մարտի դաշտերում ընկած քաջերին զովք ես
յօրինում և անյազ լիզում վառ ծաղիկների արիւնոտ ցօլը կիզիկ
արեւի շողերից ծածուկ, — ասա՛, դու, ինչո՞ւ ես այսօր լուռ,
զգոյշ, ինչո՞ւ ես անձայն. այն ի՞նչ զաղտնիք է, որ եթերային թե-
ւերիդ առած՝ լոիկ փախչում ես աշխարհէ աշխարհ. Դու վախինում
ես յուզել հանգիստը այս լուռ վայրերի . . . Զը լինի՞ թէ զիտես,

թէ ո՞ւր են պառկել հայ հայդուկները։ Դէ՛հ, ասա՛ դու ինձ, ո՞ր ձորում փնտոեմ շիրիմը նրանց . . .

Լուռ է խենթ քամին, խաւարը՝ խեղդող, դաշտերը՝ մռայլ, լեռները՝ համր:

Բայց ահա թփերն ու ծաղիկներն իրար են զալիս, նրանց թերթիկներ մեղմ փաթաթւում են, փարում են իրար և զալարւում են քամու մեղմ շնչով։ Իրար մօտ զալիս ինչպէս անտէրունչ, մոռացւած որբեր, որնք դողում են խաւարից, ցրտից, — և նրանց քնքոյշ սօսափիւնի մէջ հազիւ լսում եմ ուշիկ շուկներ։ որպէս մրմունջը վշտացած ողու, որպէս հեծեծիւնը լացող գիշերւայ . . .

— «Լո՛ւռ կաց, ուխտաւո՛ր, լո՛ւռ . . . Մի՛ խոռվիր տխուր հանգիստը ցաք ու ցրիւ ընկած մեր ոսկորների . . . Շիրի՞մ ես փընտըռում . . . Գնա՛ դէպի այնտեղ, ուր կեանքից խսպառ յղփացած մարդը, աշխարհի ցաւին անզզայ, անփոյթ, սիրում է մեռնել ճոխ ապարանքում — այնտեղ՝ ուր մարդը դողում է մահից և բռնութեան առաջ՝ ինչպէս վատ սողուն՝ ե՛ւ զալարւում է, ե՛ւ հողը լիզում, ուր մի կաթ արիւնից սարսափի մատնւած, նա ծով արցունքով ցողում է ձեռքը բիրտ բռնաւորի, որ թողնի նրան անարդ կեանքից յետ՝ մի անարդ մահով՝ իր շունչը փչել . . .

«Շիրի՞մ ես փնտում . . . Ո՛հ, զգոյշ շարժւի՛ր Նայի՛ր ոտքիդ տակ՝ տե՛ս, դու քայլում ես շիրիմների մէջ . . . Ժայռերի ներքեւ, վտակի տիիին, սեւ լերան կրծքին, այս թփերի մէջ, այն խոտերի տակ՝ անտէր փուած են մեր ոսկորները . . . Քամին է շոյում մեղ իր մեղմ շնչով. ծաղիկն է լալիս մեղ ուշ զիշերին, խաւարն է ծածկում մեղ զազաններից . . . Թո՛ղ, թո՛ղ մեղ հանգիստ ու անցիր զնա՛ . . .

«Երբ արշալոյսի առաջին շողեր կ'ոսկեզօծեն լերան կատարը, դու ուշով նայիր հսկայ ժայռերին. տե՛ս, սեւ են կտրել ինչպէս մութ զիշեր և պատառ-պատառ բաժնւել իրարից։ Այն սեւ օրերում նրանք զայրոյթի ցաւից ձեղքւեցին, այն մեր անէծքից նրանք սեւացան մեր սրտերի պէս . . . ինչե՛ր են աեսել. այն ի՞նչ կոխւ էր . . . Օրերով սոված՝ մենք խոտ ծամեցինք, չար կուի համար փամփուշտ էլ չկար (ա՛խ, հայ ժողովուրդ, ա՛խ, անմիտ լալկան). թշնամու գնդակով երկու տակ խոցւած, հրացաններիս տաք-տաք փողերով դեռ կռւում էինք, ճանապարհ հարթում նրանց կարգերում և երկու քայլում ընկնում շարքերով։ Խակ ով զէնք չունէր, ողջ թէ վիրաւոր, այն օրհատական, արիւնոտ մարտում գէթ վերջին անդամ

պինդ փաթաթւում էր թշնամու վզով, կրծում կոկորդը սուր առամ-ներով, յոգնած ուժասպառ զետին թաւալւում, կրկին վեր կենում, կրկին զալարւում վիրաւոր օձի պէս թշնամու մարմնով և վերջին անգամ փուռում էր զետին՝ կուրծքը պատառւած, անյոյս անկեն-դան . . . Այսպէս ընկանք մենք և մեր կոչերին ոչ ոք ձայն տեսց, մեր աղաղակներին ոչ մի արձագանդ, բացի լեռներից և սև ժայ-ուերից . . . Թո՛ղ մեղ զնա՛, և մի՛ խռովիր դրւ մեր հանդիսար . . .

«Խւխախի՛ ևս եկել . . . ինչո՞ւ չհասար այն ահեղ ժամին, երր մենք ուժասպառ յոգնած, վիրաւոր ընկնում էինք զէնքով կամ ան-զէն, տամնեակ զնդակից սրտերս խոցւած . . . Ո՞ւր էիր, երբ զէ՞նք աղերսեցինք, երբ որ անփամիուշտ մեր հրացաններ ժայռերի վրայ մէկ-մէկ փշեցինք, երբ իբր վահան՝ կրծքերս ունէինք, և հատո-դաշոյն՝ մեր բազուկները, երբ լալիս էինք անզօր զայրոյթից՝ մատ-նըւած մի անարդ սեւ մոռացութեան, երբ որ մեր շուրջը մարդիկ անվրդով գլուխ էին պարզում սրերի առաջ, ինչպէս ոչխարի հնա-զանդ հօսեր . . . Այն օրհասական, այն ահեղ ժամին, ասա՛, ո՞ւր էիր, ինչո՞ւ լուռ կացար . . . Թո՛ղ մի՛ խռովիր դու մեր հանդիսար, անցիր ու զնա՛ . . .

«Ի՞նչ ես փնտում խուլ ամայութեան մէջ մոայլ դաշտերի, ուր մահն է իշխում և լուռ գերեզման, ուր ցան ու վշտեր մարած են ընդմիշտ մեր կեանքերի հետ, ուր քամին անգամ զզոյշ է ոու-լում, ուր թոշտններն էլ ահով են անցնում . . . Թո՛ղ մեղ, հեռա-ցիր Գնա՛ ուխտ այնտեղ, ուր վէրքն է մխում իորունկ ցաւերով, արցունքն է հեղեղ, հառաչանքն՝ անվերջ թողութիւն ես ողում . . . Երբ կը սրբես լացող աչքերը, երբ որ կը սփոփես այրւած սրտերը, երբ մենակ կանես այն, ինչ մեղ հետ չարիր, — այն ժամանակ արի և ասա՛. «Թողութիւն տւէ՛ք» . . . Ա՛հ այն ժամանակ հաղար տեղերից, հաղար ձայներով հաղար ձորեր և հաղար քարեր քիզ մէ-կէն կ'ասեն. — «Հաղա՛ր երանի քեղ». Եւ թէեւ անշիրիմ ու անյի-շատակ, մենք էլի կը քնենք հանդիսար յաւիտեան» . . .

Եւ լուռ անցնում եմ արիւնոտ դաշտով. քայլում եմ ահ-վերջ յառաջ ու յառաջ — այնտեղ, ուր վէրքն է մխում ցաւերով, ուր արցունքն է հեղեղ, հառաչանքն՝ անվերջ և արիւնը՝ ծով . . .

Նահատակ ընկերնե՛ր, արդեօք դեռ երկա՞ր պիտի սպառէք իմ վերաղարձին . . .

Ա. ԱՀԱՐՈՒԵԱՆ



ՍՈՒՐԵԱ ԿԱՅՆԵՐՈՒՆ ԱԹՁԵՒ

Անցեալ, անցեալ եւ իր օրեն եւ իր արեւն անդուռութեան,
Երբ դահլիճին կապոյց պատերէն, տիրսկանօրէն առկախ,
Քու պատապանի հպարտ նայուածքներովդ աղամանդէ,
Իմ մանկական հոգիս յոյսով կը ծորէիր, երկիւղներ հալածել էն:

Նախնիքներէս մինչեւ ինձ քու տողիւններդ ահա կ'երկարին,
Ո՞վ իշխանական, ահաւոր, նումարիս եւ բարեկամ Սուր,
Ու սնարիս, երազներուս եւ կեանքիս երջանկութեանցը մեջէն,
Միւս մահավնիոր գտած եմ քեզ դարանակալ ոնիրին . . .

Եւ կը սիրեմ զեզ, դուն՝ Արդարութիւն եւ Բարբարոս,
Դուն, որուն կայծկլտուքը սոսկում մըն է եւ խրախոյս մը միան-
գամայն,

Դուն, որուն ժամագը անբաւելի պարտաւթիւն մը ամօքաբեր,
Դուն, որուն դադարը սուրկացում մըն է զեզ պատող ձեռքներուն . . .

Թէեւ քու ոսկեխանդակ պատեանդ արտացոլ ումն է կեանքիդ,
Բայց դուն մերկութեանդ մեջ միայն կրնաս աստուածօրէն գեղեց-
կանալ . . .

Պատեանէդ դուրս միայն քու ծարաւդ կը յալեն ոյ եւ ցասումդ
կ'ամոքի

Անկէց դուրս միայն քու տիրոջդ նակատը պիտի կրնախիր պատկել . . .

Եւ սյսպէս մերկ՝ խնչպէս նիստ, իմ դողդոջուն եւ զայրացկոտ ձեռ-
ներուս մէօն յանախ,

Քու լոռութեան կայծերովդ երգերուն էն յաղթականը կ'երգես,
Եւ շարժումէդ եւ տունչէդ եւ տողիւնէդ ահաւասին որ դուրս կը
ժայրքի,

Եւ կոփիւին նարոզը, աղատութեան բուրմունիքը եւ փառքը կտրին
մարդուն . . .

Բայց խորհրդաւոր սուսեր, զարհութանքով կը տեսնեմ որ այլեւս
կ'ատես զիս,

Այսօր մահուան եւ կեսնեի օր, հարուածի եւ վրեժի եւ պատիժներու օր,

եւ երբ քու կայծակն սկերպ հասսկդ տրթունքներուս կը տանիմ կամ
ձեռքովս քեզ կը ույեմ . . .

Բարկութեանդ կայծերը, աշքերուս մէջն, նզովքներուն են անեղը
ինձ կ'ուղղեն . . .

Մեղայ, մեղայ եւ ըսէ ի՞նչ գրերով է գրուած իմ ճակատագիրս
քու նուարտութեանդ վրան,

Արդեօս ստրուկի՞ թէ յաղբողի արիւնս է որ քու վրադ պիտի ցոլայ . . .
Թէ հայրենիքին անիծապարտ թօն սմիներուն սեւ արիւնն է որ պիտի

վազէ,
Քու բերանեդ դար վար, աղբիւրներուն նման եւ յորդսինուան . . .

Մերկացի՛ր, մերկացի՛ր, մերկացի՛ր, օրերուն Օրն է, ո՞վ իմ սուրս
աղիտաւոր . . .

ՍԻԱՄԱՆԹՈ





Ա Լ Պ Օ Մ Ը

Մեր կիանքն է ան, — ալպօմը, երինազան դրասանգներով դրուագուած մեր կեանքը, զոր ճակատագրի հովերը վեռլենեան տերեւի մը նման օրն ի բուն կ'օրօրեն . . . Ռւ անցորդներ, — անոնք որ հրաւիրուած են յիշատակի տող մը զետեղել անոր ցուրտ էջերուն վրայ, իրենց զգացումներուն ու բաղձանքներուն լաւագոյնը ծրարած ըլլալու պատրանքով՝ կը ստորագրին հոն:

Ռւ այսպէս, օրերու և տարիներու համբ բեռին տակ ալպօմն է կը լենայ, կ'ուռի յոյզիրով ու յոյսերով թախաղուն, ճակատագրին պէս անոնց, որ օր մը անցեալը ապրելու մտածումով կազմեցին զայն, — ու նաեւ անոնց, որ մեզի մաղթեցին երջանկութիւններուն ամենէն զեղեցիկը և ապա անձայն ու անշուկ զացին, ու ժամանակը տարաւ զիրենք, անզիտակ՝ որ իրենց մտերմութիւնն իսկ պիտի կազմէր հիմքը անոնց մեզի մաղթած երջանկութիւններուն . . .

‘Հո՞ ալպօմին մէջ ին մեր սէրերը, մեր բաղձանքներն ու խոչալներն ալ, ու նաեւ անոնցը՝ որ ամէն անզամ իրենց հոգիէն մասնիկ մը, խանդաղատանքի պայծառ զանակ մը դրին, — իղձ մը զոր պիտի չկրնային գուցէ շրթնել . . .’

Ո՞հ, որքան զզլիսիչ, որքան քաղցր զգայնութեամք մը կը խօսի ան մեր սրտին. — ալպօմը, — անոր իւրաքանչիւր էջը հանզիտութիւնը ունի մեր կեանքին, որ լի է շատ անզամ պատահարներու և դէպքերու անդոհով:

Քանի քանի հողիներ հոն ծրարած են իրենց խանդէն ու երաղէն փոքրիկ պատառ մը՝ — լո՛ւռ ու խորհրդաւոր տողեր, որոնք կախարդանքը ունին իրերու և զզայութիւններու վշտազին բանաստեղծութեան . . . : Շատ անգամ տող մը, բառ մը, ընդելուղուած բաղձանքներուն ամենէն քալցրովը, կը թրթուայ պղուական ու զիւթիչ եզանակով մը, ու միշտ ալ, զրիթէ, թախիծն է որ կանգ կ'առնէ, ու կէտեր, անիկիք կէտեր կը վաղեն իրարու ետեւէ՝ զիրար դրկելով . . . Ո՞հ այդ բառերը, այդ տողերը կը նմանին երազունակ այն աչքերուն, որոնք կ'արտասունն, ամէն անգամ, երբ սիրած ցաւերու տուայտանքն է որ կ'երկարի ու կուզայ թազուիլ մինչեւ խորերը մեր հոգիին կեանքը զոր ապրելու անհուն բաղձանքով կը տառապինք, կը նմանի այդ ալ պօլին, որուն մէն մի էջ զարդարուած է յիշատակի մը ցոլքերով:

Ա՞հ, առանց այդ յիշատակներուն որքա՞ն տխուր սլիտի ըլլային մեր օրերը . . . որովհետեւ անոնք են որ կը հիւսեն տարիներու երկարածիգ շղթային այն օղակները, որ մեր կեանքի հրապոյը կը կազմեն: Անոնց մէջ ամենէն՝ պայծառ՝ խորհուրդն իսկ է մեր իտէալին, ու ատոր համար է որ զայն աւելի կը սիրենք, ու ամէն անգամ երբ կը նայինք անցեալին վրայ, մեր բովանդակ ու շալքութիւնը կը գրաւէ ան: Յիշատակներով լիցուն մեր կեանքին մէջ խորհուրդներու անդորրիկ հանգրուան մըն է ալ պօլը, որ միշտ ալ կը փափաքինք որ մեր ծանօթները խօսին մեզի հետ . . . : Դիպուածը, որուն զոյտթեան տարակուսանքը սլիտի ունենայինք ներհայեցումի մեր պահերուն, իր բոլոր ձեւերուն և երեւոյթներուն տակ իրականութիւն մը կը գառնայ, երբ յիշատակներ կան: ապրըւած, երբ կը զգաս թէ խորհուրդի այն ոլորաը, որուն մէջ չնչած ես, դիպուածին կոյր վազքը սանձահարած՝ յիշատակ մը զարձած է կեանքիգ համար: Ալ պօլը, ահա այդ յիշատակներուն կենդանի սրատկերն է, ու երբ ա՛լ կը գարձնես տնոր սեւցած էջները, տպաւորութիւններու և ապրուած օրերու շղթան է որ կը քակտի . . . Ժամանակը, տարիները յամրօրէն կը լուծոյին՝ ամիսներու, շաբաթներու կը վերածուին, ու շաբաթներն ալ օրերու, ժամիկրու, վայրկեաններու՝ և այսպէս անցեալը տակաւ կը մերկանայ իր մշապատ ոլորտէն, ու յիշատակը լոյսի պայծառ ճաճանչաւորում մը կը ստանայ, ու ա՛լ բոպէ մը կուզայ որ՝ զրուած խրաքանչիւր տող մարմին կ'առնէ ու կը խօսի՛, կը խօսի՛, կը խօսի՛ քեզի . . . բառեր, լո՛ւռ և համբ բառեր, որոնց լիզուն միայն զուն կրնաս հասկնալ,

Հ. արդէն անկարելի է որ ուրիշ մը նոյն այդ պատկերին մէջ կարենայ առարիլ անցեալ մը, այնքան կենդանի, որքան՝ գուն, կարենայ լոյսի փողիողումներուն մէջ տեսնել երանգներու այն ներդաշնակութիւնը, որքան պիտի կրնացիր տեսնել գուն . . . Սէքեր, պարզ անսեթեւեթ համակրանքներ, երբեմն նոյնիսկ կեանքէն ու կեանքի խմասուններէն փոխ առնուած ճշմարտութիւններ իրարուքով կուզան մեզի հծծելու խօսքեր, որոնց անկելծութեան չենք տարակուսիր բնաւ, և ամեն անդամ հաճոյքն ու հոգածութիւնը կ'ունենանք մեր գուրգուրանքին առարկայ գարձնելու զանոնք, որովհետեւ կը զգանք թէ մեր մտերմութիւնն ու բովանդակ անցեալը կ'ապրին անոնց մէջ։ Անոնք մնը կեանքի անբաժան մէկ մասնիկն են հիմա, — ընկերը մեր վաղնջական երազներուն և տենդերուն, որոնք ժամանակին հետ պիտի ստիլն, զիտենք ատիկա, և սակայն զիտենք նաեւ որ, ժամանակը պիտի վելիցկացնէ ու արգասաւորէ անոնց իրական հմայքը, նման այն առարկաններուն՝ որոնց արժէքը տարիններու հետ ուղիղ կը համեմատի Եւ ասոր համար է որ քանի մանկութիւնը կը հեռանայ, քանի պատասնեկութիւնը կը խուսափի մինչ և քանի երիտասարդութիւնը կիթստումի նշաններ ցոյց կուտայ, ալպօնի մը տիտոր էջերուն մէջն անցեալը այնքան աւելի հրապարիչ կը զառնայ մեզի համար Հու՝ վաղիմի ընկեր մըն է որ իր որտին լաւազայն իղձերը զետեղած է՝ անդին՝ մանկութեան բարեկամ մը, որուն հետ ամբողջ տարիններ տպրած եռ ու լուծ նոյն ուսուցիչը, որ քեզի խօսած է, և որոնց երկուքն ալ սակայն, չկան այլեւս, զաման և անողոք մահը խլած է զանոնք քենէ, ու հիմա, ամէն անդամ, երբ կը նայիս այդ տողերուն, որոնց տակ մտերիմ՝ մը ստորագրած է, և որ հիմա չապրիր ա՛լ, աչքերդ կը լեցուին ջերմ արցունքներով։ Բայց դարձուր քնացող ալպօնիդ էջերը, ու ահա ձայն մը, լուս ձիչ մըն է որ կը փրխի սրտիդ խորերէն, — մեռելններն են որ կուլան հոգիիդ մէջ, անոնք որ երբեմն մալթանքներուն ամենէն թանկապինը ըրին քեզի՝ կեսնի և սան բաղձալով, կախազանեներու մաայլ խորհուրդը կ'առպրին հիմա Ռւ այսպիս պատրանք երկարածիկ թրժուամներով լի թախիծը՝ կուզան պարուրել հոգիիդ, և ալպօնի մը դալուկ էջերը, որոնց կը զբաս որ կապուած է ա՛լ բալանդակ էտ-թիւնդ, ու ի՞նչ որ ունիս ամենէն թանկապին ու ամենէն քաղցր այս աշխարհիս վրայ, այլեւս կուլան հոգիիդ խորը . . . Եւ այդ արցունքը յուշիկ բանաստեղծութիւն խոկ է, միոթիք երգը բոլոր այն հոգիններուն համար, որոնց կեանքը խորհուրդի և զգայնութեան աշխարհ մըն է . . .

* * *

Ալպօնս է կուլայ ահա մատներուս մէջ, ու իր տրտմաթախիծ վիշտը զիշերներու համերգին չափ խորունկ է: Ո՞վ պիտի ըսէր արդեօք ինծի անոր երգին չափ աղու երգ մը, ո՞վ պիտի հծծէր արդեօք ինծի, տարագրի այս դաժան խութերուն մօտ, անոր օրօրը, որուն դիւթական ձայնով կեանքի բոլոր վշտակիրները կը քնանան: Անոր դալկացած թերթերը, որոնք վարանքի անդոհով գալարուած են, ո՞հ կը սիրեմ ես, որովհետեւ ամէն իրիկուն լլկանքիս խոնջ պահերէն վերջ, ա՛ն է որ ողեկոչումը կ'ընէ ինծի այն երազ օրերուն, որոնք կը զզամ թէ զային անդարձօրէն, և որոնց կարօտը կը հիւծէ, կը հիւծէ կը հիւծէ զիս . . . Ու ասոր համար ես պիտի պահեմ քեզ, իմ անշուք ու խոնարհ ալպօնս Եղեռնը, որ խլեց ինէ ինչ որ ամենէն թանկ էր ու սիրելի ինծի, քեզ միայն բաժին ձգեց ճակատագրին մոայլ խոռվքը իր զերազոյն զարհուրանքին մէջ ապրելու համար. ու ես, ահա՝ կը սեղմեմ քեզ կուրծքիս վրայ քու աշնանացած թերթերդ այսուհետեւ պիտի խօսին ինձ այն բոլորը, բոլո՞րը, որ ոչ մէկ մտերիմ պիտի կրնար ձայնել ինծի. քու յոպնած թերթերդ պիտի պատմեն ինձ անսահման սէրը մօր մը սրտին, ու կարօտի բոլոր այն նեքիարները որ օր մը փսփռացին ինծի . . . Ու ես, ժամանակին հետ, ա՛լ աւելի պիտի սիրեմ քեզ, ո՞վ իմ անշուք ու սիրելի ալպօնս . . .

Վ. ԳԵՂՐԳԵՏՅԱՆ



ՑԱՌՈՒԹՅՈՒՆ *

Զատիկ զիւեր, «Քրիստոս Յարեաւ», կ'երգէիմ,
Խաւար զիւղակն անգամ լոյսով ողողուն,
Երանութեամբ կը ժողար, —
Վերածրնունդ երազներու երկնային,
Փքքումը նոր մոխիր դարձած յոյսերուն,
Ու նոր կեանիքի նոր բրնար :

Այլ մենք անխօս, լուռ, իրարու նայեցամիք,
Շնեզմէն հեռու. մեր անուշիկ Յարութիւն,
Ծովին սարսուռ, Լուսնին ժող,
Եկան մեր բով, այլ ոչ մի ձայն, արձագանգ,
Ամայքներէն հասաւ մեզի, մոլորուն,
Մեր սրտերուն բով մատոլ . . .

Անդունդներ կան մեզի բաժնող իրարմէն,
Հառաջներով լցինք զանոնիք, այլ ափսո՞ս,
Արոնեցինք զուր բու ձայն,
Ո՞ւր ես, Տրդաս, այլուր յայսերը կ'երգեն.
Այլ մենք մենիկի, արցունիներով վետահոս,
Կր սպասենիք զուր յարութեան :

Ո՞վ Յարութիւն մեր վետակիզ հայրենիաց,
Ո՞վ Յարութիւն տառահալած Հայութեան,
Ո՞վ մեր սրտին Յարութիւն,
Քեզ կը կոչենիք հառաջներով վերասլաց,
Քեզի համար կը տառապինիք յաւիթեան,
Ըստ՝ արդեօք ո՞ւր ես դուն . . . :

Մեր բայլերը դողդոջուն են ու զրկար,
Աշերն ալօս, արցունիներով կը մարին,
Վըրանիս ուժ չի մընաց,
Մռայլ էն եօֆ արեւը Ե՞րբ պիտի զար,
Ե՞րբ ծաղկէին պիտի յոյսերն անցեալին,
Ու բաղձանիներն հայրենեաց

Յիսուս, միայն երկու գիշեր հեռացար
Մայեկի, ու դուն չդիմացար բաժանման,
Յարեա՛ր ու զայն գրկեցիր,
Ե՞րբ ամսէնս պիտի սրեւր վըտահար,
Ե՞րբ դարձունս պիտի մեզի սիրական,
Իր ծընովաց տարագիր

Ճիպուքի

Ռ. ՌՐԵՐԵԱՆ



*]) Զատկի իրիկունը զրեցի այս տողերը Մեր Յարութիւն-
Վրոյր զաւկին անուան տօնն էր ինքը՝ իզմիր, ու պատերազմէն
ի վեր լուր կամ նամակ չենք առած. Մայրն ու եռ, մենաւոր,
Ճշեցինք զինք ու լացինք

Ռ. Ռ.



ԼՐԵՇ ՏԱՏՐԱԿՈ...

Յուլիսի տաք օր մը թիկունքի մեր պինտորները քննելու համար ձիւրու վրայ յուլօրէն նոտած, անտառուաւ և դարձդարձիկ ձորի մը մէջէն անընդհատ կը յառաջանացինք: Կէսօրուան արեւը կ'այրէր ամէն ինչ: Շունչը և բուշականութիւնը զրեթէ մեռած, բնութիւնը կը տոչորէր ահաւոր պապակով մը:

Չայն չկար, ոչ ալ ձորամէջի խաղաղութիւնը խանգարող անտառի ամենափոքրիկ շնկոց մը: Միակ փայտփորի մը կտուցին միօրինակ կրթկրթացումը կուզար եղեւիններու թաւուտքէ մը, որոնք միախումբ ձորամէջի սեպ և ցցուն հողաթումբի մը վրայ կախուած, սաոյիկ ժպրհութիւնով մը կը դիտէին անդունդները:

Հեռուէն հեռու՝ թնդանօթը կը դուար խուլ և արձագանգող վայիւնով մը, ընդհատ ընդհատ մեղի բերելով ծովի և Անաֆարթայի բարձունքներուն մշտական եղերերզը:

Ա՞հ, այդ զուռումները . . . մենք ամիսներէ ի վեր տուն տեղ կորսնցուցած, յոյսը մեռած, մեր երազը բզքտուած, մահուան այս հովիակին մէջ կեանքը կը քաշքչէինք առերեսոյթ և սաոյիկ հանգարատութիւնով մը:

Ճամբու հատուկուր խօսակցութիւններու մէջ երթիմն նոյնիսկ երանի կուտայինք մոլէզներու որ կեանքոտ, ժայռերն ի վեր կը մազլցէին, կ'արտորային, թիրեւս քովետի քարին տակ բոյն մը ունէին, սէր մը, կեանքի նողատակ մը . . .

իսկ մենք . . . մենք անժառանգներն էինք կեանքին Մեր ցեղը բզբութած, մեր ընտանեկան սրբութիւնները ոտնակոխութած, կեանքէն կտրասութած անկենդան խեղճ տարրեր էինք, որ կ'ընթանայինք այսպէս ամէն օր, հակառակ մեր կամքին և ատելութեան, կը քալէինք, կը քալէինք, կ'աշխատէինք և կը ճպնէինք մեզի պարտադրութած բոնաւոր օրէնքին և կամքին անողոք ճնշումին տակ:

Մարդիկ պատերազմի դաշտին վրայ մէկ անզամ կը մեռնին. մենք հազար անզամ, Հայ զինուորին մարտիրոսութիւնն էր որ այսպէս կը մշտնջենաւորուէր բոնաւորին թաթերուն տակ:

Կէսօրը տաք էր արեւը կ'այրէր մեր կունակը. ձիերը սնունդի մշտական նուազութենէ և անսուազութենէ կմախացած, կողը կողին անցած, տքալով և ուժասպառ կը քալէին ձորակին մէջ. իրենց մեղքի և մարտիրոսութեան ճամբան էր այս, ամէն օր այսպէս կը ունակնուն վրայ թիկունքը բերելու համար մարդիկ, որոնք թերեւս տառապանքով իրենց համանման, իրենց չափ սրտով յոդնած և սպառած էին.

— Ի՞նչ կ'ըսես, ընկե՛ր, կը հծեէր քովէս Արշակ, ինծի ընկերացող անասնաբոյժը, այլեւս կը թուի թէ, կեանքը չարժեր ապրիլ, իմաստ չունի . . .

— Ո՛չ, քիչ մըն ալ համբերէ, կ'ըսէի խորունկ թախիծով մը, վրէմը մեղի թուիչքներ պէտք է տայ. Գազանին մահը պիտի տեսնենք:

Այսպէս էր ահա ընդհանրապէս սկատերազմի դաշտին վրայ մեր ցեղակից երիտասարդներու առօրեայ խօսակցութիւնը, որոնք շփոթած իրենց վշտի մեծութեան առջեւ, զրեթէ ամէն օր այսպէս մահը կ'որոճային, կը չօշափէին:

Չորակին մէջ, դուրս ցցուած պարանոց մը հազիւ դարձած էինք, երբ ժայռի մը քով նստած թուրք զինուոր մը տեսանք որ կը ճպնէր չորցած եղեւնախայտերու դէզ մը բոնկցնել: Զարմացանք, մըրկող տօթին անբացարելի էր զինուորին այս տեսակ տարապարհակ աշխատութիւնը: Այրած արեթի կատը մը դրած չոր տերեւներու մէջ, անդադար կը փչէր, կը փչէ՛ր և մխացող դէղին առջեւ պարանոցին երակները ուռած, երեսները կարմրած, քրանաթոր, մորթը կը փալփլէր դաման վայրազութիւնով մը:

— Մօ՛տ եկուր, զինուոր՝ ըստ անասնաբոյժը, ձին առաջ քշելով:

Զի՞ն առաջ ու այս կորեւի իւսու:

— Այս տաքին ինչո՞ւ կրակ կը վառես. ի՞նչ պէտք ունիս:

Զինուորը լսեց, յետոյ կմկմաց, անկապակից խօսքեր ըստ, թոթովնց, բայց սպային պնդումին վրայ, վերջապէս խոստովանեցաւ.

— Անօթի էի . . .

— Յետո՞յ . . .

— Յետոյ, ճամբան պատահմամբ եղեւինի մը վրայ շնուած բոյնի մը մէջ զայրի տատրակի երկու ձագեր գտայ, իսկոյն վերցուցի և հիմա կրակ կը պատրաստեմ զանոնք տապկելու համար:

Ապչած իրարու երես նայեցանք:

— Թռչունները ո՞ւր են, ըսի հետաքրքիր, ես ալ իմ կարգիս ձիս առաջ մղելով:

Քարի կողին ձգուած և աղուամազերով հազիւ ծածկուած երկու ձագուկ ցուցուց, որոնց կտուցները դեռ դեղին էին, լերկ մարմինները կը թափտային ալիողորմ ճուոցով մը:

Ենկերս ջղայնոտութեան նշաններ կը ցուցնէր, և աչքերուն մէջ զայրոյթը բոցավառած, բարկութեամբ զինուորին վրայ կը յառաջանար խարազանով.

— Ասիկա այն գաղաններուն սերունդէն է, կը սրուար կրակ կտրած, որ եթէ անմեղի մը արիւնի համը չառնէ, անօթի պիտի սատկի:

Ենդմիջեցի, ըսի թէ նոյնքան լկոի և գաղան էր այն կառավարութիւնը, որ նոյնիսկ իր սեփական ցեղը և զաւակները ահաւոր կրակի մը տակ անսպառ վատնելէ վերջ, թիկունքի զիծերուն վրայ զանոնք անօթի կը մեռցնէր. յետոյ զինուորին մօտենալով մի քանի գահեկան դրի ձեռքը հաց գնելու համար, և զայրի տատրակի ծուացող ձագուկները մէկ մէկ հատ մեր ափերուն մէջ սեղմած, ընկերիս հետ ուղղուեցանք դէսի թիկունքի բանակատեղը:

Ճնշող լուութեան մը մէջ կը յառաջանայինք, մահէ ճողովրած այս սրբուկ ձագուկներու ճակատազրի համանմանութիւնը կը խանխանդակատեցնէր. մեզ և մեր սրտերը կը լեցնէր անանուն յուզումներով:

— Վա՛խ, ձազուկո, ինքնովին կը խօսէր ընկերո, իր սիրով և գուրզուրանքով գողացող շրթունքները հպանցելով թոչունին աղուամազոտ թիւերաւն, քեզ խլեցին բոյնէդ, այրելու համար, երբ դեռ ոչինչ սորված էիր օդերու աղատութենէն և կհանքի բերկրանքէն:

Քիչ մը մտածեց, զլուխը շարժեց, յետոյ նորէն իր գուրզուրուտ շրթները բացուեցան հայրական խանդակատանքով մը:

— Թուչունս, դուն իմ ցեղիս անմեղ ձագուկներուն կը նմանիս; որոնք երէկ միախումբ տարուեցան մահուան հովիտներուն մէջ բայց մարդկութեան և Աստուծոյ աչքերը կուրցան. տեսնող և ազատող մէկը չեղաւ:

Իրարու խօսքը վաւերացնող լուռ և իմաստալից նայուածքով մը իրարու երես նայեցանք:

Երբ թիկունքի մեր բանակատեղը հասանք, չոր խոտի գէցերու վրայէն քակուած և երկաթ թելերէ ափյափոյ պատրաստուած վանդակի մը մէջ դրինք ձագուկները, փաղաքուշ խօսքեր ըսինք առողջապահական գործունեայ զինուորի մը, որ մեր հրամանին տակ կը գործէր, դրամ տուինք, խոստումներ ըրինք որ մեր բացակայութեան կատարեալ գուրզուրանքով վերաբերի տատրակի որբուկ ձագերուն հետ:

Երբ գործերնին լրացուցած, զիշերը նոր գոզաւորուող լուսնի ազօտ շողերուն տակ նորէն կը վերադառնայինք խրամները, Արշակ ոգեւորուած և մանկական երազկոտութիւնով մը միշտ կը կրկնէ:

— Ի՞նկե՞ր, գուրզուրանքով պահենք այս թուչունները, անոնք մէկ պատկերն են մեր բոյներէ խլուած հալածական ցեղին տառապանքներուն . . . Դժբաղդութեան մէջ ես աւելորդապաշտ մը, ճակատագրի երկիւղած հաւատացող մը դարձայ . . .

— Փիլիսոփայութիւն չուզեր. ձիդ առաջ քշէ, օդը կը ցրտէ:

— Ո՞չ, կը կրկնէր թախծազին, ո՞չ, մտի՛կ ըրէ, այս թուչնիկները մենք պիտի պահենք կատարեալ սէրով և գուրզուրանքով. անոնք խորհրդանիշը պիտի ըլլան մեր ցեղին ճակատագրին:

— Ի՞նչպէս:

— Ի՞նչպէ՞ս . . . Եթէ կարենանք ողջ առողջ մեծցնել զանոնք և օր մը իրենց շնորհել օդերու ազատութիւնը, այդ պիտի նշանակէ թէ մեր ցեղն ալ հակառակ իր հալածանքին և տարագրութեան, օր մը թուչք պիտի առնէ, պիտի թոփի, պիտի երթայ և պիտի համբուրէ ազատ հորիզոններու արեւը և արշալոյսը:

Այս մանկական, զգայնոտ և ճակատագրապաշտ խօսքերուն ի լուր, երկուքնիս ալ ինդացինք և հրճուեցանք, բայց խօսքերը այնքան անկեղծ և անզօրութեան մէջ այնքան սրտառուչ էին որ՝ իսկոյն հրաշատես երազկոտութեան մը մէջ ինկանք և ինքնաբերաբար միասին մրմնջեցինք.

«Պահե՞նք և մեծցնե՞նք թուչունները . . . Երբ չմեռած ա-

նոնք օր մը թոփչք առնեն ու երթան ազատ օդերու մէջ, անոնք պիտի խորհրդանշեն մեր չարչարուած ցեղին արշալոյսը և յարութիւնը:»

Ցանցառ աստղեր կը դիտէին մեղ հեռուներէն, կը պլազին, կը փթթէին և կը ծիծաղէին զիշերուան մէջ կեանքի և երազի ճամբան կորսնցուցած այս երկու խոշոր տղաքներու մանկական խեղճ աւելորդապաշտութիւն վրայ:

* * *

Այն օրէն սկսեալ շատ բաներ փոխուեցան պատերազմի դաշտին վրայ, բացի մեր սրտերէն՝ որ մնացին միշտ տառապող, աւելի թախծազին և ընկճուած. վիշտը թափանցեց մեր ամբողջ էութեան մէջ, ճիւղաւորուեցաւ, խորացաւ ցեղին հասցուած և հետղիետէ ծաւալող աղէտին ահաւոր բօթերովը:

Կուտիլ, մեռնիլ ազգի մը համար, որ այդ սրահուն իսկ արիւնարբու և համայնակուլ դահիճը կը դառնար քու ամբողջ ցեղիդ և ծնողքներուդ. նահատակուիլ թուրք հայրենիքի սիրոյն, երբ անիկա կը նահատակէր քու ամբողջ իտէալներդ, սէրդ, երազդ, կեանքիդ և շունչիդ նպատակը . . . :

Սեպտեմբերի ամպամած օր մըն էր, երբ Արշակ ձիով վրանիս առջեւ եկաւ ինձմէ հրամեշտ առնելու համար: Հեռուները կը զրկէին զինքը, կրակի զիծէն շատ հեռու, քոսոտ հիւանդ կենդանիներու հիւանդանոցի մը մէջ աշխատելու համար:

— Շատ գործ կայ, շատ գործ կայ, կը կրկնէր իր պաշտօնին կատարեալ զիտակցութիւնը ունեցող մարդու մը խիստ լրջութիւնովը . . .

— Խեղճ տղա՛ս, զոնէ աշխատէ կենդանիներու հետ այսչափ լուրջ և խոժոռ չըլլալ և չիրդովել իրենց հոգեվարքը . . . որովհետեւ անսուալութենէ մեռնող թուրքին և զրաստին համար մահը ձենէ շատ աւելի զօրաւոր, միեւնոյն ատեն ժպատալից և բարերար է:

Արշակին հետ համբուրուեցանք ու մեր բաժանումը յուզումով լեցուն եղաւ:

Խրամի մէջ մտերիմ ընկերներ, միշտ կը համբուրուէինք, եթէ նոյնիսկ բաժանումը օրուան մը համար ըլլար . . . որովհետեւ մահը

մէկ պահէն միւսը կրնար մեզ անակնկալի բերել և յաւիտենապէս սառեցնել մեր շրթները:

Արշակ բաժանումի պահուն միշտ կը կրկնէր.

— Ծնկե՛ր, հոգածու եղիք միակ մնացած որբ տատրակներուն համար. յիշէ՛ մեր ուխտը և աշխատէ թուցնել զանոնք:

Իրաւ, երկու ամիս անցած էր այն օրէն ի վեր, որ մենք պատահմամբ փրկած էինք տատրակի անպաշտապան ձագուկները կարծ ժամանակուան մէջ, անոնք մեծցած, զեղեցկացած էին և թեւ կը բաղխէին իրենց թելէ վանդակին մէջ:

Մեր հրճուանքը մեծ և սրտառուչ եղած էր, երբ օր մը խոչոր հանդիսութիւնով և սրտատրով՝ ձագերը օդին մէջ ազատ արճակած ատեննիս, արուն զօրաւոր թոփչքով մը սլացած՝ զացած էր մօտակայ եղեւիններու թաւուտքի մը մէջ, մեր սրտերը լիցնելով մանկական աննախընթաց բերկրանքով մը:

— Պիտի թոփինք, պիտի թոփինք . . . մեզի համար մահ չկայ. չարը այլեւս յաղթուած է: Պիտի թոփինք, կը պոռար Արշակ ոգեւորուած, յոյսի և ուրախութեան անզսպելի աղաղակով մը:

Բայց այս հրճուանքը շատ չտեւեց. սեւ ստուեր մը եկաւ մոայլել թոփչք առած մանուկ երազին զեղեցկութիւնը. Զագերէն մէկը — որ իբր զոյզին էզը կը դաւանէինք, զինուորին ձեռքէն խլած ժամանակնիս իսկ ոտքին մէկը կոտրած, յետոյ կիսով չափ առողջացած՝ բայց միշտ ճղճիմ մնացած էր. մի քանի անգօր թեւաբախումներէ ետք՝ անկարող զտնուեցաւ աւելի յառաջանալ և զետին տապալեցաւ, անշունչ իրի մը պէս:

Քովը զացինք, շոյեցինք, ափերնուս վրայ թառել տուած, օրօրեցինք, ցուցուցինք իրեն աղատ երկիրներու զեղեցկութիւնը և փրկութեան ճանապարհը. Զանացինք նոր թոփչքներ փորձել տալ իրեն . . . կարելի չեղաւ, տատրակի վայրի ձագը կը դողար մեր ձեռքին մէջ, կը սարսափէր ազատ հորիզոններու անսլարիակ անհունութենէն, և թերեւս հսկայ եղեւիններէն, ուր պահ մը առաջ երջանիկ, բայց հիմա տարաբաղդ արուն կը սպասէր տիսուր և յուսաբեկ: Եյեղճ արուին համար ի՞նչ փոյթ հորիզոններու և թոփչքին ազատութիւնը, եթէ անիկա իր աչքը բացած օրէն իսկ տածած սիրոյ և զուրգուրանքի բացասումը պիտի ըլլար:

Ոչ մէկ բաղձանք զօրեց տատամսոտ թաշունին նոր թոփչք մը ընել տալու համար: Այդ պահուն կարծես մեր սրտերուն մէջէն զեղեցիկ երազ մը կ'անշքանար, կ'անհետանար Քէնցանք այս ճղճիմ

արարածին դէմ, որ տառապանքի հովիտին մէջ, անգիտակցօրէն մեզ կը դժբաղդացնէր և մեզի կը զլանար վայրկեանի մը իտէական երջանկութիւնը, եթէ անիկա օդային խեղճ պատրանք մը իսկ ըլլար Յուսաբեկ՝ տարինք ազատ ձգեցինք թոչունը վանդակին քով, նոյնիսկ այլեւս զինքը վերստին բանտարկելու սիրտ չունեցանք:

Ազատութեան յարզը չպիտցողի մը չէր արժեր բանտին յուլութիւնը և հանգիտը ճաշակել տալ:

Այս տխուր միջալէպէն մի քանի օր վերջ, Արշակ, երբ կը մեկնէր, վրաններու շրջակայքը պտիկ պտիկ քայլերով ոստոստով թոչունին ի տես նորէն յոյսը իր մէջ յարութիւն առած՝ կը թախանձէր.

— Ընկե՞ր, հոգ տար տատրակին, աշխատէ՛ թոցնել . . .

Այն օրէն սկսեալ զարմանալի երեւոյթի մը ականատես եղանք: Ինք իր զլխուն ձգուած ձագուկը դիւրստաց վարժութիւնով մը ամէն օր մի քանի անզամ կ'երթար կը թափառէր շրջակայքը, արեւուն տակ կը թեւաբախէր, կտուցովը արագ արագ կը քթթէր փետուրները, յետոյ վանդակը կը վերադառնար ընտանի հաւու մը պէտ

Հետզհետէ ես սկսայ սիրել զինքը, մանաւանդ թիկունքի սպայ ընկերները կը գուրզուրային իր վրայ և միշտ կը փաղաքչէին զինքը: Կանդաղաստանքի չեմ զիստեր ինչպիսի վայրկեանի մը մէջ ամէնքնիս մէկէն անունը «Մինկօ» դրած էինք, և երբ ամէն անզամ սուր կոինչով մը ետեւէ ետեւ իր անգունով կը կանչէինք, «Մինկօ»ն զլուխ կը բարձրացնէր, կ'երեւէր քարի մը կամ թուփի մը տակէն, և մանտրտիկ քայլերով կուզար դէպի իր սովորական ապաստանը:

Սեպտեմբերի վերջերը, զիշեր մը, յանկարծ մեկնումի հրաման առինք դէպի հարաւի ճակատը՝ Սէտտիւլ Պահրու կ'երեւի յարձակում մը կը պատրաստուէր մեր կողմէն կամ միւս կողմէն, որ թուրքերը կը ստիպէր իրենց զլխաւոր ուժերը կեղրոնացնել նոյն ճակատին ձախակողմը:

Երբ թիկունքի վրանները կը քակէինք, վերջին խեղճ յուսադրութիւնով մը Մինկօն օդին մէջ արձակելով նոր թոփչք մը փորձել տուիր Մեծ տարբերութիւն չունեցաւ, արդիւնքը նոյնն էր. քիչ վերջ առաջուան պէս թաւալզլոր զետին ինկաւ:

Զայրոյթէս վանդակը խորտակեցի և ցուրտ, հողմակոծ զիշեր մը ճամբայ ինկանք դէպի հարաւի տարտարոսը:

Ամբողջ ցերեկ մը ձորի մը կողին հանգչելէ վերջ, հետեւեալ զիշերն իսկ սպրտեցանք կրակի զիծին առաջին խրամներու մէջ և զրաւեցինք մեր դիրքերը:

Անոնք որ մեր նոր զրաւած դիրքերը կը ձգէին թիկունքի գիծերը երթալ հանդչելու համար, չափազանց ուրախ էին, վերապրումի անբացատրելի ուրախութիւնովը։ Զգացուած կը համբուրուէին իրենց նախապէս ծանօթ սպաներու հետ, որ վայրկեան մը վերջ պիտի ստանային՝ կրակին՝ թերեւս մահուան օծութիւնը։

Անզլիացիները սպասուած յարձակումը չըրին, բայց մահը միշտ ահաւոր եղաւ, միշտ անողոք։ Օրական հարիւրներով կը փճանային սումբերու տակ։ Արիւնը կը հոսէր շոայլօրէն և անխնայ։ Ալազայ պատմազիրը երբեք չի կրնար մեղադրել թուրքը թէ կծծի եղաւ իր արիւնը թափելու մէջ . . . ըլլայ նոյնիսկ անիկա վայրապար և աննպատակ։ Տարտանէլի մէջ թուրքը չափով մը իր ըմպած հայու արիւնը փախեց հոս . . .

Դիակներ, կարաւառած, հաշմուած մարմիններ, բզքտուած վիրաւորներ կը կրէին կը բերէին ամէն ժամ, դէպի «Վիրաւորներու բոյնը» որ բժիշկներու խորշին քով շինուած խոտածածկ տխեղծ հիւղ մըն էր։

Մինկօն վարժուած խրամի կեանքին, առաւօտուն խակ կը ձգէր ձորակի կողին փորուած մեր պղտիկ խորշը մանրիկ քայլափոխերով, նազանքով յառաջ կ'երթար և կ'անհետանար ձորակի քարքարուտքին մէջ։

Շատ անզամ կը տեսնէինք զինք, որ դիակի մը կամ վիրաւորի մը քովը անյուղում և ստոյիկ սառնութիւնով մը կը դիտէր արիւնը որ կը բղխէր, յորդ յորդ կը հոսէր ջախջախուած զլուխներէ և փալաղուած սրունքներէ։ Բոյնէն խլուած, որբացած այս թոչունը այնպէս կը կարծեմ որ զերազոյն բերկրութեան մը մէջ կը դիտէր դահիճներու արիւնատօնը, արիւնը այն ճիւաղներուն՝ որ երէկ խակ դանակը կոկորդին գրած՝ իրեն պէս անմեղներուն արիւնովը սնած էին։

Չորը շատ խոնաւ էր ապառաժներու ճեղքած երակներ, ջուրի վճիռ կաթիլներ կը մզէին, կը կաթկթէին մեր խորշին մէջ։ Մինկօ չեր սիրեր մեր անկիւնը, հազիւ լոյսը ցաթած՝ կ'իջնար ձորակին մէջ, պղտիկ թուիչներ ալ կը կատարէր և ընդհանրապէս կ'երթար կը հանդչէր ձորին հանդիպակաց եղերքի ժայռերուն վրայ, ուր արեւին ճառագայթներուն տակ ժամերով կը քթթէր իր փետուրները և կայթազին կը թովար։

Այդ ապառաժները, թշնամիի հրացաններու և զնդացիրի շարունակական կրակի փոթորիկին ենթակայ մեր դիրքերուն անպա-

տըսպար և ամենէն վտանգաւ որ մասը կը կազմէին Մինկօ հանդարտիկ սառնութիւնով մը հոն կ'երթար շարունակ, արեւի ջերմիկ զգուանքը ըմբոշնելու համար:

Շատ անգամ կը յուզուէինք, մեր դիրքերը յայտնի չընելու և թշնամիէն չհասկցուելու պայմանաւ, պղտիկ, շատ պղտիկ քարեր կը նետէինք, ձեռքի ոտքի շարժումներ կը կատարէինք Մինկօն սթափեցնելու, տեղէն շարժելու համար: Բայց շատ հեղ մեր սըրտմաշուքը և ճիզերը անհետեւանք կը մնային:

Հերոս թոշնիկը միշտ կը կենար հոն, գնդակներու տարափին տակ, և երբ մօտէն անցնող անոնց վայրի ճուղը կը լսէր, վիզը ներս կը քաշէր, կը կարծեցնէր, յետոյ գլուխը վար կ'առնէր, կը պղտիկնա՞ր, կը պղտիկնա՞ր, մոխրագոյն աննշան գնդակի մը պէս, այսպէսով ձգելու համար մահը որ անցնի երթայ:

Մինկօն չէր մեռներ, որովհետեւ կ'արհամարհէր մահը, և մահը կը խնայէր արեւով և ճառագայթով թովուացող կեանքի և շունչի այս աննշան պատառիկը: Հետզհետէ մեր սէրը աւելի սաստկացաւ, և օր մըն ալ իմ ներքին ուրախութիւնս չափ չուներ: Մինկօն վարժուած ազատ կեանքի երկար թոփչքներ կը կատարէր, կը թռէր, կ'երթար դէպի ծովիղերք, կ'անհետանար մեր աչքերէն, յետոյ կանոնաւորապէս մեր խորշը կը վերադառնար:

Երազը մարմին առած, մեր բաղձանքը իրականացած էր:

Եսոչոր երանութիւն մը աւեաելու պէս, զրեցի Արշակին թէ Մինկօն կը թռէր ազատ և անվարան, թէ Զարը յաղթուած էր . . . բայց նաեւ կ'աւելցնէի, թէ անիկա միշտ պատնէշին վրայ կը մնար և չէր ուզեր իր խաղաղիկ անտառներուն վերադառնար:

Իանդավառ և ողեւորուած պատասխանեց ինծի: այնպիսի անկեղծ և որտազին յուզումով մը, որ մարդու քիշ անգամ տրուած է զզալ:

Ա՛լ անկէ վիրջ զուրդուրացի պղտիկ տատրակիս թանկազին կեանքին վրայ, սիրտս կը հատնէր երբ ամէն անգամ զինքը կը տեսնայի, ասպառամին ցցուածքին վրայ թառած, ճուացող գնդակներու տակ ստոյիկ անտարբերութիւնով մը՝ ըմպեշով արեւի ճառապայթներուն ջերմիկ հեշտութիւնը:

Նոյեմբերի պայծառ և հովուտ առաւօտ մըն էր, խրամի մասնակի յարձակումի մը սլատառառաւ ամբողջ զիշերը զբաղած էինք վիրաւորներու նախնական դարմանումովը: Առտուան դէմ հաղիւ թէ քնացած էի, երբ առողջապահական զինուորներս ներս մտան, հեւասպառ և որտասորով . . .

— Տօքթօ՛ր պէյ, Մինկօն զարկին . . . մեռա՛ւ . . . :

Խենդի պէս դուրս վազեցիւ Դնդացիրի անընդհատ կրակ մը կ'աւլէր հանդիպակաց ապառաժները և իմ հերոս տատրակիս փետուրները հովերու խաղալիք՝ խօլ սլացքով մը օդերու մէջ կը թռչտէին, պարեր կը դարձնէին, կ'ելլային, կ'իջնային, յետոյ արշաւասոյր կ'ուղղուէին դէպի թիկունքի ապառաժները:

Այն պահուն զգացի այն խորունկ ցաւերէն մին, որ մարդ հազիւ թէ կրնայ զգալ իր լաւագոյն սիրելիներէն մէկուն մահովը:

Ճաւագին տխրութեան մը մէջ արձանացած՝ կը դիտէի փետուրները որ կը հեռանային, կ'երթային արագ արագ: Տատրակս յաւիտենապէս լռած էր, ա՛լ չպիտի լսէի իր միօրինակ երգը որ արեւոտ ապառաժի մը վրայ թառած՝ գնդակներու տակ կը մնչէր միշտ տարօրինակ հանդարտութիւնով մը:

Քիչ վարը, ոտքերուս տակ «Լիրաւորներու բոյնին» մէջ կը հոնդային արիւնի լիճերու մէջ անփոխադրելի համարուած մահամերձ զինուորները Անոնց ի տես ինչո՞ւ պղտիկ կսկիծ մը չէր դառնացեր հոգիս և ինչո՞ւ ամբողջ էութիւնս կը սարսուար պատնէշին վրայ ինկած հերոս թռչնակիս եղերական մահովը:

Հովերը կը փչէին, փետուրները կ'ելլային, պարեր կը դարձնէին, յետոյ կը տարածուէին, կ'երթային, կ'անհետանային արիւնի հովիտներու մէջ:

ՏՕՔԹ. Մ. ՍԱԼԲԻ



ԿԸ ՄԵՌՆԻ ՅՈՒՆ...

Ո՞վ քաղցր քոյր, ծոցն աւազին, աւաղ, ո՞չ մեկ յուս կ'ապէ . . .
Նոյնիսկ հոգւոյդ հրետակային լոյս կուսուրիւնը անմահ,
Մի՛ սպառեր մաքուր գանձերն ու արիւնըդ բոցավառ,
Մանկանացու Անցորդներու յուշերգաննին մեջ անգուք . . .
Ասուածառունչ ահշալոյսին տակ ճակտիդ
Մեկուսացո՞ւր հետանիք խոր գեղեցկութեսնդ մենաւոր,
Ու լոռութեան սրբազան սէ՛ր ճպոտին տակ դարաձայն
Ճանանչէ՛ միւս, խաւարներուն մեջ ճանանչէ՛ յաւիտեան.
Ուրախութեան, անմահութեան ու փառքի լոյս ճամերգով . . .



ՀԻՆ ՅԻՇԱՏԱԿ ՄՐ ՀԵՌԱԿՈՐ...

Հին յիշատակ մը հեռաւոր գիշերն իմ հեզ կ'արիւնոտէ . . .
Կը բարձրանայ ջինջ ու անմեղ կապոյտին մեջ Ասդը մահուան . . .
Փախչի՛լ . . . Ա՞խ, ո՞ւր: Սուներները կ'ըսեն ինծի. «Կեցի՛ր, կեցի՛ր . . .»
Դիւե՛ր, կ'ուզե՞ս որ ևս մեռնիմ լուրը ու անհուն բաւիչիդ խոր . . .
Սիրտիս ցաւոս տրտունջեն զատ օսարոտի ամեն հոգի
Կարծես մեկնած է մտախոն հեռուներուն մեջ բախծաւոր.
Այս գիշերը շա՛ս սղուոր է ու իմ վիշտն է անմիսիթար,
Ճամբաններուն վրայ այնքան կասկածներ կան որ կը յամեն ի զո՞ւ,
ի զո՞ւ . . .

Ո՞վ մենաւորս, դի՛ր բախանցիկ տժոյն ձեռքերդ քուններուս,
Ու անարցունք, գիտցիր նորեն յարուցանել
Անդարման հի՛ն փայլը դալիոտ եղերական իմ քաղցրութեան
Դո՞ւն որ գիտես հո՛ւսկ խօսքերը. համբուրէ՛ զիս վերջի՛ն անգամ . . .

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻՆ



«Խերքամ դեպի աղբիւրը լոյսին.
Ուղին երկար է, սալարկուած է ուղին կայծարեռվ ...
ցանկուած մուրտի փուչերով ...»

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Ի՞նչ կը խորհեիր աքսորանքիդ մէջ, զիշերները լուսնի, աչքերդ յառած դէպի ուղին ցանկուած մուրտի փուշերով, ո՛վ դուն որուն երգերը անհունութեան պէս անսահման են. աստղերուն զզուանքին պէս քնքոյչ, ներդաշնակ՝ երեկոյեան սիւքին ծովուն կոհակներուն վրայ և անտարին ծառերուն մէջ հանած մրմունջին պէս, դուն՝ որուն երգերը կը հմայեն, կ'ընդլայնեն, կ'ամոքեն ումիանգամայն թունդ կը հանեն հոգիները, այն երգերը որոնք երբեք չպիտի մուցուին, ցորչափ գտնուին աշխարհի վրայ խարուած յոյսեր, չյազեցուած ներշնչումներ, սիրոյ բարախումներ, երիտասարդութիւն մը, զարուն մը, և արցունքներ Ռոկի լարերով տաւիլդ

ոտքերուդ տակ, ի՞նչ կը խորհէիր մռայլ ճակասդ վայրահակ, ուր հանճարին համբոյրները կանխահաս ակօններ էին զծած ի՞նչ կ'որոնէիր, նայուածքդ պարապութեան մէջ տարապայման տրտմութեամբ։ Միրտդ՝ զոր մեծ վիշտ մը կը կրծէր։ չէր թրթուար ամառ գիշերուան հեշտանքներէն։ դուն որ սակայն այնքան կը սիրէիր այն աղուոր գիշերները ուր բնութիւնը լիաբուռն վայելք կը սրսկէ։ կծկուած շրթներդ չէին սարսուար փայփայանքներէն անուշ հովին որ ծոթրինի բոյրեր կը բերէր քեզի։ Մահու չափ տրտում էր հոգիդ, սեւ էին նախազգացումներդ և արիութիւնը չունէիր այլեւս երգելու գեղեցկութիւնը տառապանքին, ու տառապանքին մէջ հրճուանքը փնտուելու։

Յուսահատութիւնդ խորունկ էր այն պահերուն և չէիր ուզեր առնել տաւիզդ ծունկերուդ վրայ ու արհամարհելով բռնակալութիւնները, արհամարհելով մրրկավար հովերը որ քեզ մղած էին հոն, արծիւներու պէս ճախրել դէպի բնագաւառները շոշերով ողողուն, դէպի սարերը սպիտակ, ուր կը ծաղկին «էտըլվայսները Երազին . . .»։

Աքսորականդ վշտաբեկ, չէիր ուզեր, ինչպէս երբեմն, արծաթէ ամպերուն վրայէն, որոնց եզերքը լուսնկային ցոլքերը ժանեակներ կը յօրինէին, ուզեւորիլ դէպի քու քերթողի աշտարակդ փղուկրէ, լուսածածան բլրին վերեւ, որուն ստորոտը կուզար երկրպագել Ովկիանոսը։ Հողիդ մթամած, այդ հմայիչ գիշերներուն մէջ, չէիր ուզեր այլեւս սաւառնիլ դէպի հոն։ չէիր ուզեր անկից մտիկ ընել երգերը սիրենաներուն՝ որոնք հեռաւոր ուղեկորոյս նաւերուն մատաղատի նաւաղները կը կանչեն մահուան զիրկը։ Չէիր ուզեր դուն, իշխանազունը երեւակայութեան, երթալ հոն ուր գիշերուան թագուհին աղամանդէ ասեղնազործութիւններով ծածկուած բազմոցներու վրայ կը սպասէր քեզի, շրջապատուած ծածանուտ պարեզոտներով լուսեղէն ոզիներէ, զրկերնուն մէջ հիրիկներու և եղրեւանիներու խուրձեր, քեզ տալու համար համբոյրներ որոնց հեշտանքը յաւիտենականութիւնը կը պարունակէր։ Հոն՝ տիեզերքը քուկդ կ'ըլլար ամէն հորիզոնները քուկդ կ'ըլլային, ամէն հիացումները, ամէն փթթումները, ամէն վայելքները քուկդ կ'ըլլային։ քուկդ՝ զիշերը և արշալոյսը, երկան մանոշակ երանգներով։ քուկդ՝ լեռները, հովիտներն ու աստղերը, քուկդ՝ ամէն հրաշալիքները։

Երբեմն, այդ մտացածին բնակարանիդ ստորոտը կուզային փշրուիլ ամէն աշխարհային վաղանցուկ բաները ամէն հոգերը կ'անէանային, ամէն ցաւերը կը ցնդէին, ամէն մարդկային խորհուրդները կը ցրուէին, կը հալածուէին թիր ու ցան հոնկէ բղխած

ձաճանչներէն և շողակնէ սանդուղը՝ որ քեզ հոն առաջնորդած էր, առկախ կը մնար փոքր պատշգամէն, ուրկից ոչ մէկ մահացու կարող չէր զայն վար առնել:

Եւ իտէալիդ աշխարհին մէջ կառուցած այն արեւակնային աշտարակդ կը լուսաւորուէր քու հանճարովէ և արուեստն ու բանաստեղծութիւնը հոն քեզ կ'օրօրէին այնպիսի գեղաշխարհային մելանուագներով, որոնց ի լուր կը դալկանային նայեադներն ու անտաղին կաղնեպարիկները, և դուն դադրած մարդ ըլլալէ, այն անպղծելի բարձրութեան մէջ աստուածային կը դառնայիր:

Հիմա՝ տրտում էիր մահու չափ, և տիեզերական սիրոյ բերկրութիւնը, որուն երգիչը եղած էիր, այլեւս արձագանգ չէր գտներ հոգիիդ մէջ ժամերով կը դիտէիր փուշերով ցանկուած ուղին. ուրկից կը սպասէիր աւետիսը փրկութեանդ, բայց ան կ'ուշանար, ու աքսորանքիդ մէջ մինակ ու լուռ մախկ կ'ընէիր տրտիւնը սրտիդ որ նախընտրած նուագդ էր եւ որ հիմա այնքա՞ն յուսավորէալ նուազ մը դարձած էր. երկա՞ր էր ուղին որ կը դիտէիր անհատնում, ու կարօտդ կ'անցնէր կ'երթար դէպի ափը լճակին մենաւոր, կախարդօրէն շինած տնակդ, ուր քեզի կը սպասէին ծխնափետուր աղաւնեակդ արեւուն տակ կծկուած և երկու աշուուր վարդերը քու գարունիդ, ու բազուկներդ կարկառելով, կը դրկէիր պարապութիւնը անբաւ:

Գիշեր մըն ալ եկան տանիլ քիզ. ո՞ւր. դէպի անծանօթը և դուն դզացիր թէ չարազուշակ էր այդ անծանօթը՝ ընկճուեցաւ պողպատէ կորովդ, արխոնդ ըմբոստացաւ, կոկիծը պատեց քեզկեանքը անոյշ էր, գեղեցիկ, և դուն զանձեր ունէիր հոգիիդ մէջ, ստեղծելու, վայելելու, և զզացիր թէ կը տանէին քեզ զիշերուան մէջ փուշերով ցանկուած ուղիէն ոչ թէ դէպի աղբիւրը լոյսին, այլ դէպի սպանդ:

Բոլոր սիրած բաներուդ յուշքերը պարուրեցին քեզ, աչքիդ առջեւ եկաւ հայրենիքդ, որուն արցունքը չպիտի կրնայիր սրբել, չպիտի կրնայիր այլեւս անմահ երգեր ձօնել անոր, չպիտի տեսնէիր անոր վերականգնիլը անոր աւերակներուն մէջէն յաղթապանծ, և անհուն մորմոք մը ունեցար, ու ընկճուած՝ փնտուեցիր կուրծք մը մտերիմ՝ ուր կարենայիր լալ անձկութիւնդ, և շրթներ՝ որոնց վրայ յետին համբոյրդ դրոշմէիր, մինչ բիրտ ձեռքեր կը մղէին քեզ դէպի ուղին, որուն ծայրը քեզ կը սպասէր դարանակալ, արեւ մը կարենալ շիջուցանելու՝ պիղծ հեղնանքով, ուրուականը մահուան, և դահիճներ քեզ նեսեցին անոր գիրկը և զիշերը սարսուաց ու լուսինը մթազնեցաւ ու հծծանքներ լսուեցան հովին ծոցէն ու քարերուն սրտէն:

Հիմա լոյսը աղուոր, ինչպէս գուն կը սիրէիր, քու զիւղակիդ մէջ, մեծ թիթնոնիկի մը պէս, չի լուսաւորեր հողակոյտդ հերոսի, որովհետեւ գուն հողակոյտ իսկ չունեցար, ոչ ալ դադալ մը որուն վրայ շիրաղի վարդեր ցանէինք, ինչպէս Եփրեմիւն ոչ ոք զիտէ թէ ո՞ւր կը հանգին ոսկերստիքդ, երկիւղած ձեռք մը արդեօք ամփոփած է զանոնք հողին մէջ արցունքներու հետ, և կամ բիրտ ոտքերու տակ ճզմուած են. ոչ ոք զիտէ. բայց հոգիդ, պանդուխտի տենչով բոնկած հոգիդ, արեւովլ լի անծանօթ զաւառ մը զացած է, դէպի աղբիւրը լոյսին . . .

Ու լեզէոնները քեզ սիրողներուն, որոնց սրտերը բռնկած են քու աւխւնէդ, քու մտքիդ ճաճանչներէն, որոնց ներմուծած ես կրակդ քերթողի, անոնց երջանիկ կարաւանները երբ հետեւելով երկար ուղիին որ հիմա փուշերու տեղ ցանկուած է վարդի թուփին, որոնց մէջ թոչունները վերազարթնումի խայտանքը կ'երգեն. այն ուղին որուն վրայ արիւնի կայլակներուն տեղ կարմիր կակաչներ կան բուսած և որուն ծայրէն երանութեան աշխարհին ուրուանկարը կ'երեւայ, ուր խոսանոմներով և հրճուանքներով թեւերը բեռցած կը փչէ հովը հայրենի, և չորս կողմէն կը լսուին կարկաչները առուակներաւն, աւետելով մերձաւորութիւնը Եղեմին, ուր երկրապագել կ'երթան անոնք նահատակներու տրիւնով սրբագործուած ազատ հողին. այն լեզէոնները վերապրոցներուն, որոնց հիացումի ժամեր պարզեւած ես դուն և նրակներուն մէջ ծորած լոյսը արուեստիդ, անոնք ամենքը պիտի վնատուն քեզ ճամբուն երկայնքը, ծառերուն շուքին տակ, դողդղացող ստուերներուն մէջ, չկարենալով հաւատաւալ թէ դուն՝ այդ ցնծութեան պահուն կրնաս իրենց հետ ըլլալ, չկարենալով հաւատաւալ թէ կարելի եղած է գտնուիլ աշխարհի վրայ այնքան վայրագ բարբարոսութիւն մը՝ կարող ոչնչացնելու կորովի էութիւնդ ճաճանչաւէտ, քու երխուասարդութիւնդ կենսունակ:

Եւ Մայր Հայրենիքը, յողնած ցաւերէն և երկար կարօտէն, երբ թիւերը կարկառէ դէպի վերագուած զաւակները, դէպի ուխտաւորները խուռներամ, որ կ'երթան զինքը համբուրել, իր տարապայման վշտերուն յիշատակը վայիայանքներով ջնջել, երբ Ան ժպտի իրեն դիմով եւանդագին խումբերուն խայտանքին, պաշտումի և հաւատարմութեան ուխտերուն, թախծութեան ամազ մը սակայն պիտի վարագուրէ ճակառը, որովհետեւ դուն անոնց մէջ չպիտի ըլլաս իր դարերով մթին մնացած, ստուերներով պաշարուած զրկին մէջ թափելու համար հրահսան ուղիսերը բանաստեղծութեանդ, լոյսէ աղբիւրը հանճարիդ:



Ա Յ Ո Ւ Թ Ե Տ Ե Կ

Այսուհետեւ, պատրանքեն վերջ երազներուս լուսածիծաղ,
Պիտ՝ ունենայ հոգիս ժխուր՝ համր իրերու երգը միայն.
Քնարիս վրայ, ուր բրբռաց երբեմբն սերդի կուսական
Պիտ՝ շինչեն հին օրերու սիրոյ անուս երգերն, աւաղ . . . :
Ինչ երազներ եւ ինչ իղձեր խորտակեցի հոգիս խորն,
Որուն եղար ատենօք դուն բնարն միսրին եւ հեծկլտուն,
Ո՞հ, ինձ համար երբ դեռ երազ, դեռ երգ մըն եփր բրբռուն,
— Ցայզարիբեռ մը լուսեղին, լնակին վրայ հոգւոյս անդո՞ր . . .
Ան ատեն ևս կ'ուրուագրէի — զերք տեսլապատ նուրմ մ'անանուն,
Մտիս մեջ ձոյլքը իրանիդ ձիւնասպիտակ եւ գեղեցիկ,
Ու կ'երգէի սերդ օրն ի բուն մանուկի մը պէս հիացիկ,
Ծաղիկներուն, զեփիւռներուն եւ իրիկունն ալ աստղերուն . . .
Այսուհետեւ, պատրանքեն վերջ երազներուս լուսածիծաղ,
Պիտ՝ ուզենայ հոգիս ժխուր՝ համր իրերու երգը միայն.
Քնարիս վրայ, ուր բրբռաց երբեմբն սերդի կուսական
Պիտ՝ շինչեն հին օրերու սիրոյ անուս երգերն, աւաղ . . . :

Վ. ԳԵՂՐԳԵՍԻ





ՏԵՐՆ ԱԼ ՏԱՐԱՊԵՑԱԿ

Իր միաքը դրասկան և վերացական կեանքի շաղկապում մը
եղած էր Նիւթը՝ խտէալին մէջ լուծած, եսին հետ այդ երկու հա-
կոտնեաները հաշտեցուցած՝ անոնց ներդաշնակ կշռոյթին մէջ կ'ապ-
րէր վահէ։ Շուկայի հեւքոտ կեանքը, իր սրտի աղնիւ զգացումները
չբացնելէ. զատ՝ զօրաւոր ջրդեղումով ամրացուցած էին Արծընին
քով կիրքը, դրամին քով անզուսպ զգացումի խոյանքը ապրեցու-
ցած էր մտերմիկ կեանքով։ Բնաւ իրարու հետ չէր շփոթած և ոչ
ալ մէկը միւսին զոհած, երկուքն ալ իր մտասեւեսումը ըրած՝
համոզուած էր թէ ասոնց համագործակցութեամբ կեանքը աւելի՛ կը
քաղցրանայ, զաղափարակոն թոփչքները աւելի՛ զօրաւոր թափով
մը կը թեւածեն նուիրումի հեռաւոր հորիզոններու վրայ կեանքի՝
անխառն հաճոյքներու միակ զաղտնիքը այդ զուգորդութեան թանձր
քովին տակ պարածածկուած կը մնար։ Սննկուն կամքեր միայն
կրցած են զայն զտնել, շաղկապել իրենց փառքին հետ

Առառօտէն մինչեւ երեկոյ ձանձրացուցիչ սպասումները իր
մէջ մեղկութեան շիճուկը չէին կրցած ներմածել և ոչ ալ եսին
անտեղի զսուզութիւնները չնչող զրամին փաղաքչիչ տեսքը զինք
կը լիացուցած էին դրամարկղին անկիւնն ի վեր Տարօրինակ ներ-
դաշնակութեամբ մը, զաղափարի ընդնլուզեալ ծաղկեփունջ մը զե-
տեղած էր անոնց վրայ, հմայիչ այլապահութիւններով պՃնազարդած
էր անոնց վէս ճակատները։ Զանձրութեան վոշին տեղ մտքի հմա-

յիշ թոփքներու հանգրուան մը ըրած էր իր խանութը Նիւթը խոչալով զեղեցկացած, խոչալը նիւթով զօրացած էր իր մէջ։

Շուկայէն տուն տանող ճամբուն վրայ հանդիպող միակ և ամենօրեայ հիւրը եղած էր իր ընկերներու հաւաքատեղին, ուր կեանքը իր զերազոյն թափին մէջ կը թեւածէր։ Հոն, այդ ջերմիկ մթնոլորտին մէջ էր որ՝ սրտազեղումի վայրկեաններ կ'ապրէր և կ'ապրեցնէր։ Մտքին թելերը նիւթի գծուծ հաշիւները թօթափելով կը ճախրէին լուսածամուկ ճածանչներու ընդմէջէն։ Այդ համեստ հաւաքատեղին տանը և խանութին սիրոյ և զորովի միացած գիծն էր եղած իրեն համար։ Հոն՝ առօրեայ պարտասումներէ թեթեւցած, միտքը իր հանգստի հանգրուանը զտած, սիրտը նորանոր անկիւններ պրապտելու համար զօրացած կը զտնէր։ Ընկերական մողիչ խօսակցութիւններու մէջ թաղուած՝ կ'ապրէր եղական ժամեր որոնք կեանքի գեղեցիկ արշալոյսներու նախադուռն էին կը զինովեար օրուայ վրական վարպետներու անմահական նեկտարով, անոնց մըտքերուն ներմաւծուիլը իր երակներուն մէջ՝ վազող հոսանուտի մը պէս կ'զգար։

Եւ այդ խելայեղ անուշութեամբ շաղուած, կ'երթար տուն, ուր իրեն կը սպասէին սիրակաթ մայր մը, սիրով թրծուն կին մը, ծիծլուն մանկիկ մը, որ օրօրոցին մէջ հրեշտակներէն իրենց ժակտներու փնջիկներ կը մատուցանէր։ Կ'երթար տուն արեւով զինով, իր յորդահոս սիրտը թափելու հայրենական շէմին վրայ, օհախին կրակը վեստ ան քուրային նման անշէջ պահելու համար։

Մայրիկը դրան շէմին վրայ, անուշիկ նայուածքը չորս կողմը, իրեն կը սպասէր, կինը իր վրայ կը մտածէր, օրօրոցին մէջ ննջող մանուկին ոսկի երազներու շղթայումը ինքն էր։ Եւ տուն կուգար ողջազուրում մը մայրիկին, ժակտ մը կնոջը, անուշ համբոյր մը օրօրոցին վրայ դրոշմելով։

Տանը կեանքը ծաղկաստանի մը անուշիկ մթնոլորտը կը բուրէր, խաղաղութիւնը սիրոյ հետ զուգորդուած կը սաւառնէր։ Շող ու ժակտ, կեանք ու երջանկութիւն միայն կարելի էր զտնել այն առաստաղին տակ։ Ոչ մէկը իր ապրած կեանքէն դժգոհ էր, առաստաթեան, անդորրութեան և իրար հասկացողութեան երեք հանելուկները լուծուած էին իրենց մթին խորշերով։

Չորսն ալ իրարմավ շաղկապուած, իրարու համար կ'ապրէին Զարաղէտ խօսք մը, շիլ նայուածք մը բնաւ չէր փոխանակուած անմեղուկ կեանքով մը զիրկընդիմաւնուած, կեանք պահանջողները

գոհայնելով կ'ապրէին Դուռ ու դրացի վահէի ապրելակերտով կը հպարտանար, իր ծանօթները, բարեկամները սրտի կատարեալ զոհունակութեամբ կը մատնանշէին զինք։ Սրտի և մտքի քաղցրութեամբ շաղած էր ընտանեկան յարկը, ոչ մէկ արտաքին արգելք կընար զայն խախտել։

Տարիները երջանիկ հոլովոյթով կը շարուէին, իւրաքանչիւրը իր հետը կը տանէր անուշութիւններու, երջանիկ վայրկհաններու անդառնալի յիշատակներ. իսկ եկողները նորանոր, անծանօթ դռներ կը բանային, որուն մէջ թաղուած կ'ապրէին հաւաքական ընտանեկան անքակտելի կեանք մը։

Մայրը անուշ յոյզերու տակ կը ծերանար. կինը արշալոյսներու առջեւ կը հասուննար, իսկ մանկիկը սիրոյ և համբոյցներու տակ իր ապագայ երազները կը դարբնէր արդէն աչքերուն մէջ։

Վահէ ուրախ էր, այս չքնառ ներդաշնակութեան վրայ իր առական և աղնիւ կնիքը տեսնելով։

Շուկայէն ակնածանք, տունէն սէր, երկինքէն առառ, օրնաբեր բարիք կը տեղար իր և ընտանիքին վրայ։

* * *

Կեանքի գեղատեսիկ վաղքը իր լիովինը մէջ չհասունցաւ, ան իր զօրաւոր թաւալումին մէջ յանկարծ՝ անսակնկալ ցնցումով մը կառեցաւ։ Դէմքերու վրայ սարսափի, գտժան ծամածութիւններու հետքեր նշմարուիլ սկսան, որ յեղակարծօրէն առելութեան, նախատալի սպառնալիքներու զուռ բացին Հայր ընկձուած, թուրքը սպառնալի՝ իրարու կը նայէին, մթերուած ուժերը տչքի տակէ կը չափչփէին երկու կողմէն ցեղին զոյտութեան հարցն էր դրուած, միոյն յարութիւնը միւսին դամբանական կնիքը պիտի ըլլար։

Սպասման, տարածոյսի օրերը շուառվ անցան, օր մըն ալ ահաւոր լախտի նման, Հայուն զլխուն իջու վճացման ծրագիրը որ մշակուած էր ոճրատպարտ ուղեղներու մէջ։ Արխնլուայ մազիլներ ահաւոր կոխնչներով երկարեցան դէպի կենսաւէտ ժողովրդեան որախն խորերը, զայն բղբակաւ, անոր հանձարին մահացումովը յազենալու յոյսով։

Ծնցուեցաւ ողջ ժողովուրդը, սարսուսի յեղակարծ հոսանք մը անցաւ բոլորին ալ լուսափայլ ուղեղներէն ներս Ոճիրը որոշուած էր. զայն օր առաջ պէտք էր մարսել, իր արեան մէջ լուծել կեանքի յաղթահարող զօրաւոր կամքը, որուն վրայ ամբողջ դարեր չէին կրցած փառութեան հետք մը անգամ ձգել Բնութեան ներդաշնակութնէն խաղ մը պէտք էր հափափել, իր այլանդակ գոյութեան յարմարեցը-նելու համար:

Եւ հրամանները տրուեցան, այլազան հրէշութիւններ ներածուեցան բոլորին ալ երակներէն ներս Ամենքն ալ զործի զլուխ՝ կատարեալ համոզումով մը սկսան իրականացնել պարտադրուած հրամանները:

Ոչ ոք կրցաւ ազատիլ, բոլորն ալ ճակատադրականօրէն ինկան այս սարսափի բառիցներուն մէջ: Կեանքը ցամքեցաւ, ժայիտը խամրեցաւ, յոյսը մեռաւ վերջնականապէս աչքերու ետին պահուած էր մահուան ցուրտ սարսուոք: Խանութները դոց, շուկաները փակ մնացին Արտերու մէջ հեղահամբոյր եղներու համաշափի հետքը, լեռնէն ի վեր մազլցող չարածճի այծերու, խոհուն ոչխարներու ոստոստիւնը դադրեցաւ: Շինարար կեանքը, որ զուլայ գուլայ կը բարձրանար, սարտլնեցաւ արխւնի ճապալիքներուն մէջ:

Հայաշատ կեղրոններու մէջ զուլումը իր զլուխ գործոցները ունեցաւ: Գազանները նոյնիսկ վայրկեան մը ահաւոր ընկրկումով դիտեցին, ապշահար դիտեցին կատարուած ևղեռնը Գնդակը խնայուած էր, գաւաղանը, անօթութիւնը միայն պիտի կատարէին անձիւումը . . . :

Օր մըն տլ եխւրինի մէջ սկսան անակնկալ ձերբակալումներ, բանաերը լեցուեցան, խաններուն մէջ տեղ չնաց, բաշնիքները մարդերով խճողուեցան Դաման պահապաններ և արխւնկղակ ժանտարմաններ ծեծերու սպառնալիքի տակ հայերը բանտ կը լեցնէին: Տիրող միակ պատիմը հոս՝ ծեծն էր Ամէն տեսակ խոստովանք զաւազոնի հարուածներու տակ կը հեւային: Բոլոր կասկածելի նկատուած երիտասարդները կը քաշէին բիրերու տակ, երկու կոլմէ, հումկու անձեր կը զարնէին, անգաղար կը զարնէին իրենց ումին բոլոր կորովութը լախտի հարուածները կ'իջւցնէին: Հարիւրը կ'անցնէր, երկու հարխւրը կը մօտենար, ենթական ուժաթափի կը վուուէր Փրփրած բերանով, կատալի հայնոյութիւններով թոյլերով ջուր կը լեցնէին, կը սթափիսցնէին և դարձեալ կը շարունակէին: Կոնակը կապոյտ եղած՝ մորթը կը քաշուէր, սրունքներուն ոսկորները ջարդ ու փշուր եղած, ոտքի վրայ կենալու կարողութիւն չէր ունենար: Եւ ծեծը

կը շարունակուէր կատաղի պոռչտուքներու տակ: Դիշերը մինչեւ լոյս, մինչեւ երեկոյ, անդադար զաւագանները կը շարժէին, զադունիքի փշրանք մը փրցնելու, ընկերութեան անդամներուն թիւը, զէնքերուն քանակը, ուր տեղ պահուած ըլլալը հասկնալու համար:

Եւ բոլորին պատասխանը վեհ ու լակոնական էր. «Զե՞նք զիտեր, լուր չունինք»:

Այս բառերը աւելի կը կատղեցնէին, իրենց գանկին թասը կը նետէր: Մատներնին կրծելով կը հրամայէին ծեծը անողոք կերպով շարունակել: Զուրի և արիւնի շաղախի մը մէջ թաթխուած, դարձեալ կը շարունակէին ընդհատուած ծեծը, իրենց կուրծքերէն թուչող վայրի հեւքը միայն կը լսուէր, պառկողը այլեւս բերանը բանալու, տեղէն շարժելու կարողութիւն չուներ: Այդ մահուան նոպաներուն մէջ դարձեալ կը հարցնէին, զադանիքներ կ'ուզէին, որուն ի պատասխան դողդողուն շրթունքով կը հեկեկային. «Զե՞նք զիտեր, լուր չունինք», և կամ մահի ժխտական շարժումով մը միայն կը բաւականանային:

Եւ կիսամեռ կը նետէին ներսը, աղքերուն վրայ, անօթի, ծարաւ մեռնելու: Դիակները զիշերանց, առանց կրօնական արարողութեան կը թաղէին: Քահանայ չէր ընկերանար, մոմի պլազուն լոյսը, քառաթեւ խաչին հովանին իրենց անշնչացած մասոնքներուն վրայ չէր ծածաներ . . . :

Յուսահատած են, զեռ ծեծը ո և է արդիւնք մը չէ տուած, զադանիքը միշտ զալանիք կը մնայ: Ստիպողական կերպով հրահանգներ կ'ուղղուին, բայց զեռ հիւլէի չափ բան մը իսկ չեն կրցած կորդել: Երեկոյ մը, բանտապահին սենեակը կը բերեն կմախացած երիտասարդ մը: Ուկրացած կուրծքի մը վրայ կը հանգչի ազնուականի զլուխ մը, որուն աչքերը երկար տառապանքներէ վերջ դեռ իրենց հմայքը չեն կորսնցուցած: Կը մտնէ ներս, կը զննէ չորս կողմը և արհամարհական կերպով կը կ'ենայ: Խեցունկեկ, յոգնարկել աչքերով հարիւրասկետ մը շողոմիչ խօսքերով կը համոզէ, կը խոստանայ կեանքի, ինչքի ապահովութիւն: Դրամի զէզ մը կը բարձրացնէ առջին, բայց երիտասարդը անդրդուելի կը մնայ իր որոշման մէջ:

Վահէ կրանիմի տոկունութեամբ, բոլոր մանուածապաս հարցումները արհամարհելով, կարուկ, կծու հեղնանքով կը պատասխանէ: «Զե՞մ զիտեր, լուր չունիմ»:

Կը պառկեցնեն հինգերորդ անգամ ըլլալով: Հարուածները իրենց հաշիւը կը կորսնցնեն, ուկորի կոտրտոքներու ձայներ կը

լսուէին խուլ կերպով։ Գանկը ողնասիւնը անխնայ կը հարուածեն, աչքերը իրենց ծիրէն դուրս ինկած են, մահը վճռուած է։ Ընտանիքն հեռու, զաւակներուն երեսը չտեսած պիտի մեռնի, մութ, խոնաւ զնդանին մէջ, ծեծի տակը կը կրէ ահաւոր տառապանքը, զաւազանները կ'իջնեն ու կ'իջնեն, կոնակին միսերը կը քաշուին, արիւնը կը հոսի, գարձեալ ձայն չի հաներ, կը կրէ բոլոր խոշտանզումները ի սէր զազափարին, ի սէր իր լոյսի ընկերներուն։

Յանկարծ վայրենութիւնը իր փրփրավի կատաղոթեանը մէջ կը կասի, վահէն ոտքի կը հանեն, վրան ջուր կը լիցնեն, կը սթափեցնեն։ Հարիւրազիար սինիք ծիծաղը շրթունքին՝ կ'ըսէր։

— Զեր առնը սլիտի երթանք, տաաջնորդէ մեզ։

* * *

Տառապանքը շալկած դիշերային մթութեան մէջ կը թաղուին։ Տունը սուզի, չիւտնի մէջ ընկլմած կը մնայ։ Օրն ու զիշերը կորսընցուցած կը սպասեն լուրի մը, որ չի զար, կ'ուշանայ։ Յոյսերնին կտրած, վայրկեանէ վայրկեան անոր մահուան կը սպասեն, զիտեն որ ոչ ոք ողջ դուրս ելած է անկէ։

Դիշերային անակնկալ դուռին բազխումը զիրենք մութ կասկածներու կ'առաջնորդէ։ Կը բանան դուռը, կը տհանեն վահէն, սիրտ կ'առնեն, ուրախութեան ստուեր մը կ'անցնի վահէն՝ բոլորովին կերպարանափոխ եղած էր, սակայն կ'ասլրէր, անոր շուքը կը բաւէր զիրենք ուրախացնելու։

Քաղաքավարական խօսքերը կը քակուին, կ'երկարին։ Կը հասնին բուն խնդրին։ Ընտանիքին բոլոր անդամները անշնեն կեցուածքով կ'ուրանան, կը ժխտեն։ Հրամանատարը այս անզամ զաւկին զլուխը մօրը ծունկին վրայ կը սղառկեցնէ, և ծեծը կ'սկսի . . . :

Գլուխը ծունկին վրայ դրած, մայրը զաւկին տառապանքը կաթիլ առ կաթիլ կ'ըմալէ։ Արցունքները սիրտը կը հրդեհեն, զաւազանի մէն մի հարուած իր գորովազութ էութեանը մէջ կը կոտրտըւի Եւ լուռ աչքերը դէպի երկինք վերցուցած կը մրմնջէ։ «Իյոնհարեցո՛, Տէ՛ր, զունկն քոյ և լուր ինձ . . .»։ Զաւակը կը տանջուէր, իսկ ինք աղօթքի միսթիք վերացումով զօրացած կ'ըսէր, կը կրկնէր։

«Համբերէ՛, զաւա՛կս, Տէրն ալ տառապեցաւ»։ Դողդոջուն մատները զաւկին խարտիշահեր մազերուն մէջ՝ կ'աղօթէր և կը խրախուսէր։ Տիրոջը մարմնացած տառապանքը իր մտասեւեռումը եղած կը կւկնէր։ «Համբերէ՛, զաւա՛կս, Տէրն ալ տառապեցաւ»։

Գաղանները կատղած՝ սենեակին առարկաները կը տեղացնէին ներոս մօր հերոս զաւկին դլխուն։

Խորունկ տքոց մը միայն սենեակին պղծուած խալալութիւնը կ'օծանէր։ Սրտին անապակ խորչերը ամօթով չէին կարմրած և ոչ ալ աչքերը աղերսով զթութիւն մը հայցած էին։ Մօրը շունչով տոպրուած՝ կը լոէր, հեգնանքով կը մերժէր ո և է առինքնող խոստում։ Ինք մեռած էր, իր դիակը բաւ էր, թող միայն իր օնախին ծուխը մարէր, իսկ իր ընկերները թող ապրէին, թող հայրենի ծմակները չէնցնէին

Լուռ էր, մօրը շունչին խաղաղութեամբը պարածածկուած կը կրէր հարուածները։ Կինը անկիւն մը շնչահեղձ ինկած էր, մայրը տառապալից գալարումով անձայն կը նայէր, իոկ ինք վերջին նոպաններուն մէջ շուարած կը մնար։

«Համբերէ՛, զաւա՛կս, Տէրն ալ տառապեցաւ»ը վերջին անգամ մըն ալ փափուաց մայրը, որ խորունկ հառաչով մը զաւկին սիրտն իւլար բալասանի պէս սահեցաւ։ Շունչը դադրած էր, զաւկին զլուխը մօրը ծունկին վրայ, իսկ մայրը նայուածքը անոր սրտին մէջ խորասուզած՝ կարծես զեռ կը կրկնէր։ «Համբերէ՛, զաւա՛կս, Տէրն ալ տառապեցաւ»։

Կատաղութիւնը իր մոլուցքը դիակներու վրայ կը ճարակեցնէր անօգուտ յոգնութեամբ։ Յաղթուած էին. զաղտնիքը աւելի մութ քողով մը ծածկուած էր։ Օրօրոցին մէջ աղեկտուր ճշացող մանուկէն զատ բոլորն ալ անուշ և զոհունակ խաղաղութեամբ մեկնած էին, տիրոջը տառապանքը իրենց հոգւոյն մէջ քանդակելով . . .

Եւ սենեակին մէջ խունկի բուրումնաւէտ ծուէններու պէս՝ մօրը պատուէրը կը սաւասնէր, ալիք առ ալիք կը տարածուէր սրտէ սիրտ, հորիզոնէ հորիզոն։ «Համբերէ՛, զաւա՛կս, Տէրն ալ տառապեցաւ . . .»։

ՄԽԵՇԱՅԻՆ ՀԽԶԵԱԿ

Վայ աղբատին . . . Դրամով միայն երջանիկ է ամեն աճա:
Փառք ու պատիւ, ուժ եւ հանոյք հարուստները լոկ ունին:
Կը տիկնի յար Ռոկին՝ իրենց քիրին վրայ սիզապանձ,
Որ պիտ դրներ նոյնիսկ Արեւն նակտին վրայ . . . բորոտին . . .

Իրենցն են միօտ համեղ նաւերն, կարմիր գիտին, ընտիր միրգ,
Ու նժոյզներ՝ կառքեր որքեղ՝ աղամանդներ պերճառուք,
Ինչպէս նաեւ պշրուհիներն զեղեցկագոյն, կիսամերկի,
Որոնց կուրծքներն իրենց համար պիտի բացուին ամստուկի . . .

Ի՞նչ փոյք սակայն, այնքան չըւառ քուառութեան մէջ սնոմ,
Աղբատներն ալ ունին իրենց երազն ու երզն՝ իբրեւ զանձ,
Եւ այս քիշն ալ բաւական է ժայտեցքնել մերք զանոնի . . .

Ո՞հ, կը նանշնամ ես ասոնցմէ մէկ բանիներն աննախանձ,
Որոնց Ռոկին, Հարստութիւնն ուրիշ բան չեն, այլ միայն
Անտառին մէջ փրբող ծաղիկն ու երկնի լուսնկան . . .

ԹՐԳՄ. Պ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

JEAN RICHEPIN

De l'Académie Française





ԱՆԱՊԱՏԻՆ ԳԱՐՄԲԵ

ԱՆԱՊԱՏԻ ԱՌՋՆԱԿԱ

Աքսորանքի խուցս գերեզմանոցի մը կը նմանի Տիտուր ու ամայի գերեզմանոց մը՝ երկա՛ր անսապատին մէջ։ Գամկ մը կայ հո՛ն մշտապէս խօսուն, ու անհունօրէն զարհու բելի։ անոր մտերմաւթիւնն ու եղբայրակցութիւնը կ'ապրի։ Դռներս փակուած են տիեզերքին դէմ և կ'ատեմ լոյսը որ աչքս կը կիտուածէ։ Դժնէ ճակատագիր մը զիս ողբերգու բուն ըրաւ Զօրի ահաւո՛ր դահճատան։

Քիչ անգամ կ'անդրադառնամ իմ կեանքիս։ Մոռացում մը իջած է իմ բոլոր անցեալ սէրերուս, իղձերուս և երաղներուս վրայ։ Յիշատակներ՝ երբենն միայն զլուխնին կը բարձրացնեն սրախս խորութենէն, կ'ասեղեն զիս ու կարօտի արցունք մը կը կախեն թարթիչս ի վար։

Մոռացումը ի՞նչ փրկարար է, ի՞նչ սիոփարար է։ Սակայն սիրուը չի՛ մոռնար։



Հոգիս իր ճգնաժամին մէջ՝ ամփոփուած ընկճիլ սկսաւ որէ օր։ կարօտը, սիրելիներու մահը, ցեղին մարտիրոսագրումը ու նահատակներու խորհրդանշան սենեակիս զանկը՝ կը նուածէ զայն Ան իր ամայութեան մէջ կենդանի սիրտ մը կ'ող զի, խօսուն աչքիր՝ որ

ցեղը պատմեն իրեն ու կազդոյր տան յոզնասպառ ու անվերջ ճշգնումին:

Ու կ'որոշեմ գտնել եղնիկ մը, բեկոր մը Զէյթունի սերունդէն:

Բախտը այս անգամ զոնէ ժպտած էր ինծիւ Զէյթունի պատմական սերունդէն՝ մէկ երկու խլեակ միայն կը մնար, այս ահոելի դահճատան մէջ: Բարերար ձեռք մը պաշտպանած էր անոնցմէ մէկը: Իր մահէն վերջ սակայն փողոց կը նետուէր այդ նուիրական խլեակը: Ի՞նչ բարեբախտութիւն, ես իմ դուռս բացի իրեն՝ ու սիրտս բաց էր արդէն՝ դոնէս աւելիո Այսօր սենեակիս մէջն է ան՝ Զէյթունի սարերուն եղնիկը, ի՞մ անապատի աղջնակու Տառն և երկու տարու, գեղուղէշ հասակով, եղնիկի աչքերով, նուրբ ներդաշնակ դիմագծով որբուկ մըն է ան: Հայ լեռներու գեղեցկութիւնը իր կնիքը դրած է անոր վրայ: Ցեղին վեհանձն յատկութիւնները իրենց դրոշմը ունին ու հետքերը՝ անոր բոլոր շարժումներուն մէջ:

Դժնդակ ճակասապիրը շատ կանուխ, իր մանկութեան օրերուն՝ հալածած է ղայն: Ան որբ միացած է իր մատղաշ տարիքին մէջ: Հայրը, օր մը, ճամբու մը մէջ կ'իյնայ ու մայրը ամիսներ յետոյ իր կոկիծէն կը հետեւի անոր: Իր եղբայրն ու քոյրը, զեռ անլեզու՝ իրենց ծնողները փնտոելու կ'ելլեն: Ու առանձին կը մնայ ան, երկինքին տակ միս-մինակ: Որբութեան բոլոր զրկումները դառնօրէն կ'ապրի ան: Իր հասակին հետ ցաւերն ալ կը մեծնան Բարերար ձեռք մը իր խնամքին տակ կ'առնէ զայն: Իր սիրելիներուն հողակոյտերուն մօտ՝ մահուան պէս ախուր կը մեծնայ ան: Իբր թէ չբաւէին իր վիշտերն իրեն, տարարախտ աղջնակ, օր մըն ալ ցեղին ճակասապիրը կուզար հալածել զինքը: Մեծ փոթորիկը Զէյթունի սարերէն մինչեւ Զօրի աւազուտքին կը նետէ զայն: Խորհրդաւոր ոյժ մը կը պաշտպանէր սակայն այդ լերան եղնիկը՝ որ այսօր սենեակիս մէջ՝ կը յասի՛ զանկին, ու կը սեւեռի՛ ինծիւ

Մարի էր այն անունը որ դրած էր անոր մայրը: Լուսիա՛ եղաւ Զօրի անապատին մէջ՝ Սուրիացի կաթոլիկ բարերարին՝ Ճօրծի Սաղգարին մօտ: Անահիտ, զրի անոր անունը ես՝ որպէս ընծայ մը

շեղիս հինաւուրց Մայր չաստուածուհին։ Հազիւ թէ իր մայրենի բարբառը կը սորվէր՝ իր մայրենի սարերուն վրայ, ուր պապերու արեան հետքը կայ՝ ու ազաառութեան թոփչքը, թալաաթին կարմիր ձեռքը, աւերած արծիւներու բոյնը կը նետէ զայն, դէպի՛ Զօր։

Հոս կը մոռնայ իր լեզուն ու կը սկսի արաբերէն խօսիլ սուրիացի բարերարին շունչին տակ։

Հիմա, սակայն, աւելի խո՛ր կը զզայ անցեալն համակ. իր սարերուն կարօտը, մոռցուած հայրենիքին սէրը, ու նոր երազներ կը թոշին անոր հոգիին մէջ։

Անապատի ձգնարանիս՝ զուարթութիւնն է, երկնային կազդոյրը՝ իմ յոզնատիսար սրտիս։ Անոր մէջ կը կարդամ ես, յառա՞ծ սեփ սեւ աչքերուն՝ լեռնական հայ սերունդին՝ ազատաքալձ ափ մը քաջերու պատմութիւնն ու եղերերզը։

Անոր հոգիին խորը ընկղմած, կը գտնեմ ես հայ վերաբողբոջ յոյսը, յոյսը՝ որ կը քնանայ։

Շատ չի ժապտիր ան։ Բայց իր մերթ ընդ մերթ լացը՝ ծովումը փոթորկումին պէս ահաւոր է։

Օր մը միայն ան ժապտեցաւ երկա՛ր, երկա՛ր ու լացա՛ւ, լացա՛ւ ժամերով։ Իր արցունքին ու ժապտին մէջէն ես տեսայ ծիածաննը անդորրութեան, ծիածան մը՝ որ կուգար ծաղկիլ, կամար կապել անոր սուզի և յոյսի երկինքին վրայ։

Թուրք բոնութեան խուճապական փախուստի օրն էր ան։

Ո՛վ քաղցր հոգեակս Անահիտ, եկո՛ւր, դի՛ր գլուխդ կուրծքիս վրայ, ու պատմէ ինձ թէ ինչպէ՛ս երբ ալ Հայրենիքը փրկուած է. միասին — անապատի հայր և աղջնակ, պիտի երթանք ողջունել ծածանող դրօշա՛կը, հայրենի արեւին տակ։

25 Մարտ 1918

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

Տէր Զօր



Ք Ե Զ Խ

Քեզի համար նիւսեցի
Սիրս լեցուն յոյզերով՝
ի՞նչ երգեր ու մեղեդի,
Քնարիս նուրբ քելերով։

Քնարիս նուրբ քելերով՝
Արտիս վիշտերն յայտնեցի,
Հոգւոյս խանդը երգեցի
Արտասուարոր աշետով։

Շաղիկէ փունջ մը՝ օծուն
Աւարւան զինջ, նուրբ ցոլով,
Քեզ նուիրեմ եւ ինձ դուն
Պատմէ իղձերդ նոգերով։

Սիրս մը ունիս, սիրս մը դուն,
— Սիրս մը սիրոյ հետամի,
Որ հոգւոյս մէջ պլալուն
Աստի մը պէս կը ծագի . . .

Հղեխանդրիս

ՏԻԿ. ԶԱՊՀԼ. ԹԻՒՐԱՊԵԱ:





ԿՈՌԻՌԱ ԴԱՒԻԹԸ

(Լ Ա Ց Տ - Ճ Ո Ր Ճ)

Տակաւին երեք տարեկան էր Դաւիթ — զեռ երեխայ մը — սակայն, շատ քաջ և զօրաւոր կ'երեւէր, երբ Յօրը դիմաց իր իրարմէ հեռու պղտիկ ծունկերով և ցցուն ուսերովը կանգնած կը կենար զատաիկ մարդուկ ես հա՞», կ'ըսէր. շարունակ կրկնելով ու

երկրկնելով, մինչ աչքերը կը խոչորնային և հետզհետէ կը կապտանային և բռունցքը այնքան ուժզնօրէն կը սեղմուէր, որ ելունդները իր վասիուկ ափին մէջ կը մըխուէին:

«Հիմ պղտախիկ մարդուկը, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը, հիմա որ հայրիկը մեկնած է և մէկը չունինք մէկելու համար կեանքի պայքարը», կը յարէր մայրէ, մինչ մէկ կողմէն տղան թեւերուն մէջ պինդ կը սեղմէր, և աչքերէն արցունքի կալմիկները կ'իյնային անոր խոպոսկը ըրուն վրայ, իր հառաջանքները զսպելու ճիզին մէջ:



ԼԱՅՏ-ՃՈՐՃ

ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏ ԱՆԳԼԻՈՅ

մէր, և աչքերէն արցունքի կալմիկները կ'իյնային անոր խոպոսկը ըրուն վրայ, իր հառաջանքները զսպելու ճիզին մէջ:

«Պղտիկ մարդուկը պիտի կռուի»։ ըստ «Դաւիթ», հեղձամբզ-
ձուկ ձայնով։ Նոյն ատեն անոր գրկէն պրծիլ ջանալով «Աղբարիկին
համար ալ պիտի կռուիմ»։ Փայթ չընելով յաւելուածական մէկ եր-
կու կռիւին համար։

Դաւիթին մայրը իր արցունքներուն մէջէն իրապէս ժպտե-
ցաւ, քանզի քանի մը անզամներ դիտած էր թէ փոքրիկը թէեւ
մարմնով դեռ պղտիկ, սակայն հաշուի առնուելիք ուժ մըն էր, այն
պարագաներուն երբ ընկերները իր կարծեցեալ իրաւունքները կը
բռնաբարէին։ Բայց մինչեւ իսկ Դաւիթի կտրիճ հոգին կարող չէր իր
դեռատի մօրը վիշտը չնծել, իր հօր մահուընէն վերջը։ Փոքրիկ ազա-
րակին վարձքը դեռ անվճար կը մնար, և դրամ չունէին, այդ
պարտքը վճարելու համար Տունը աճուրդի դնելէն զատ ուրիշ ճար
չկար։ Տան զոյքերն իսկ պիտի վաճառուէին, քանի որ հօրեղբայր
Ռիչարտ պիտի զար զիրենք իր տունը փսխաղբելու համար, որ Ռուէլսի
մէկ ուրիշ դիւղին մէջ էր։ Անոր տունը տեղ չկար աւելորդ բանե-
րու։ Համար, քանզի մօրը ըսածին համեմատ, հօրեղբայր Ռիչարտ,
այնքան մեծովի մարդ մըն էր որ իր պղտիկ հիւղակը հաղիւ զինքը
կրնար պարափակել և շատ բաղդաւոր պիտի սեպէին ինքոյինքնին,
ևթէ միայն իրենց համար տեղ պտնէին հոն։ Այսպէս Դաւիթի մօր
սիրած իրերը թուագրուեցան, աճուրդին յայտարարութիւնը կա-
տարուեցաւ, զրացիները եկան, նայեցան և ուզածնին զնեցին, և
զրիթէ բոլոր զոյքը վերցուցին տարին, զոր դեռատի ամոլը տարի-
ներով հազիւ կրցեր էին մէկտեղել։

Աճուրդի գործողութիւնը Դաւիթին իրակա։ հաճոյք մը պիտի
շնորհէր, եթէ սակայն չկուահէր թէ, մօր համար անհաճոյ և դառն
բան տեղի կ'ունենայ։ Հոս հոն կը թալթէր, միշտ սակայն մայրիկին
մօտը մնալով, և յաճախ իր մանկական քնքուշ թաթիկները անորի-
նին մէջ սահեցնելով, որպէսզի ան զիտնար թէ իր պղտիկ զինուորը
քովը կը զանուէր՝ պատրաստ մայրիկին համար կոռելու։

Հօրեղբայր զալուստը դիւրացուց ամէն ինչ Դաւիթ զտած էր
հզօր սպայ մը յանձին ամենէն ուժեղ և հսկայ հօրեղբօր, որ երբեք
եկած ըլլայ իրենց զիւղը։ Հօրեղբայր Ռիչարտ, կարծես միծ ընտա-
նիքի տէր մէկու մը փորձառութիւնով, անմիջապէս ճամբայ հանեց
պղտիկ ընտանիքը։ Ան ժամանակ չձգնց Դաւիթի մօր իր սուզը
ողբալու։ Քանի մը օր վերջ մայրը և անհայր զաւակները իրենց
ետին թողլով իրենցմէ կորզուած տունը, ուղղուեցան դէպի նոր
բնակալայրը։

Դաւիթի համար հաճելի և ապշեցուցիչ ճամբորդութիւն մը ըլլալու էր, որ ամբողջ ժամանակը գլուխը պատուհանին յարած կը ջանար իր տեսութենէն հանձ մը չլրիպեցնել։ Ռիչարտի հիւղակը շատ պղտիկ էր, բայց նորեկ ընտանիքը կրցաւ տեղաւորուիլ հոն։ Այո՛, ինչպէս ընտանիքներ կրնան սեղմուիլ նեղ տուներու մէջ, երբ հոն սէրն ու յարգանքը միասին կը բնակին։ Կարծես թէ տունը կը լայննայ, կ'երկննայ, մինչեւ որ բոլորը հոն տեղ գտնեն։ Այս յատկանշական տնակին մէջ անկիւն մը կար, որ սահմանուած էր աւելորդ զոյքերու համար, քանզի հօրեղբայր Ռիչարտ զիւղին միակ հնակարկատն էր, և իր կրպակը հիւղակին մէկ ծայրը։

Այս խանութը ոչ միայն ընտանիքին, այլ նաև զիւղին բնակիչներուն ալ հաւաքատեղին էր։ Շատ մը կնճոռտ խնդիրներ հոն կը վիճաբանուէին և իրենց լուծումը կը զոնէին։ Դաւիթ շատ անգամներ հանդարտօրէն կը նստէր հոն՝ ծնօտը ափերուն մէջ հանգչեցնելով և աչքերը պտտցնելով մէկ խօսովէն միւսին վրայ։ Առաջները բան մը չէր հասկնար, բայց երբ քիչ մը մեծցաւ, սկսաւ ինքն ալ մասնակցիլ վիճաբանութիւններուն և հարցումներ ընել, որոնց ներկաները, շատ անգամ չէին կրնար զոհացոցիչ պատասխան մը տալ Հօրեղբայր Ռիչարտի հիւղակը շինուած էր զիւղին զլխաւոր անցքին վրայ, որուն ոլորտապատյա ճամբէն՝ մարդ շարունակելով մինչեւ վախճանիլ, կը հասնէր բնութեան ճոխ գանձերուն, — մարդագետինով ու անտառներով օժտուած։ Ամէն կողմ տարածուած էին ընդարձակ զետիններ, որ հարուատներու կը պատկանին։ Ամէն առեն ինծի այնապէս կը թուէր թէ անոնք որ պատեհութիւնը ունին լայնարձակ բացասաւաններու օդը չնչելու, միծ և ազնիւնկարագիր կ'անենան։ Աակայն, իրողութիւնը երթեմն հակառակը հաստատած է։ Ինչպէս հօրեղբայր Ռիչարտի հարուստ գրացիները, որ չեն ցոյց տաւած զիւղացիներուն իրենցմէ սպասուածին կէսը անգամ։ Դաւիթի մէջ արդարութեան զգացումը, անոր մէջ արթընց լուց լոմբոստացող սղի մը Ան երթեք չէր կրնար հանդուրժել ընկալեալ օրէնքին, թէ հարուստ հողատէրերը կը կաղմին զերընտիր ժողովուրդը և կառափարութեան իրական գօրաթիւնը անոնց կը վայելէ։ Իր փափուկ սրտին խորութեանը մէջ կ'զգար թէ անոնք զեղջուկ ժողովուրդին վրայ ու է առաւելութիւն մը չունին, արժանիքի և մոռաւորական կարողութեան տեսակէտով։ Ան կը հաւատար թէ իր հօրեղբօր կրպակը վիճելու և կարծիքներ փոխանակելու համար հա-

ւաքուալ զիւղացիները աւելի բարձր էին քան ազնուապետական կոչուածները:

Երբեք շիտակ չէր թուեր իրեն, որ այս փոքրաթիւ կալուածատէրերը իրաւունք ունենային իբր ոճրապարտ դատելու բարեկամ թօմը և անողոք կերպով դատապարտէին զայն, քան իրենց կիները ծեծողները, որովհետեւ արգիլուած ջուրերէն ձուկ մը դուրս հաներ է, մանաւանդ որ ձուկերը այնքան առատ են և կը հրապուրեն քեզ, որ զիրենք ազատես ջուրէն: Բարեղիպութիւն մըն էր որ Դաւիթ կոռւելու ճաշակով մը օժտուած էր, որովհետեւ աշխարհ գալէն ի վեր զրեթէ միշտ կոռւելու պարտադրուած էր:

Ի՞նչ տաժանքի սեւ օրեր անցուց այս պղտիկ ընտանիքը: Թէեւ Դաւիթ և իր եղբայրը շատ տարտամօրէն իրազեկ էին անոնց: Հօրեղբօր հզօր բազուկները ունէին իբր օգնական և մօրերնուն սէրը՝ իբր վահան:

Բաւականաչափ ուտելիք ունէին, հերիք էր որ մարդ շատ փափկաճաշակ չըլլար, և կարելի՞ էր առողջ տղու մը անսուաղ մնալ, երբ տան մէջ այնքան առատ փաթաթէս կը զանուէր: Դաւիթի հօրեղբայրը պատեհութիւն ունեցած չէր իրեն բարձր դաստիարակութիւն մը ապահովելու, և սակայն քնական ճաշակ մը ունէր ուսման, և շատ մը գոլէճականներէն աւելի հմտութեան տիրացած:

Իր միտքը դրաւ որ Դաւիթ ազատ արուեստի մը տիրանայ, հոգ չէ թէ ինչ մնծ զոհողութիւններով, որովհետեւ Դաւիթ իբր պատահնի, զիւղի միւս տղուքներէն զերաղւնց տալանդի մը նշանները ցոյց կուտար: Թէեւ կոռուի պէս ան ուսման համար շատ փափաք մը չունէր, բայց իր կարզին մէջ միշտ առաջինը ըլլալու համար բնաւ նեղութիւն չէր կրեր: Չառը իլ չէր կրնար, կարծես պիտութիւնը անոր կը կառչէր ամրապինու: Նոյն ատենը բնականոն, քաջառողջ տղայ մըն էր և զրեթէ միշտ առաջնորդը զիւղին չարաճընիութիւններուն, սակայն երբեք չար չէր:

Երբ տասը տարեկան եղան, հօրեղբայրը յարժար դատեց որ Դաւիթ իրաւաբան մը ըլլոց, քանի որ բնմական կարողութիւն և ձիրք ցոյց կուտար: Բայց դպրոցական ծախքի համար քիչ զրամ ունէր — զումար մը, զոր խնայած էր իր ծերութեան համար Ասիկա չպիտի բաւէր տղուն դաստիարակութեան համար, և նորէն զրամ շահիլ ալ շատ երկար զործ մը պիտի ըլլար: Աւստի, թէեւ ծերութեան մօտեցած տարիքին մէջ, հօրեղբայր Ռիշարտ լատիներէն և ֆրանսերէն սորվեցաւ, որպէսզի կարող ըլլայ այս լեզուները ուսու-

ցանել իր եղբօրորդիին, և այդ կերպավ խնայել գտասատուի մը ծախքը:

Պէտք է երեւակայել այն ուրախութիւնը, զոր կ'ունենային, երբ այս երկու խանդավառ հոգիները մէկիկ մէկիկ կը յաղթահարէին բոլոր արգելքներն ու դժուարութիւնները։ Պզտիկ խանութին մէջ ստացած կրթութիւնն ու զարգացումը, վիճաբանութիւններու մասնակցութիւնով ու ունկնդրութիւնով շատ օգտակար եղած էին Դաւիթի համար, քանզի այս պարզուկ մարդիկը որ իրարու քով կողային, մասածողներ էին Հոն ամէն կարգի քաղաքական և կրօնական խնդիրներ և ուրիշ շատ մը նիւթեր կը ծեծէին, մանաւանդ բարենորոգումի վերաբերող վիճաբանութիւններու շուրջ շատ խանդավառ հետաքրքրութիւն կը յայտնէր։ Նոյնիսկ երբեմն կը փորձէր բարեկարգութիւններ ներմուծել և գէթ մէկ առիթով ան կրցաւ յաջողիլ։

Դիւղին մէջ ձանչցուած եկեղեցին անգլիականն էր, թէն պիւղին ընակչութեան մէկ մասը ոչ համակիր անոր գտաւանական վարդապետութիւններուն, ստիպուած էր անոնց հետեւելու։ Ամէն պահոց չորեքշաբթի տղաքը թափօրով եկեղեցի կը փութային Եկեղեցւոյն Քրիստոնէականին հարցուազատասխանին և Առաքելական հանգանակը արտասանելու։ Դաւիթ, անզամ մը, այս նիւթին շուրջ պղտիկ խանութին մէջ լսած էր թէ՝ օրէնքը իրաւոնք չունէր այս տղաքը ստիպելու։ Երբ անոնց ծնողքը տարբեր գտաւանութիւնն մը կը պատկանին։ Ասիկա բաւական եղաւ։ Դաւիթին, որ առջի պատեհամբ ցոյց տայ այս մարդերուն թէ իրաւոնք չունին ընկալեալ սովորութիւնները բոնի պարտադրելու։ Երեւակայեցէ՛ք անզամ մը կրօնական իշխանութեան ունեցած անակնկալ ասլշանքը, երբ չորեքշաբթի օր մը, բոլոր տղաքը մերժեցին փոխառացութիւն կատարել։ Դաւիթիթ իրը պարազլուխ ձանչցուելով պատմուեցաւ։ Բարեկարգաբար Դաւիթ կրցաւ մօտակայ զիւղաքաղաքի մը մէջ զտնուած իրաւագիտական դասընթացքին հետեւիլ իր հօրեղբօր տղեցութեան ու խնամքին ներքեւ։ Իր բնածին բեմբասացութեան զարգացումին համար տեղական վիճաբանական ընկերութեան անդամ եղաւ, ուր ամէն տեսակ քաղաքական, կրօնական, ընկերական և զրական նիւթերու շուրջ վիճախօսութիւններ և բանակոյներ տեղի կ'ունենային Քսանը՛էկ տարիեկանին, Դաւիթ, իրը արտօնեալ իրաւագէտ, կրցաւ քաղաքական և պատմական գտատարանները մուտք զործել։ Հիմա սկսած էր աշխարհի հետ իրական կոխը Դաւիթի հա-

մար: Միշտ կոխւներուն սոսկալին կ'ստանձնէր, խնդիր չէ որ ինչքան տկար ըլլար յոյսը յաջողութեան: Ան միշտ կեղեքեալին պաշտպան եղած էր, որով իր կանխաստաց փորձառութիւնները պատրաստած են զինքը զգեանուած հոգիներու գեր ելլել, քանզի ան ապրած էր աղքատին ճնշիչ մթնոլորախին մէջ: Շատ բան ըրած է, որպէս զի աշխարհ բարեկեցիկ կերպով ապրելու և բանաւոր առանձնաշնորհուածներու վայր մը ըլլայ այն ամենուն, որ իրենց հայը կը ճարեն, ինչպէս նաև անոնց ալ՝ որ իրենց նախնիքներէն ժառանգած են: Քսան և հինգ տարեկան էր երբ իրաւագիտական զործունէութեան մէջ առաջին անգամ հոչակ հանեց ծեր քարակոփի մը ընտանեկան դատին առիթով: Անզլիական եկեղեցին մերժած էր քարակոփը գերեզմանատան մէջ իր աղջկան մօտ թաղել: Քանզի անզլիական եկեղեցին չէր պատկաներ և կը վախնային թէ մի զուցէ Դաբրիէլ Հրեշտակապեար չար ընկերակցութեան մէջ տեսնէ աղջիկը Յարութեան առտուն: Դաւիթ անձը, ժամանակը չվատնեց հին օրէնքները վերծանելու նախընթաց մը գտնելու համար: Այլ շիտակ ուսէն զարնելով անոնցմէ մէկուն, ըստ «Դաւիթ իրաւունք ունիք այս մարդը իր աղջկան մօտ թաղելու, առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու, եթէ քահանան մերժէ թաղման արարողութիւն, տալ, մեռելը շիտակ զերեզմանատուն առաջնորդեցէք, դագաղը ներս մոցուցէք, բռնի, եթէ հարկ ըլլայ, և եթէ զերեզմանատունը ծեր դէմ զոյտած զբանէք, զուռը կոտրեցէք»: Դիւզացիները իր հրահանզին համեմատ շարժեցան: Դաւիթ դատը երկու դատարաններու ներկայացուց և շահեցաւ: Այսպէս, Դաւիթ միշտ առաջ զնաց շատ մը զերեզմանատան գոներ կոտրելով և մեռած աւանդութիւններ թաղիլով, որոնք շատնեց պէտք էր որ հողը գրուած ըլլային:

Միշտ կոտեցաւ, պայքարեցաւ հերոսաբար և ճակատաբաց, իր պատկանած ժողովուրդին բարօրութեանը համար, և որոնց շահերուն պաշտպանութեան համար իր մեծ տաղանդը նուիրազործած էր: Վախը երբեք անոր մէջ ծնունդ չէր զտած, և հիմա իբր Մեծ Նախարարապետ Անզլիոյ, ցցուած ուսերով, բառոնցքը սեղմրւած, աչքերը հրալորբոք, կը կուտի իր սիրած հայրենիքին աղատութեանը համար, և դեռ պիտի կուտի փառաւոր յաղթանակին համար:



— Կը սիրե՛մ քեզ. լսելով մեր հեծքը մարդիկ՝ կը ծիծառին,
Բայց զերք լոդիւս մ'որ կը ծոփ մեղմ, հոսանուս վրայ ջուրին,
Փակած աչքերս ու սիրս ալ՝ պիտ' հետեւիմ նակատագրիս,
Ի՞նչ փոյք ինձի ամբոխն հանուր, թէ որ ֆիշ մը կը սիրես զիս:

— Կը սիրե՛մ քեզ. Եւ կորուսի, աղուո՞ր, ծիծաղդ ու ձայնի բալցրիկ,
Բայց ինչպէս խունի զոր կը ծխեն աստուծոյ մը առջեւ մարդիկ,
Կը բարձրացնեմ նայուածքը վե՛ր՝ աստղերուն, ուր դուն կը նայիս,
Բացակայ ես, ի՞նչ փոյք ինձի, թէ որ ընդմիտ կը սիրես զիս:

— Կը սիրե՛մ քեզ. Եւ իմ սկրը լո՛ւռ սառապիլ գիտցաւ երկար,
Պիտի զայ վերջ ուրիշ մ'իմ տեղ. յափշտակուած ինձնեւ դուն՝ ո՛վ
Ատկէ այնին պիտ' սառապի՛մ . . . կ'յոււսամ որ մանս խոկ ըլլայ ան.
Ա՞ն, երէ դուն զիս չես սիրեր, ի՞նչ փոյք ինձի կեսանի ալ սակրայն:

— Կը սիրե՛մ քեզ. Եւ երբ երբամ պիտ' անոնց բով որ ալ չկա՞ն,
Նիշենել նոն՝ ուր կ'ինան ամենին, զիշերին մեջ համբ-անվախնան,
Մարդիկ նետեն, ուր որ կ'ուզեն, րո՛զ մեացորդն հեզ դիակիս,
Ի՞նչ փոյք դամբանին, ո՞ն, երէ դուն անոր վրայ պիտ' չարտասուես:

ԶՐԳՄ. Վ. ԳԵՂՈՐԳԵԱՆ

EDMOND HARAUCOURT





ՖՐԱՆՍՈՅԻՑ ԵՌԱՄԵԱՅ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԵԳԻՊՏՈՍԻ ՎՐԱՅ

(1798-1800)

Եթէ երկիր մը կայ, որ շատ հարուստ եղած է իր պատմական դէպքերով ու յոյժ շահազրգուական անցուղարձերով, այդ երկիրը Եգիպտոսն է։ Թէպէտեւ բնողւթիւնը զայն օմտած է այնպիսի բարիքներով՝ որոնցմէ շատ երկիրներ զուրկ կը մնան, կը տեսնենք, սակայն, որ ճակատապիրն անոր հանդէպ անազորոյն եղած է ամենահին ժամանակներէ ՚ի վեր՝ ըստ որում զրեթէ անընդհատ զայն նշաւակ հանդիսացուցած է օտար ոտնձգութիւններու ու շահատակութեանց։ Անոր ազգային վերջին թագաւորները փարաւոններն եղան, յորմէ հետէ՝ Պարսիկներու, Բթողէմիացիներու, Հռովմայեցիներու, Արաբներու, Օսմանցիներու և Մէմլուքներու իշխանութեան հետզհետէ ենթարկուած կը զանենք զինք։ Խոկ անոր զանազան տէրերուն մէջ՝ անոնք՝ որոնց տիրապետութիւնը կարճատեւ եղաւ, ֆրանսացիք էին. որովհետեւ Մեծն Նաբուկոնի առաջնորդութիամբ զայն զրաւելէ յետոյ 1798ին, երեք տարի վերջ զայն կը պարպէին՝ Քլէպէրի յաջորդող Մընու զօրավարին ընդհանուր հրամանատարութեան ատեն։

ԵԴԻՊՏՈՍԻ ՎՐԱՅ ԱՐԵԱԿԱՆՔԻ ՄԸ ԾՐԱԴԻՐԸ

Ճիշդ է որ Նաբուկոնէ առաջ՝ Եգիպտոսի վրայ արշաւելու առաջին զաղափարը յղացած էր Լէյպնից 1872ին*։ սակայն

* Տե՛ս զլուխ Ա. Bonaparte en Egypte; par Désiré Lacroix. Edition Garnier Frères, Paris, 1899.

այդպիսի ձեռնարկ մը այնքան յանդուզն երեւցած էր, ու այնքան անմատչելի դժուարութիւններ կը ներկայացնէր, որ անհնարին համարուելով՝ մէկ կողմ ձգուեցաւ։ Նաբոլէոն մը պէտք էր զայն զլուխ հանելու համար, այնպէս որ Եզիպտոսի զրաւումը անոր մեծագոյն գործերէն մին եղաւ։

Ի՞նչ էր արդեօք Նաբոլէոնի նպատակը՝ Եզիպտոսի վրայ արշաւելու ծրագիրն առաջարկելով՝ Տիրեզրուարին՝ իտալիոյ մէջ իր տարած տիեզերահոչակ յաղթանակներէն անմիջապէս յետոյ — յաղթանակներ՝ որոնցմով փրկեց իր նախորդին ապիկարութեան հետեւանքով վտանգուած ֆրանսայի պատիւն ու համբաւը։ Այդ կէտին շուրջ կարծիքները համաձայն չեն թերեւս Եզիպտոսի տիրանալով ան կ'ուզէր սպառնալ Անգլիոյ զերիշխանութեան՝ իրբեւ գաղթային պետութիւն։ կամ դիտաւորութիւն ունէր՝ երեւակայութիւնները շացնել պատերազմական փայլուն գործողութեամբ մը, և կամ անոր նպատակն էր Եւրոպայէն դուրս ստեղծել իրեն համար վիթխարի ձեռնարկ մը՝ որուն իրականացումը ինքը միայն կարենար ստանձնել։ Իրողութիւնը այն էր թէ իր պերճախօսութեամբ ու համոզիչ փաստերով յաջողեցաւ Տիրեզրուարին պարտադրել իր տեսակէտն ու որդեզրել տալ ծրագիր մը՝ որ մինչեւ այն ատեն անիրականալի կը թուէր։

Մօտէն քննելով այն պատրաստութիւնները՝ որոնց անմիջապէս ձեռնարկեց արշաւաբանակ մը կազմակերպելու համար, կը տեսնենք թէ ան ո՛չ միայն հեռաւոր երկիր մը զրաւել կ'ուզէր, այլ նաեւ կը ձգտէր հոն հիմնելու պետութիւն մը՝ որ իր սեպհական միջոցներով բաւականանար ու անոնցմով կ'արենար ինքզինքը պահպանել։ Եւ եթէ Եզիպտական արշաւանքը զինուորական արուեստի զլուխ գործոց մըն էր, է՛ր նաեւ կազմակերպութեան ամենակատարեալ օրինակ մը։

Արդ, Նաբոլէոն ինքզինքը կը զտնէր պատկառելի նաւատորմիղի մը ու ստուարաթիւ բանակի մը զլուխը՝ մեծ զաղտնապահութեամբ ու աննկուն փութկուութեամբ պէտք եղած պատրաստութիւնները տեսնելէ յետոյ։ Այդ սքանչելի բանակը երեսուն և հինգ հաղար կտրիճներէ կը բաղկանար, բոլորն ալ լաւ մարդուած երիտասարդներ՝ անցեալին մէջ պատերազմած ըլլալով այս միեւնոյն զօրավարին հրամանատարութեան տակ՝ որ այժմ զիրենք կ'առաջնորդէր զրաւելու սքանչելեաց ու երազանքի երկիրն եղող Արեւելքը։ Եւ առընթեր այդ նաւատորմիղին ու այդ բանակին՝ ապահոված էր

նաեւ համագործակցութիւնն ամէն անոնց՝ զոր ֆրանսա ունէր իր՝
բեւ մեծ զիտնականներ ու մասնագէտներ: Մօնժ, Պերթոլէ, Ֆուրիէ,
Ժօֆրուա-Աէնդ-Իլէր և շատ մը ուրիշներ այս մեծահանճար մար-
դուն միացան՝ անոր տրամադրութեան տակ դնելու համար իրենց
զիտութիւնը, կարողութիւնն ու նոյնիսկ անձը:

ՅՐԱՆՍԱՑԻՈՑ ԵԳԻՊՏՈՍ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Հայրենիքէն մեկնած վայրկեանէն մինչեւ այն րոպէն՝ յորու մ
այս հսկայ բանակը, որպէս աշխարհակալ, մտաւ Գահիրէ, բաղդը
շարունակ ժպտեցաւ անոր: Մալթա կղղին, Աղեքսանդրիա, Տաման-
հուր ու հուսկ յետոյ Գահիրէ իրարու ետեւէ կ'իյնային Նաբուկոնի
իշխանութեան տակ: Մալթայի ամրակուռ պարիսպներն ու պատնէշ-
նիրը, Մէմլուքներուն կատաղի գիմադրութիւնն ու, վերջապէս,
Նելսընի նաւատորմին մշտարթուն հսկողութիւնը չկրցան կասեցնել
ֆրանսացւոց յաղթապանծ յառաջիսաղացումը:

Ֆրանսացւոց հետզհեաէ մղած ամենէն փառաւոր ճակատա-
մարտներէն մին եղաւ Բուրգերու ճակատամարտը, յորում Նաբո-
ւէն՝ դառնալով իր զինուորներուն, ու անոնց տոհմային արիու-
թեանը կոչ ընելով՝ ըսաւ այս նշանաւոր խօսքը. «Զինուորնե՛ր,
քառասուն զարեր ձեզ կը զիտեն ոս Բուրգերու բարձունքէն»: Եւ
հակառակ անոր, որ Մէմլուքները նոյն արխոնալից ճակատամարտին
ատեն մեծ քաջութեամբ կռուեցան և իրենց բոլոր ուժերուն ու զի-
մադրական միջոցներուն զիմեցին ֆրանսացիները ետ մղելու հա-
մար, այնպիսի մեծ պարտութիւն մը կրեցին, որ ահազին կորուսո-
ներու ենթարկուելէ յետոյ՝ հաղիւ իրենցմէ մէկ քանիներ կրցան
ազատուիլ Մուրաս ու Խպրահիմ պէյերուն առաջնորդութեամբ:

Այսու հսկայերձ՝ պէտք չէ կարծել՝ թէ այնուհեան. Ֆրան-
սացւոց տիրապետութիւնը Նեղոսի ախերուն վրայ ո՛ և է պառ-
նալիքէ զերծ կը մնար. ընդհակառակը՝ անոնք սախալուեցան զրա-
ւումին ամբողջ տեւողութեանը միջոցին պայքարիլ ընդգէմ այս
Մէմլուքներուն ու անոնց արբանիակներուն՝ որոնք Բուրգերու հա-
մազարդէն ճողովրիլով՝ քաշուեցան կամ վերին Եպիպտոս, կամ
Ալինայի անապատին սահմանները Ասկէ զատ՝ Անգլիա, պէտք չկայ
ըսելու, չէր կրնար հաշտ աչքով դիտել Նեղոսի հովիտին մէջ այս
նոր տէրերուն ներկայութիւնը, և ո՛ և է միջոց զանց չըրաւ զանոնք
դուրս հանելու համար, ճամողուած ըլլալով թէ անոնց՝ հոն մնալը
պիտի վտանգէր իր Հնդկաստանի ընդարձակ սեփականութիւն-

ները։ Ուստի՝ անոր մեծագոյն նաւատորմը սկսաւ հալածել ֆրանսական նաւերն՝ որոնք ֆրանսայի և Եգիպտոսի միջև կը նաւարկէին։ շռայլեց իր աջակցութիւնը աստ և անդ թափառող մէմլուք ուժերուն, և ատոնց զէնք, դրամ, սազմանիւթ, և նոյնիսկ մարդ հայթայթելով՝ անոնց թոյլ տուաւ որ ո՛չ մէկ վայրկեան հանգիստ թողուն ֆրանսացիները թէ՛ վերին և թէ՛ Ստորին Եգիպտոսի մէջ։ և վերջապէս համոզեց Օսմանեան Պետութիւնը որ ֆրանսացիներուն դէմ պատերազմ հռչակէ և մեծաթիւ բանակ մը դրկէ անոնց վրայ։

ԵՐԿՐԻՆ ՎԵՐԱՇԽԵՈՒԹԻՒՆԸ

Պայքարը հետապնդելով հանդերձ թէ՛ արտաքին և թէ՛ ներքին թշնամիներու դէմ, ֆրանսացիք իրենք զիրենք մեծ եռանդով նուիրեցին վերաշխնութեան զործին, և այս նպատակաւ իրենց ցոյց տուած ճիգերն ու զործունէութիւնը ստուգիւ զարմանալի եղան իրենց հոգածութեան մասնաւոր առարկայ ըրին օրէնսդրութիւնը, դատարաններն ու հարկահաւաքութիւնը, հիմնելով այս վերջինը հողաբաշխական հարազատ դրութեան վրայ։ Նաբոլէոնի ընկերացող զիտնականները սկսան լրջօրէն պարապիլ երկրին ընդունակութիւններուն, հնութիւններուն, լնակիչներու բարքերուն, հողային դրութեան բարելաւման, ջրաբաշխութեան, զետային նաւարկութեան ու ցամաքային հաղորդակցութեանց ուսումնասիրութիւններովը։ Անոնց երկերը վիթխարի եղաւ։ իսկ այդ երկեր և վրայ փոքր ի շատէ զաղափար մը տալու համար՝ կը բաւէ ըսել թէ անոնց արդիւնքն ամփոփուած կը գտնենք քսան և վեց ստուար հատորներու, ինչպէս նաև արտեստի ճշմարիտ զլուխ զործոց եղող պատկերներու, քարտէսներու և զծագրութեանց համաթիւ մեծածառալ հաւաքածոներու մէջ*։

Ֆրանսական նաւատորմին Ապուքիրի առջեւ կործանումը, որ զրկեց ֆրացսացիները իրենց մայր երկրին հետ հաղորդակցելու, ու երեսուն և հինգ հազարնոց բանակի մը անհրաժեշտ եղած պարենաւորումը անկէ ստանալու հնարաւորութիւնն, լիովին արդարացուց նաբոլէոնի խոհեմ շրջահայեցութիւնն՝ որով կրցած էր կցել

* S'iu Description de l'Egypte ou Recueil des observations et des recherches qui ont été faites en Egypte pendant l'Expédition de l'Armée Française. 2me. Edition publiée par C. L. F. Panckoucke, Paris, 1830.

իր բանակին այս բոլոր գիտնականներու փաղանգը Եւ այս երկրին մէջ՝ ուր ոչինչ կարելի էր գտնել, կարծես թէ դիւթութեամբ մը ամէն տեսակ զարծարաններ գոյութիւն առին շնորհիւ անոնց։ Այսպէս, ահա՛, Եզիպտոսի մէջ սկսան շնուիլ բանակին հանդերձեղինաց համար պէտք եղած կատար, թնդանօթներ, հրացաններ, այլեւայլ զէնքեր, վառող ու ոռմբ, ճշդաչափական գործիններ ու նոյնիսկ դեղ, խաւաքարտ ու թուղթ։

Հոս միջանկեալ ըսենք որ շատ չյամեցուց Նաբուշոն իր վրիժառութիւնն Անգղիացիններէն, և զանոնք ու անոնց զինակցած ու ընկերացած բազմաթիւ թուրք բանակ մը այնքան մեծ պարտութեան մը մատնեց նոյն այս Ապուքիրեն մէջ, որ ճակատամարտէն իր վերադարձին՝ Քլէպէր՝ սքանչացած՝ զինք ողջազուրեց զոչելով։ «Աշխարհին չտի մե՛ծ ես, զօրավա՛ր»։

ՖՐԱՆՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԱԳԱՏԱՄԻՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Երկար ժամանակի մը պէտք չեղաւ որ Եզիպտացիք կարողանային, շնորհիւ այս նորահաստատ բարեկարգութեանը, վայելել ցարդիրենց անծանօթ մնացած անդորրութիւն մը Դարերու ընթացքին՝ Արարներու, Մեմլուքներու և Թուրքերու բռնապետութեան տակ սորկացած Եզիպտացիք սկսան շունչ առնել, որովհետեւ այն հազար ու մէկ խոշտանգումներն ու հարստահարութիւնները՝ որոնց հանապազենթակայ եղած էին, այլեւո կը դադրէին իրենց համար Անոնց ստացուածքն ու պատիւը զերծ կը մնային այնուհետեւ ո՛ և է յարձակումէ, այնպէս որ ժամանակակից շէյխ մը՝ Ալ-Ճապարդի անուն՝ որ օրազրական ձեւի մը տակ արձանագրած էր ի՞նչ որ իր օրով կը պատահէր, պահ մը մտնալով իր մոլեւանդութիւնն ու քրիստոնէատեցութիւնը՝ խոստովանեցաւ ճշմարտութիւնը, վկայելով որ Փրանսական տիրապետութիւնը շինարար արդիւնք ունեցաւ ժողովուրդին համար

Այսուհանգերձ՝ տղէտ ու կրօնամոլ Եզիպտացին երբեք չկըրցաւ հաշտուիլ «անհաւատ» տէրիր ունենալու վաղափարին հետ Աննախամեծար կը համարէր հարստահարուիլ, բռնաբարուիլ ու ճնշուիլ իր խալամ կրօնակիցներէն, քան վայելել բացարձակ ապահովութիւն մը Ֆրանսացիններուն հայտնոյն ներքեւ։ Աակայն՝ Ֆրանսացիք՝ այն օրէն ի վեր որ ոտք դրին Եզիպտական հողին վրայ, ամենամեծ ազատամտութիւնը ցուցուցին Արդէն այլապէս չէր կրնար ըլլալ յեղափոխութեան այդ հարազատ զտւակներուն համար — այն յեղա-

փոխութիւնը՝ որ բացէ ի բաց պայքար հռչակած էր եկեղեցին դէմ Եւ Նարոլէոն իսկ, իր առաջին հրովարտակին մէջ ուղղուած Եզիպտացիներուն, ջանաց զանոնք համոզիլ թէ Ֆրանսացիք իսլամութեան բարեկամներն ու պաշտպաններն էին, թէ այս միևնույն Ֆրանսացիք Հռովմայ Պապը գահէն տապալեցին, խաչերը խորտակեցին ու կործանեցին Մալթայի առպետներուն իշխանութիւնը՝ որոնք իոլամութեան երդուեալ թշնամիներն էին*: Նարոլէոն այս պարզ խօսքերով չբաւականացաւ. և անկէ ի վեր առիթը չփախցուց իր այս ըսածներուն մասին գործնական ապացոյցներ տալու։ Մարզարէին ծննդեան տարեդարձին առթիւ տեղի ունեցած հրապարակային աղօթքի մը անձամբ նախազահեց, և իր շարժումներով ու զլիսուն երերումներով ընդօրինակեց նոյն աղօթքին մասնակցող շէյխերը։ Միւս կողմէն՝ շատ մը Ֆրանսացի զինուորներ, Մոհամմէտի կրօնքն իրենց ճաշակին տւելի յարմար զտնելով՝ զայն կ'ընդունէին և իրենց կրօնափոխութենէն ետք եզիպտացի կիներու հետ կ'ամուսնանային։ Արդէն հաւատքի ըմբոնումը այնքան թուլցած էր անոնց մէջ, որ Նարոլէոն ըստ էր թէ բաւական էր իրեն օրակարգ մը ուղղել բանակին՝ որպէսզի բոլոր զինուորները ընդզրկէին մոհամմէտականութիւնը**։ Կ'արժէ հոս յիշել Քլէպէրի յաջորդող զօրավար Մընուի պարագան՝ որ իսլամութիւնը հրապարակաւ ընդունեցաւ իր 60 ամեայ հասակին մէջ, Ապտուլլահ կոչուեցաւ ու բաղնեպանի մը դեստափի աղջկան հետ ամուսնացաւ։

Ի՞նչպէս որ կը տեսնուի, կրօնքի վերաբերմամբ այսքան անտարբեր եղող Ֆրանսացիք, ոչ միայն աղատամիտ, այլեւ բարեացակամ կրնային զտնուիլ ոչ-քրիստոնեայ եզիպտացիներու հանդէպ։ Ասկէ զատ՝ անոնք ի բնէ շատ ընկերային ու զիւրահաղորդ ըլլալով, Նարոլէոնի կողմէն պարտադրուած ամենախիստ կանոնն էր համարել Եզիպտացին իբր բարեկամ ու միայն Մէմլուքը՝ թշնամին նոյնիսկ շատ ծանր պատիմներու. կ'ենթարկուէին ամէն անոնք՝ որոնք կը փորձէին ժողովուրդը նեղել։ կը պատմուի թէ Նարոլէոն հինգ ֆրանսացի զինուորներ հրացանի բոնել տուաւ Գահիրէի բերդին տուրուար, որովհետեւ տեղացիի մը տունը բոնարարած էին։

Կ'ամրաստանուին Ֆրանսացիք՝ Տամանհուրի, Թանթայի ու Գահիրէի բարոստութիւնները վայրագութեամբ զսպած ըլլալուն

* Տե՛ս՝ Correspondances de Napoléon, թուղթ 2728-3785.

** Տե՛ս՝ Les Mémoires de Napoléon

համար։ Ընդունելով հանդերձ թէ այդ դէպքերուն առթիւ անոնք չափէն աւելի խիստ եղան, կը պարտինք խոստովանիլ թէ մոլեռանդ կրօնականներէ զրգուած ու դրդուած եզիպտացիներն ամէն անգամ նախայարձակ կ'ըլլային։ Կարելի է նոյնիսկ հաւաստել որ եթէ Եզիպտացիներն ըստ արժանւոյն պատասխանած ըլլային այն բոլոր բարեացակամ տրամադրութիւններուն, զոր Ֆրանսացիք ունէին անոնց հանդէպ, ոչինչ պիտի կարինար պղտորել փոխադարձ բարի յարաբերութիւնները։ Դժբաղդաբար, խևամին սիրտին մէջ այնքան խոր արմատ ձգած կրօնամոլութիւնը, զոր Մէմլուքներուն գործիչները միշտ կը հրահրէին ու ըստ կամս կը շահագործէին, անկարելի կը դարձնէր ո՛և է համաձայնութիւն։ Քլէպէրի սպաննութիւնը ամենակատաղի օրինակը եղած է կրօնամոլութեան։ և եթէ մարդասպան Սուլէյմանը բնիկ եզիպտացի չէր, պէտք չէ մոռնալ թէ Գահիրէի Ալ-Ազհար մզկիթին մէջ իր ուսումն առած, Գահիրէի մէջ իր մեղսակիցներն ընտրած և իր ոճիրը գործելու համար պատրաստութիւն տեսած էր*.

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԱՐՊՈՒՄԸ.

Այս ատելութիւնը, զոր Ֆրանսացիներու բոլոր ազատամտութիւնն ու բարեացակամութիւնը չէին կրնար բառնալ կամ զէթ մեղմացնել, լուրջ արգելք մը չէր ֆրանսական տիրապետութեան դէմ, և Ֆրանսացիք ի վիճակի էին դժգոհները զսպել ու զանոնք անշնաս դարձնել կային, սակայն, ուրիշ խոչընդոտներ՝ աւելի՛ կարեւոր, աւելի՛ ծանր՝ որոնք, եթէ ոչ անհնարին, զէթ յոյժ դժուարին կը դարձնէին Ֆրանսացիներուն մնալը Նեղոսի ափերուն վրայ։ Համաձարակները, որոնք Եզիպտոսի մէջ շարունակական էին, երկրին կլիման, մայր հայրենիքին հետ հաղորդակցելու միջոցներու պակասը, Անգղիացիներուն թշնամական յարածուն գործունէութիւնը, զինուորներուն անշէջ փափաքը Ֆրանսա վերադառնալու, և, ամենէն աւելի, Մինու ընդհանուր հրամանատարին բացարձակ ապիկարութիւնը փութացուցին Եզիպտոսի պարպամը թերեւս ուրիշ պետ մը՝ աւելի՛ կարող, աւելի՛ ձևնհաս, տարբեր վախճան մը տար ֆրանսական այս մեծ արշաւանքին**.

* Սուլէյման Հալեպցի եր։ Ալ-Ազհարին մէջ իր ուսման ըրջանն աւարտելի յիտոյ՝ Մէֆք եւ Երուսաղէմ ուխտի զնաց, ու իր վերադարձին Քլէպէրը սպաննեց։

** Տե՛ս էջ 9, Bonaparte en Egypte, par Désiré Lacroix, Edition Garnier Frères, Paris. 1899.

Եթէ Ֆրանսացիք, երեք տարի վերջ, Եղիպտոսէն կը մեկնէին
իրենց կազմուածքով ու գոյքերով, կը տանէին նաև իրենց հետ իրենց
աննման զիտնականներուն ուսումնասիրութեանց արդիւնքը՝ որոնք
Ֆրանսայի փառքին անմահ կոթողներէն մէկը կը կազմեն:

Այսպէս, ահա՛, եթէ եղիպտական արշաւանքը չտուաւ զին-
ուորապէս ակնկալուած արդիւնքը, զէթ ճոխացուց պատմութիւնը,
պանծացուց զիտութիւնն ու անոնց յաղթանակը եղաւ:

Յ. ՍՈՒՑԵԱՆ



ԱՆՑԱՑ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐՈՒԹ

Անոնց համար որոնք մեռան հեւասպան,
Օսարութեան աստղերուն տակ, բռնավար,
Կուկոնամահ որոնք ինկան, սրեւրենին
Կուօսավառ, սերմերուն հետ սեւ հողին
Խառնելով,
Դարերու ձիգ հոլովումին մէջ լուսել,
Պիտի պահենք յիշատակներ ժայտ սպեղ,
Տրումախուով:

Անոնց անուշ յիշատակին ընդմեջէն
Պիտի ժայտինք բաղցրութեանը լուսելէն
Հայրենական բաղաբներուն աւերուած,
Աւերուխանը մեր գիւղերուն ալ մեռած
Ծխանին,
Պիտի երգենք ծուխին երիզն ամբարձիկ
Երիկուններու ըստւերին մէջ բափանցիկ
Տրումագին:

Յիշատակին խունկը անոնց քաղցրաբոյր,
Մեր սրտերու բուրվառին մեջ սիրահար
Պիտի ծխայ, խորհուրդին մեջ ծիրանի
Ծուխին, շնչենք պիտի վրէժն արիւնի,

Աճիւնին,

Անոնց մաքուր փոսերն անյայս, սիրելի,

Պիտի խօսին լեզուներով ժանքալի,

Մեր սրտին:

Կարօսներու դաշնակուրեան տեղ ոսկի,
Պիտի սիրենք երգել ծուխը կնկրուկի.

Տանարներու խորհրդանոյց սեղանին

Տրմուրեան վրայ, յիշատակլ ն քանիլազին

Նուիրուած

Անոնց, ոռոնք մեռան նանանչը լնւսեղ

Ազատուրեան Արծալոյսին ժայտագեղ

Զեսած:

Հողին անլոյս ընդերքին մեջ, անոնք որ
կը բնանան յաւիտենի բունն անդորր,

Իրենց հոգին այլեւս յանձնած աստղերուն

Խորհրդագեղ նանանշներուն պաղպաջուն,

Հոգեհան

Իրենց ցաւով ու կարօսով տրմազին

Պատամունի անուշ խորանը ցեղին

Պիտի ըլլան:

Իրիկուններու տրմուրեան մեջ մքամած,

Լոյսերուն դողն ու նանանշները խըմած

Հոգիս, բնարիս լաւերուն վրայ, անպատու

Պիտի լայ ձեր տառապանիները, տրում

Շետերով,

Պիտի տրովիկ սիրոքս կուրծիս տակ քատուն,

Սարսափիներու ու մահերու ալ սինհուն

Խռովյով:

ՎԱՂԻՆԱԿ ՊԵՔԵԱՐԵԱՆ

Ամիս-Ապասպան



ԳԻՇԵԲԱՇՐՋԻԿԻՆ ԵՐԳԸ

Ի՞շի՛ր, ի՞շի՛ր, աղջամուղչ. ևս քու խորունկ ու խրթին խորհուրդները կը սիրեմ. կը սիրեմ, կը սիրեմ անձառ վաեմութիւնը լոին ու խաւարամած զիշերներուն

Օր մը արեգակը պիտի չինոնի, լուսնակը պիտի խաւարի, աստղերը պիտի թափին, տառալ պիտի ըլլան՝ իրենց շուրջը թաւալող մոլորակներուն և արբանեւակներուն հետ Ռւ լոյսը, որ այնքան ջերմեւանդօրէն պաշտուեցաւ ու կը պաշտուի, օր մը պիտի մարի վերջապէս Դուն միայն ո՛վ օգոստափառ պատարազիչ նուիրական Նիրվանային, գուն միայն կառ ու պիտի մնաս յաւիսեան Դուն միայն անմահ ևս ու անպարփակ, անսկիզը ու անվախճան՝ տիեզերքին և ժամանակին նմանակ.

Ի՞շի՛ր, ի՞շի՛ր, աղջամուղչ. լուսարադիկ տենչանքներս կը հալածուին կարօտէդ, և բիբերս կ'այրին, կը հալին մթութեան բարկ ծարաւէն Սիրաս քեզի՛ կը բացուի....

* * *

Ալեհեր Արքան, կ'ըսէ վհակին հէքեաթը, կարդաց ու թափանքով փակեց զիրքն իր մազալախէ, զոր քառասուն իմաստուններ քառասուն տարիներու ընթացքին յաջողած էին զրել, մարեց շողշողուն ջահերն իր մարմարակերտ պալատին շքեղ ու սսկեծեղուն դահ-

լիճին, փշրեց մականը, փշրեց թագն իր յակնթայեռ, ու քու տիրապետութիւնդ հոչակեց իր ժողովուրդներուն:

Կրօնանուէր ճգնաւորն իր ճգնարանը լքեց՝ երկնային ու գերբնական զօրութիւններու մնանկութիւնն արտասուելէն:

Եւ կեանքին հանճարեղ բանաստեղծը խորտակեց իր քնարը, որուն ողբաձայն լարերն ուրախութենէ կամ հրճուանքէ չի՛ թրթը-ուացին բնաւ:

Իջի՛ր, իջի՛ր, աղջամուղջ, ո՛վ մելանուշ խաղաղութիւն, ո՛վ թմբիրի քնքուշ զրդարան.— անոնց արտմահար էութիւնները Մորփէոսին գողարիկ չնորհը կ'աղերսեն, որպէսզի իրենց խոհերուն դառնութիւնները Մոռացումին ծոցը թաղել կարենան:

* * *

Մուրացիկ աղջնակն ի զուր կը բաղխէ գուռը փառայեղ ապարանքին, ուր՝ սնդուսէ վարապոյրներու ետին՝ շպարին կ'երկըրպագուի, պոռնկութիւնը կը յարգուի, մինչդեռ սարալանջի հիւղակին կոյս պարմանուհին, մերժուած ու արհամարհուած, ստիպուեցաւ ինքինքը զետը նետել՝ իր անտանելի թշուառութեանը պատճառաւ: Աղամանդավ և Մարգարիտով բեռնաւորուած կառաւանները կուզան կ'անցնին, առանց ուշագրութիւն դարձնելու ձեռքն անցորդին երկարող անտիրական որբուկներուն, առանց զէթ պատասխանելու զրկուածներու և սովեալներու պթահրաւէր հեծկըլտանքներուն: Բանտերու նկուղներուն խորերը, մարակներու սարսափին և երկաթակուռ շղթաներու ծանրութեանը տակ, անմեղներն ուրիշներուն յանցանքները կը քաւեն...: Ու ո՛չ ոք զիտէ, թէ ո՛ր ժամանակէն ի վեր արդարներն և բարիները կը հալածուին, կը քարկոծուին չարերէն: Ո՛չ ոք զիտէ, թէ ո՛ր ժամանակէն ի վեր աշխարհը կը խոշտանգէ, եղբայրն եղբօրը կը դաւաճանէ, իսկ հայրն որդեսպանութիւնը յանձն կ'առնէ՝ սոսկ իր անձնական շահերուն համար: Կնոջ զիրգ զիրկը վերածուած է զժոխային որովզայթի մը, որ ասպետականութիւնը, զիհ զաղափարներն և խուալները կը խամրեցնէ, կը մահացնէ...:

Իջի՛ր, իջի՛ր, աղջամուղջ, ծածկէ աշխարհը համայն: Ես զիամ, որ քու մէջդ ճշմարիս անաշառութիւնը կ'ապրի և հաւասարութեան սպին կը յածի: Քու մէջդ բոլոր մարդերը — հարուստ թէ

աղքատ, երիտասարդ թէ ծերունի, գեղանի թէ տղեղ — բոլո՛րը,
բոլո՛րն ալ կը նոյնանան, ստուերներու կը փոխուին: Քու մէջդ
նիւթը կը չքանայ, իրերը կը կորնչին, և հոգիներն երկիւղածու-
թեամբ զիրար կ'ողջունեն, կաթողինօրէն զիրար կ'ողջապուրեն:

Տիսմարնե՛ր են պայծառութիւնն և փայլը փառաբանողները:
Տիսմարնե՛ր են ժպիտներուն անկնդութեանը հաւատացողները:

Տիսմարներ չե՞ն Անէանքին երանութիւնն ուրացողները:

Իջի՛ր, իջի՛ր, աղջամուղջ, ով զերագոյն մտածումներու մո-
գական դայեակ, ով մռայլ ու ազգծուածային դիւթանք:

Ա. ԼԵՅԼԱՆԻ

Միսիս



ՄԱԽՐԱՑԻ ԱՎԵՐՈՒԽՆ ՔՅԱ

Մուրաս զետա՛կ, արոգավազ ջուրերուկ
Յորձանիմի նետ տար իմ աղի արցունիներ
Ծոցն Եփրատի լայնաւած, արիւնոս,
Որուն ափանց վրայ մայրս է նսեր:

Մայրս է նսեր յուսաբե՛կ եւ վետակի,
Եր զաւակաց դառն ցաւեն սպաւու.
Խոտնէ իրուր մեր արցունիներն դառն ալի,
Եւ տար բափել տարածխարհի ծովը իսոր:

Մոր արցունիներ ըոգիսնան պիտի նոն,
Եւ այդ ըոգին պիտի պահէ երկինք՝ ու
Մեր տաղապած հոգիները զզենուն
Անոր խորհուրդն իբրեւ օլար սպաւու:

Սզազգեաց մեր հոգինեւն երբ էին
Գահին տազեւ ներկայսնան տիրունակ,
Քերովքեից աշխեւն ալ պիտ' բափին
Յորդ արցունիներ նու ծոցիդ մեզ, ով զետակ:

ՍԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ



ԲԱՆԴՈՒՐԱՆԻՉՄԸ ՊՈԼՍՈՅ ՄԵԶ

Անոնք որ հետեւած են վերջին տասը տարուայ (1903-1918) Պոլսոյ թուրք զրականութեան, անշուշտ սրտի սեղմումով մը դիտած էին թէ ինչպէս նախկին թուրք լրագրութիւնն ու զրականութիւնը հետզհետէ կ'այլափոխուէր, առելի օօլին կը դառնար։ Ամբողջ հրատարակութիւններէն մոլեռանդութիւն կը բուրէր ինչ որ արդէն աղճատուած թուրք մտայնութեան վրայ՝ աւերիչ ներզործութիւններ կ'ընէր։

Համաշխարհային պատերազմի ընթացքին՝ արդէն ահանուեցաւ որ թուրք ախտաւոր մոայնութիւնը, իր հիւանդ երեւակայութենէն բղիած ցնորքները իրականացնելու դիւային մարմաշին մէջ՝ ինչպէս ինքղինքը պատէ պատ զարկաւ և խորտակեց ամբողջ պետութիւնը, և վերջապէս անողոք իրականութեան հարուածներուն տակ գտայինքինքը, կորսնցնելէ վերջ ինչ որ ունէր։

Դիտողներու համար արդէն բացայայտ էր թէ՝ ինչպէս հետզհետէ թունաւոր զաղափարներ կը նկարուէին թուրք հասարակական և պետական օրկանիզմին մէջ, որ չուշացաւ կարձ ժամանակի մէջ իր վտանգաւոր ազդեցութիւնը ի յայտ բերել թուրքիոյ բազկացուցիչ տարրերու հանդէսի Այդ միևնույն ազդեցութեանց տակ սեղի ունեցան հայկական և յունական ջարդերը Այդ չար ողին, ներմուծուած թոյնն էր։ Բանդուրանիզմի (համաթրքութիւն) զաղափարը

վատահ եմ որ մեզմէ շատերը, զեռ որոշ զաղափար մը չունին քանդուրանիզմի մասին, և կարելի է չեն դիտեր թէ այդ զա-

դափարը կարծ ժամանակի մը մէջ որքա՞ն յառաջացած և տիրած էր ամբողջ թուրք մտայնութեան վրայ։ Մեր պոլսահայ մամուլը իր կողքին զործող լուրջ ու կազմակերպուած բանդուրանական շարժման մասին գրեթէ ոչինչ գրած էր, ժամանակին ցնցելու և սթափեցընելու համար Հայութիւնը։ Որքան որ կը յիշեմ «Բիւզանդիոն»ը վերապահօրէն քանի մը յօդուած գրած էր, ուրիշ ոչինչ մինչդեռ Պոլսոյ մէջ Արծօրէն ծրագրուած և լայն սահմաններու մէջ զործող, հուժկու կազմակերպութիւն մը կար։

Հիմա որ թնդանօթները լուած են, կ'արժէ որ իր ընդհանուր գիծերուն մէջ ծանօթացուէր թէ՝ ի՞նչ էր այս շարժումը, որո՞նք կառավարեցին զայն, ի՞նչ արդիւնքներ ունեցաւ. և ո՞ր չափով ազգեց թուրք մտայնութեան վրայ։

Ի՞նչ է ԲԱՆԴՈՒՐԱԿԱԶՄԸ

Խպրահիմ Հիլմի, ծանօթ թուրք գրողը, իր «Արթնցի՛ր, ո՛վ Թուրքիա» անուն գրքին մէջ Դուրանիսթներու երազած հայրենիքը սա պէս կը սահմանէ. Ակ. Պոլիսը իրեն մայրաքաղաք ունենալով, Նոր Դուրանը կ'ոկտի Եղէական ծովէն, կ'ընդգրկէ Փոքր Ասիան, իր մէջ առնելով կովկասն ու Սարապատականը, կասպից ծովուն վրայէն կ'իջնէ Միջին Ասիա, մինչեւ Դուրանի բարձրաւանդակը, Ալթաներու սառուտը։ Սոյն երկրամասը թուրքերու պապենական հողն է, Մայր Հայրենիքն է. այստեղ հաւաքելու և բնակեցնելու է բոլոր թուրքերը։ Պոլսոյ խաղանը պէտք է իշխէ այս միապաղաղ և միատարր թրքութեան, Նոր Դուրանին։

Ահա այս էր նոր հասնող թուրք մտաւորականութեան ազգային իտէալը՝ Համաթրքութիւն, իրենց բառով «Թիւրքականիք»։ Դրաւել Եղէական կղզիներէն մինչեւ միջին Ասիա երկարող ընդարձակ տարածութիւնը, և հոն զանուող ոչ-թուրք տարրը ձուլել և կամ բնաջինջ ընել, այդ երկիրը ամբողջովին լեցնել թուրքերով և դնել. միակ թուրք խաղանի մը մականին տակ վերահաստատել նախկին Ճէնկիլիզներու, Թիմուրներու, նամանաւանդ Օղուզի թուրք կայսրութիւնը իր բոլոր կազմուածքով, մէջտեղ բերել հուժկու զինուորական պետութիւն մը իր բանակով և իր ինքնուրոյն հաղաքակրութեամբ և զրաւել ամբողջ Ասիան վերէն վար, որուն առջեւ պիտի դողար ամբողջ Քրիստոնեայ Եւրոպան։

ԲԱՆԴՈՒՐԱՆԻՉՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒԽՍԿԻՑ ԾԱԳՈՒՄ ԱՌԱՒ

Բանդուրանիզմի գաղափարը նախ ծագում առած է Ռուսիոյ թաթարներուն մէջ։ Անոնք ապրելով քրիստոնեայ պետութեան մը գերիշսանութեանը տակ, շատոնց իրենց մարթին վրայ զգայած էին ստրկութեան ծանր շղթան։ Սակայն թաթարները Պոլսոյ թուրքերէն աւելի մտաւոր բարձր մակարդակի մը վրայ գտնուած ըլլալուն, իրենց մտաւորականներուն մէջ շուտով յառաջ եկաւ աղգայնութեան գաղափարը և անոր յաջորդող անկախութեան ձգտումը։ Առ այդ իրենց կարեւոր նեցուկ կրնար ըլլալ միակ անկախ թուրք պետութիւնը՝ Օսմանեան կառավարութիւնը։

Օսմանեան սուլթաններէն Եալուզ Սէլիմ Եզիպտոսը գրաւելէ վերջ իսլամական իյալիֆայութիւնն աւս առած էր, որով նոր քաղաքականութեան մը հիմը դրուած էր՝ գրաւել և միացնել ամբողջ իսլամաբնակ երկիրները և կազմել իսլամ պետութիւն մը Ալ-Օսմանի մականին ներքեւ։ Ասով մէջտեղ եկած էր Համբիսլամութեան գաղափարը և անոր առընթեր քաղաքականութիւնը, և որ ատկէ վերջ դարձաւ բոլոր օսմանեան սուլթաններու քաղաքականութեան խարիսխը, մինչեւ Ապտ-խւլ-Համիտ թւ։

Ռուսիոյ թաթարներուն մէջ աղգայնութեան զարթնումը կը դուգագիպի Ապտ-խւլ-Համիտ Բ.ի իշխանութեան սարիներուն։ Համիտական բէժիմը չէր թոյլատրեր թաթար մտաւորականներու որ աղգայնական գաղափարներ տարածեն թուրքիոյ իսլամներուն մէջ։

Գաղանի Ազէօրէ Օղու թաթար գերդաստանէն մտաւորական մը՝ Ազէօրէ Օղու Եռասուֆ՝ առաջին անգամ ըլլալով Եզիպտոս հրատարակուող «Իճթիհատ» թուրք ընդդիմագիր թերթին մէջ սկսաւ հրատարակել յօդուածաշարք մը «Իւշ բարզը սիյասէք» (Երեք տեսակ քաղաքականութիւն) խորազրով։ Սոյն յօդուածներով, զրոյք, պախարակելէ եաք համիտեան բէժիմը, կը քննէր թուրքիոյ վերականգնման աղդակները, կը վերլուծէր այն երեք տեսակ քաղաքականութիւնները, զորս կրնային՝ ունինալ թուրքիոյ վարիչները և կ'ընտրէր անոնց մէջէն մէկը, կը թելադրէր անոնց որ այդ քաղաքականութիւնը ընդդրկեն իրը միակ միջոցը թուրքիոյ վերականգնումին։

Առաջին տեսակի քաղաքականութիւնը կրնար ըլլալ համիտամական քաղաքականութիւնը, զոր կը քննադատէր և անիրականալի կը զանէր, և կ'եղրակացնէր թէ աղգայնութեան սոյն դարուն մէջ,

իսլամութիւնը քաղկացնող տարրերը իսլամ ըլլալով հանդերձ՝ ունին իրենց ինքնայատուկ ազգային ձգտումները, հետեւաբար երբոր քիչ մը զարգանան, պիտի ջանան իրենց որոշ իտէալներուն իրականացման ետեւէ ըլլալ, որով անոնք Օսմանեան Պետութեան համար զօրավիզ մը, յենակէտ մը չեն կրնար ըլլալ:

Երկրորդ տեսակ քաղաքականութիւնը զոր կրնային կիրարկել թուրք վարիչները, կրնար ըլլալ օսմանցիական քաղաքականութիւն մը: Ազէօրէ Օղուն կը քննադատէր սոյն քաղաքականութիւնը եւս և կ'եզրակացնէր թէ՝ թուրքիոյ ոչ-իսլամ տարրերը կրօնով և ազգութեամբ տարբերուելով տիրող տարրէն և ունենալով թուրքերէ աւելի բարձր մշակոյթ և քաղաքակրթութիւն ու որոշ ազգային խոէալներ, անոնք օր մը, պատեհ առիթին, պիտի ուզէին թօթափել թրքական լուծը և բաժնուիլ օսմանցիական զերդաստանէն: Հետեւաբար թուրքիոյ համար օսմանցիական քաղաքականութեան մը հետեւիլ եւս օգտակար չպիտի կրնար ըլլալ:

Երրորդ տեսակ քաղաքականութիւն մը կրնար ըլլալ թուրքազգայնական քաղաքականութիւնը Օսմանեան Պետութեան տիրող տարրը թուրքեր էին, սոկայն անոնց մէջ ազգային զգացումը թմրած էր, թուրքերը տիրապետութեան ողնայարն էին, հետեւաբար պէտք էր ցնցել, արթնցնել զանոնք և յառաջ մղել, զարգացնել այդ տարրը որուն վրայ միակ կրնար կոթնիլ Օսմանեան Պետութիւնը: Ասկէ վերջ պիտական քաղաքականութիւնն եւս պէտք էր իր ուղղութիւնը փոխել և դառնալ ազգայնական քաղաքականութեան վը — ինչպէս արդէն կ'ընէին Եւրոպայի բոլոր յառաջազէմ պետութիւնները — որուն ամէն կերպով պիտի օժանդակէին Ռուսիոյ թուրքերը: Այսպէսով վերանորոգուած և ազգային հողի վրայ կազմակերպուած թուրք պետութիւն մը միայն կրնար ուսիրան ըլլալ համաթրքութեան մեծ խոէալի իրականացման:

Ազէօրէ Օղունին սոյն յօդուածաշարքը բոնապետական թէմիմին սրոշ շրջանակի մը մէջ միայն կարգացուեցաւ և չկրցաւ թափանցել ժողովրդական խառերուն մէջ, սակայն, անոնք յուսանատիլ չպիտէին, սպասեցին յարմար առիթին

ԲԱՆԴՈՒՐԱՆԻՉՄՔԻ Ի՞ՆՉՊԵՍ ԹՈՒՐՔԻԱ ՄՏԱԿ

Օսմանեան Աահմանագրութեան հչուակումէն վերջ, Պոլսոյ մէջ յայտնուեցան խումբ մը թաթար մտաւորականներ, որոնց աշ-

քառու դէմքերն էին Ազէօրէ Օղու Եռևսուֆ, Սհմէտ Աղայէֆ, իս-
մայիլ կազբրինսկի. բոլորն ալ ուռսական համալսարաններու մէջ
ուսած և Եւրոպայի մէջ ուսումնին կատարելագործած անձեր։ Ասոնք
Բանդուրանիզմի առաքեալներն էին, որոնց նպատակն էր ցնցել
թուրքերը և անոնց մէջ արթնցնել ազգային ոգին։ Գործի սկսան
մեծ թափով մը։

Այդ ժամանակ սկսած էր համիսլամիզմի գաղափարը իր առ-
ջի կարեւորութիւնը կորսնցնել, և ատոր լրջօրէն յոյս գնոլներուն
թիւը օրէ օր կը նուազէր, հաղիւ կը զանուէին կարեւոր անձնու-
ւորութիւններ, որոնք համոզումով դեռ յամառէին կառչած մնալ
այդ գաղափարին, ինչպէս բանաստեղծ Մահմէտ Աքիֆ։ Պոլսոյ
թուրք մտաւորականութիւնը նւրսական զրականութեամբ անած,
տոգորուած էր աւելի ազգայնական գաղափարներով քան թէ կրօ-
նական։ Ռւրեմն հողը պատրաստ էր, հարկ էր մշակել զայն

Պոլսոյ մէջ կաղմուեցաւ — միշտ թաթար գործիչներու ջան-
քերով — ընդորձակ բրոբանեանցի զործ՝ զանազան բաժանումնե-
րով։ 1. Մամուլ, 2. Բանախօսութիւններ և հրատարակութիւններ,
3. Ինկերակցութիւններ, 4. Ներկայացումներ, 5. Երաժշտութիւն։
Բրոբանեանցի առաջին թափին մէջ խակ թուրք մտաւորականութիւնը
ստուար մեծամասնութեամբ հակեցաւ գէպի Բանդուրանիզմ։ Անոնց-
մէ զատ թաթար գործիչներու շուրջը հաւաքուեցան պետական
ականաւոր անձնաւորութիւններ՝ ծերակուտականներ, երեսիսան-
ներ, բարձրաստիճան զինուորականներ, համալսարանի ուսուցիչ-
ներ, խմբագիրներ, զրազէաններ, բարձրագոյն վարժարաններու ու-
սանողներ, որոնց խոչալն էր Բանդուրանիզմ։

Բրոբանեանտան ամէն ուղղութեամբ սկսաւ աննախընթաց
թափով մը։ Քանի մը տարի վերջ արդէն իթթիհատի կեդրոնը, նա-
խարարութիւնները, — մասնաւորապէս կրթականը և Զինուորա-
կանը — Դուրանիսթներու ձեռքն անցած էին, որոնք սկսան իշխել
Պոլսոյ մէջ։

Ի՞նչ Միջնօթներով Գործեց

Մամուլ. — Պոլսոյ և կարեւոր թրքաշատ կեղրոններու մէջ
սկսան հրատարակուիլ հետեւեալ թերթերը, նուիրուած գուրանա-
կան բրոբանեանցին։

- | | | | |
|---|----|-------|--------|
| 1 | Կ. | Պոլիս | Դուրան |
| 2 | » | Թիւրք | Եռւրար |

- | |
|-------------|
| մեծ օրաթերթ |
| Կիսամսեայ |

| | | | |
|----|----------|----------------|------------|
| 3 | կ. Պոլիս | Թիւրք Տերենեկի | պարբերական |
| 4 | » | Խալզա Տօղրու | շաբաթաթերթ |
| 5 | » | Պիլկի | պարբերական |
| 6 | » | Եենի Մենմուա | շաբաթաթերթ |
| 7 | » | Թիւրք Գատրնը | » |
| 8 | Իզմիր | Քեօյլիւ | օրաթերթ |
| 9 | Գոնիա | Պապալըդ | » |
| 10 | » | Թիւրք Սէօգիւ | » |

Սոյն թերթերուն կ'աշխատակցէին դուրանիստ զրողներ՝ որոնց դվառաւորներն էին Խալիտ Զիյա, Ահմէտ Էմին, Ազա Կիւնտիւզ, Զիա Կէօք Ալփի, Եազուալ Գատրի; Ճէլալ Սահիր, Եահեա Քէմալ, Խսմայիլ Հազզը, Համտուլլահ Սուպհի, Քէօփրիւլիւ Զատէ Ֆուատ, Ահմէտ Ռէֆիք, Ալի Ուլիի, Մէհմէտ Էմին (ծանօթ բանաստեղծ) Սէյֆէտտին Կալիպ, Միւհիտային, Խալիալէ Էտիպ (կին զրով), և ուրիշ գեռ շատ մը նոր զրուներու Սոյն բոլոր թերթերը կը խմբազրուէին պարզ, գլուխահասկնալի լեզուով մը և կը ծախուէին դիւրամատչելի զիներով ու կը խօսէին բուն խակ ժողովուրդին, բոլորին ալ խտէալը համաթրքութիւն էր: Ասոնցմէ զատմի քանի տարուան մէջ հրապարակը ողողուեցաւ թիւրքնի զրականութիւնով մը: Իրենց խտէալը բացատրող զրքոյկներու հեղեղ մը լեցուց հրապարակը, որոնք ձրիի համարմէք զինով մը կը ծախուէին: Նոյնպէս հաստառուած էր մասնաւոր զրատուն մը, որ միակ գուրամիսթ զիրքեր կը ծախէր հառարակութեան, թուրք զիցաբանութենէն առնուած հէքնաթներ, առասպելներ, գլուցաղներզութիւններ, մանկական պատմութիւններ, բանաստեղծութիւններ, աղզային վէպեր, թատերգութիւններ, ուստինասիրութիւններ առատօրէն կը զանուէին հոն:

Սոյն հրատարակութեանց մէջ նշանաւոր են՝ Գըզըլ Էլմա (Կարմիր խնձոր) սպատմաւածք՝ Զիտ Կէօք Ալփի, Եենի դուրան (Նոր դուրան) վէպէ Խալիտէ Էտիպ, Թիւրք Ասզը (Թուրքի քնար) բանաստեղծութիւն՝ Ահմէտ Էմին, Էյ Թիւրք ույսն (Ո՛վ Թուրք, արթընցի՛ր) բանաստեղծութիւն՝ Մէհմէտ Էմին:

Նոյնպէս մէջտեղ եկաւ գոլրոցական դասաղիրքերու շարքեր, բոլորն ալ թուրք աղզայնական ովիսվ զրուած, որոնց մէջ յանուն համաթրքութեան նպատակը զոհուած էր միջոցին: Մանկավարժական որոշ մէթոսներ անանս առնուած էին զիրքերը գուրանապկան խտէալներուն ծառայեցնելու համար:

Պոլսոյ և զաւառի բոլոր դպրոցներուն մէջ մուտք գտած «ՄիԱՓ» (ազգային) ընթերցարաններ, որոնց հեղինակները յայտնի դուրանիսթներ էին ինչպէս՝ Քէօփրիւլի զատէ Ֆոււատ.

Բանախօսութիւն.— Պոլսոյ զանազան կողմերը կը տրուէին բանախօսութիւններ, դպրոցներու, թատրոններու, քլիւպներու մէջ — Համալսարանի սրահը, Տար-խւլ-Շէֆազայի, Թիւրք Օճաղը, Թիւրք Տէրնէկիի, Շարգ, Ֆէրահ, Միլէթ թատրոններուն, կալութա Սէրայլըլար Էուրտին, Միւտաֆաաի Միլիյէի և Տօնանմայի բոլոր սրահներուն և Պոլսոյ բոլոր թուրք քլիւպներուն մէջ — թուրք ազգայնութեան, պատմութեան և զրականութեան վրայ, որուն կը փռւթար երկսեռ թուրք հասարակութիւնը։ Կը խօսէին կարող դուրանիսթներ։ Սոյն բանախօսութիւններուն կը հետեւէին համալսարանի և զինուորական վարժարանի ուսանողները, ինչպէս նաև բոլոր բարձրագոյն և երկրորդական վարժարաններու աշակերտութիւնը, որոնց չկազմուած նկարագրին վրայ վիպային տպաւորութիւն մը կը ձգէին եղած կրակուբոց բանախօսութիւնները, և նորահաս թուրք սերունդը բոլորովին այլափոխուած դուրանական երազներով՝ սկսաւ իր անունը փոխել և բուն անունին կցել հին թրքական անուններ՝ Զիա Ալփ, Շէվքէթ Թօրդուա, Օսման Օղուզ և այլն։

Բանախօսութիւնները կը տրուէին երկսեռ հասարակութեան, մասնաւորաբար հոգ կը տարուէր կանանց յատուկ բանախօսութիւններ, անոնց մէջ արթնցնելու և հրահրելու համար թուրք ազգայնամոլութիւնը։ Միւս կողմէն մհծ զարկ կը տրուէր աղջկանց դաստիարակութեան։

Ծնկերակցութիւններ.— Դուրանիսթները, Պոլիսը քլիւպներու, օճախներու, տէրնէկներու ցանցով մը պատեցին, զրեթէ բոլորն ալ միեւնոյն նպատակով՝ մողվել թուրք երիտասարդութիւնը և զանոնք մարզել ազգայնութեան զաղափարով և ստղորել անոնց խանդու երեւակայութիւնը Դուրանի իտէալով։ Այս ընկերակցութեանց զլիսաւորն էր Թիւրք Օճաղը (Պայազիտի մէջ) որուն նախագահն էր յայտնի զրով՝ Համտուլլահ Առաքի։ Այս օճաղը տիտակ մը լսարան էր, ուր կը տրուէին բանախօսութիւններ՝ զանազան նիւթերու վրայ, և շատ անզամ սինէմայով և մովական լապտերով դուրանի վերաբերեալ տեսարաններ և դէմքեր կը ցուցադրէին։ Թուրք բանաստեղծներու գործերէն կտորներ կ'արտասանէին, տեղի

լունենար նուագ, դուրանական շարժումի պարագլուխներ ամէն միջոցի կը զիմէին ժողովուրդին մէջ արթնցնելու և հրահրելու համար թուրք-աղպային զգացումը:

Հոս, շատ անգամ յայտնի բանաստեղծ Մահմէտ էմին՝ իր բանաստեղծութիւնները ինք անձամբ կը կարդար:

Միւս բոլոր օճառ և քիւպներն ալ ասոր պէս էին, միեւնոյն նպատակով, ծրագրով կը գործէին որոնց վրայ առանձին առանձին խօսիլ չարժեր:

Իւրաքանչիւր օճառ իր քայլերգը ունէր, ասոնց խտէալին և մտածելակերպի մասին գաղափար մը տալու համար թարգմանաբար մէջ կը բերենք «Թուրք Օճաղը»ին քայլերգը իբր նմոյշ.

Մենք թուրք ենք, միշտ ատուլ կը պարծինք,
Ստեղծագործնենէն սկսեալ պատմութիւն ունինք,
Սրտերու մէջ թրքութիւնը սիրով կը բարախէ,
Ուրիշ խտէալ մը չունինք:

Առջեւնիս դրօշ, սրտերնուս մէջ Աստուած, ձեռքերնիս սուին,
Մենք կ'ուզենք ամբողջ աշխարհի տիրանալ.
Այլեւս մեր տաճարը «Թուրք Օճաղը»ն է,
Եւ մեր «Քեապէ»ն ալ բարձր ու լուսաշող՝
— Դուրանն է միակ:

Ներկայացումներ.— Նախկին թուրք թատրոնը կը ձեւափոխուէր: Դուրանիսթները ձեռք առած էին բեմը և նախկին թոյն դաշունական և հեշտաբոյր տռամմերուն յաջորդեցին՝ աղզային, պատմական ներկայացումներու թուրք պատմական կեանքը սկսաւ ներկայացուիլ հանրութեան իր խավաններով, սուլթաններով, իրենց ժամանակի տարապավ, բարքերով, խօսելու և հրամայելու ձեւերով: Դուրանիսթները իրենց նպատակին կը հասնէին, որպէստեւ թուրք ժողովուրդը քունէն նոր արթնցող մարդու մը նման կսթափէր և կը փութար իր աչքովը տեսնելու: իր նախնիքներուն հերոսական անցեալը:

Ամէն ներկայացումէ առաջ յայտնի Դուրանիսթներէն մէկը բեմին վրայէն կը խօսէր հանրութեան ներկայացուելիք տռամին մասին, և կը բացատրէր անոր ողին ու կը զիւթեր ամբոխը իր խօսքին հմայքովը: Հոգեկան այդպիսի տրամադրութեան տակ կ'սկսէր

ներկայացումը։ Երկսեռ թրքութիւնը կը հետեւէր այս ներկայացումներուն հեւիհեւ։ Խւրաքանչիւր թատերախաղ մէկէ աւելի անգամ։ Ներ կը կրկնուէր։

Միջնարարներուն և կամ ներկայացումէն վերջ մոգական լապտերով ժողովուրդին ցոյց կը տրուէր խաղին ժամանակին, անձերուն և տեղերուն վերաբերեալ տեսարաններ, կը տրուէին անհրաժեշտ ծանօթութիւններ, այնպէս որ թատրոնները Դուրանիսթներուն ձեռքը բրոբականտայի դպրոցի մը հանգամանքը առած էին։ Թրքութիւնը ա՛լ սկսած էր արթննալ։

Երաժշտութիւն։ — Դուրանիսթները թուրք երաժշտութիւնը զարգացուցին։ Նախկին արեւելեան մեղկ եղանակներու տեղ, կրակ ու բոց խօսքերու ընդելուզուած, սկսան աշխոյժ, թրթոուն նոր եղանակներ լսուիլ։ Անոնց նպատակներէն մին էր նաեւ հին թուրք երաժշտութիւնը վերակենդանացնել և կազմուեցաւ «Մէհթէրհանէի-իյազանի» անունով երաժշտախումբ մը, միջին դարու թուրքերու տարազով և այն ատենուայ պալատական նուազածուներու կազմով, սովորութիւններով ու նուազներով, որոնք իրենց տարօրինակ տարազով ամէն ուրբաթ օր Թօփ Գափուի հրապարակին վրայ կը նուազէին հին թրքական եղանակներ և շարզըններ, որոնք կ'երգուէին երբեմն սուլթանական պալատներուն մէջ։

Ունէին նորերէն դուրանական երգերու բաժին, որոնք Դուրանիսթներու խոէալը կը ցոլացնէին։ Երգուած երգերէն իբր նմոյշ մէջ կը բերենք կտոր մը թարգմանաբար։

Ո՞վ «Օսմանճըգ»ի Տուն՝ նուլրական հայրենիք, որքա՞ն գեղեցիկ ես... Լեռներովդ սարսափիններ կը սփոհս.

Զմրուխտ դաշտերուդ մէջ ոսկեղէն գետեր կը հոսին,

Անօթի թշնամիններ քեզի նախանձով կը նային.

Մենք թուրք ենք, Դուն թրքութեան աւանդ մըն ես,

Մի՛ վախնար, բոլորս կը զոհուինք և քեզ չե՞նք տար:

Անատօլուի դաշտերուն մէջ՝ գեղին հասկեր,

Լոշկոճուած ձեռքեր ու մերկ սրունքներ...

Անոնք մեր պարզամիտ զիւղացիններն են ու մեր հացին դուռը,

Հացի դրան ծառայել ամէն մարդու պարտականութիւնն է.

Ո՞վ թուրք երիտասարդ, կը բաւէ՛, ալ մի՛ քնանար.

Վազէ՛ զիւղացիին օգնութեան, ալ մի՛ կինար:

Թրքութեան ցաւը շատ դառն է, ալ խօսիլ մի՛ տար,
Սիրադ քար, ապառաժ ալ ըլլայ չի դիմանար.
Դպրոց չկայ, ճամբայ չկայ, տոկոսի չարիքն ալ այրեց մոխիր դարձու ց
Առատութեանց երկիրը — Սուրբ Հայրենիքը
Դպրոցը իր կոնակին վրայ, ճամբան ալ իր ոսկրներով
Պիտի շինէ թուրք երիտասարդը, ա՛լ վճռապէս ուխտեց:

Բանդուրանիզմի առաքեալները կը յաջողէին բրոբականտը
իրենց յուսացածէն աւելի տարածուած էր և աւելի ներգործութիւն
ըրած էր ժողովուրդին խաւերուն վրայ: Հիմա թուրք կրօնամոլու-
թեան յաջորդած էր թուրք աղքայնամոլութիւնը. Պոլսոյ մէջ ամէն
բան սկսած էր Դուրան հոտիլ:

Դուրանիսթներ համալսարանին մէջ կարեւոր աթոռներ գրա-
ւած էին:

Պոլսոյ բոլոր թուրք վարժարաններուն — բարձրագոյն, երկ-
րորդական, նախակրթարան — ուսուցիչներու ջախջախիչ մեծամաս-
նութիւնը դուրանիսթներ եղած էին: Նոյնպէս զաւառի վարժարան-
ներուն ուսուցիչներու կարեւոր տոկոսը թիւրքնի էր:

Եղաւ ժամանակ մը որ համալսարանի մէջ ուսուցչական պաշ-
տօն տոնելու համար դուրանիսթ ըլլալէ տարբեր արժանիք նկատի
չէր աւնուեր Նոյնպէս Պոլսէն զաւառները զրկուած ուսուցիչներու-
մէջ միշտ դուրանիսթներուն նախապատութիւն կը տրուէր:

Կրթական Նախարարութիւնը ձեռքերնին առած էին, նոյնպէս
էվգաֆը, որ անպաշտօն կերպով դրամական նուէրներ կ'ընէր Դու-
րանիսթներուն: Մինակ մէկ անզամ զրեցին թերթերը թէ «Թիւրք
Օճաղը»ին տասնընդհանուր հաղար զրուշ տրուած է:

Բրոբականտը ահազին թափ մը, հեղեղի մը երեւոյթը առաւ,
մանաւանդ պասերազմի միջոցին կարեւոր թուրք թերթերը խա-
փանուած և մնացածներուն վրայ ալ ճիւազային զրաքննութիւն մը
դրուած էր, որով ասպարէլը միայն Դուրանիսթներուն մնացած էր.
ուզածնուն պէս կը շարժէին: Պոլսոյ թուրք մամուլը իրենց համակիր
էր մասամբ, համամիտ չեղողներն ալ, սահմակած՝ դիտողութիւն
չէին կրնար ընել: Միակ գիտողութիւն ընողները եղան Ռիզա Թէ՛լ-
ֆիլ և Ճէլալ Նուրի, որ վերջինս քաւեց իր մեղքը, որովհետեւ
Դուրանիսթները խափանել առին իր թէ՛ «Աթիք թերթը և թէ՛ «Է-
տէպիյաթը Ռւմումիյէ Մէծմուաոը» պարբերականը՝ որ վարչապետին
մասնաւոր հրամանովը միայն թոյլաորուեցաւ վերահրատարակուիլ:

ԴՈՒՐԱՆԻՄԹՆԵՐՈՒ ՏԵՍԱԿԵՑՆԵՐԸ

Դուրանիմթները, ընդունուած շատ մը բաներու մասին տարբեր ըմբռնումներ և հայեցակէտներ ունէին. անշուշտ հետաքրքրական է զիտնալ թէ, շատերու մէջէն՝ թուրք լեզուին և գրականութեան և վերջն ալ նամանաւանդ տարրերու մասին ի՞նչ էր ասոնց տեսակէտը:

Լեզուի մասին. — Դուրանիմթները կը խորհէին որ ազգային զիտակցութեան ամենազօրաւոր ազդակն է լեզուն: Կը հաւատային թէ թուրք լեզուն պէտք եղածին չափ հարուստ է, հետեւաբար պէտք չունի արաբերէնէ և պարսկերէնէ փոխ առնուած ձեւերու և շատ մը բառերու, որոնք հոմանիշ ունին թուրքերէնի մէջ. ուստի պէտք է լեզուէն վտարել այդ ձեւերը և բառերը, ու լեզուն զրել զուտ թուրքերէնով: Մէհմէտ Էմինի «Թիւրք Սաղը» և իր բոլոր բանաստեղծութիւնները այդ ձեւով գրուած են: Արդէն Դուրանիմթները իրենց ամբողջ գրականութեանց մէջ կը ջանային սկզբունքին հաւատարիմ մնալ, մասնաւորապէս «Թիւրք Եռւրտը» պարբերականը կը խմբագրուէր այդ ձեւով:

Իրենց կարծիքով, լեզուին մէջ արաբերէնէ առնուելով զործածուով շատ մը բառեր արդէն թուրքերէն ունէին, հարկ չկար անոնց արաբերէնը զործածելու, պէտք էր թուրքերէնները ընդհանրացնել, զոր օրինակ՝

| արաբերէն | թուրքերէն |
|--|---------------|
| Մէճիսը Մէպուսան (երեսփոխանական ժողով) | Դուրութայ |
| Մէպուս | (երեսփոխան) |
| Աեան | (աւագանի) |
| և կը հաւատային որ սոյն պարզ թուրքերէնով թուրքը ալ աւելի պիտի զարգանայ և աւելի պիտի սիրէ իր լեզուն: | Գօճալար ևայլն |

Գրականութեան մասին. — Դուրանիմթներու կարծիքով մինչեւ հիմա եղածը զրականութիւն չէր, այլ Պոլսոյ, ապականուածու այլասերած միջավայրի մը արտադրութիւնն էր: Ըստ իրենց, թուրք զրականութիւնը, թուրք հովին և խոհալը ցոլացնելու համար բղխելու էր թուրք դիցարանութենէն, մինչդեռ մինչեւ ցարդ Պոլսոյ մէջ ասոր հակառակ ուղղութեամբ զործած էին: Իրենք աշխատեցան այդ նոր ուղղութեամբ: Ակսան թուրք դիցարանութիւնն ու առասպելները վերակենդանանալ: Այդ ուղղութեամբ հրատարակութեանց մէջ աչքի կը զարնէ հալիտէ իտիպի «Եէնի

Դուրան» վեպը և Զիա Կէօք Ալիի «Դըղըլ էլմա» պատմուածքը։ Դուրանիսթներու համոզումով, անուանի բանաստեղ թէվֆիզ Ֆիք-րէթ թուրք բանաստեղծ մը չէր, այլ «Պոլսոյ բանաստեղծ», որովհետեւ իր ներշնչումները յոյն գիցաբանութենէն քաղած էր։

Տարբերու մասին. — Այդ մասին Դուրանիսթները անողոք էին, ամբողջ Եէնի Դուրանը սկզբաք էր լնակելի ըլլար միմիայն թուրքերով։ Իրենց մէջ և ոչ մէկ տարբեր տարրի գոյութեան կը հանդուրժէին։ արդ, իրերու արամաբանական հետեւանքով Հայոց վերապահուած էր կատարեալ բնաջնջում։ Առ այդ նշանակելի է Խթթիհատի կեդրոնի ազգեցիկ անդամներէն։ Տօքթօր Նազըմի յայտարարութիւնը, ընդդիմադիր երեսիոխան Խամայիլ Հազզը, «Դուք մեզ կը մեղադրէք որ զործ չենք կրնար ընել. քանի մը տարի վ'րջ պիտի տեսնէք որ ամբողջ Անատոլուի մէջ ոչ-թուրք տարր չպիտի մնայ, Անատոլուն պիտի ըլլայ միապաղադ՝ ինչպէս է Ֆրանսան»։ Բացատրութիւնները աւելորդ են (Տես «Միւսավաթ» 1913 թիւ 6):

ՎԵՐՋԱԲԱՆ

Եթէ պատերազմը տեղի չունենար և սկսուած թափովը շարունակուէր Բանդուրանիզմի զաղախաբը, ապազան ի՞նչ անակընկալներ սկահած էր. ատիկա ճշդել լնականաբար դժուար է, սակայն, մէկ կէտ միայն որոշ էր որ մեզ՝ Հայերուս համար ոսկեզօծ ապազայ մը չէ որ կը պատրաստուէր, որովհետեւ թրքութիւնը ահեղօրէն կ'արթնար։

Պատերազմը թուրքիոյ թեւերը կոտրեց. Բանդուրանիզմն ալ իր թափը կորսնցուց՝ որ սկսած էր արդէն լրջօրէն Եւրոպան մտահոգ ընել։

Եւ բազդի ի՞նչ հեղնութիւն, որ ժամանակին Պոլսոյ և բովանդակ Օսմանեան Պետութեան իշխող գուրանիսթ պարազլուխներն այսօր նոյն քաղաքին մէջ բանտարկուած պատերազմական առեսններու առջև կը քաշկոտուին Ասկայն. իրենց բնաջնջումը ծրագրած Հայութիւնը թէիւ ճղակտոր՝ սակայն նորէն իր պատմական դերին մէջն է՝ թառած հայկական բարձրաւանդակին վրայ, լուսաւորութեան ջահը միշտ ձևոքին մէջ բարձր բանած՝ Եւրոպայի համար պահակի գերը կը կատարէ Ասիոյ բարբարոսներուն գէմ։

Յարգանք այդ ափ մը ժողովուրդին և անոր վսիմ խէալին։

Ս Ա - Մ Օ Ւ Թ Ե Վ

Դուք նման եք չհնաղ երկրիս
Սէն-Մօրիցի ազա՞ս լեռներ,
Միակ ընկեր հեզ պանդխտիս
Դուք եք. լեռներ, ծաղկո՞ս մարզեր:

Տարագիր եմ հայրենիքից,
Ռւնի ձեզ պէս նա ել լեռներ,
Երբ գալիս եմ ես ձեզ՝ նորից,
Սիրս են լեցւում պէս-պէս յուշեր.

Դուք երազիս եւ անցեալ ին,
Սէն-Մօրիցի ազա՞ս լեռներ,
Ցուշարձանն իք, եւ ինձ կրկին
Յիշեցենում եք հին-հին յուշեր:

Աս ես մենակ եւ անընկեր
Արմատահան մի ծառի պէս
Թառամում եմ օր ու գիշեր,
Զրկըւելով սերեւներէս . . .

Սէն-Մօրից
1917

ՏԻԿ. ԱՇԽԵՆ ԼԱՀԱՅԵԱՆՑ





ՀԱՅ ԻՏԵԱԼԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

20^ր Ա. Ս.ՀԱՐՈՒԵՍԱՆԻՆ

1876ի այն չարաբասախիկ օրը, որ Համիտ՝ քսաներորդ դարու Ներոնը՝ մահաբոյր սաղրանքներով յաջողեցաւ բարձրանալ Օսմանցիներու արքայական խարխլած գահը, այդ անխծեալ օրէն սկսեալ Երլարզը՝ ոճրածին մարդ-զազմններու արիւնաբոյր ործը՝ բռնակալներու և անոնց պնակալէզ արբանիակներու յատուկ սաստկութեամբ ու հեղնական թօնով, անդադար որոտաց սին պատգամներ՝ ի դէմ անհաւատ հայ ժողովուրդին, «բանտ, աքսոր և կախաղան՝ սիստէմաթիք ջանքերով պէտք է հալածել հայ լեզուն ու ստեղծագործ միտքը, որ արդարութիւն կը թախանձէ, ու պէտք է տանջել հայ սիրտն ու հողին, որ կեանք ու արնւ կը բաղձայ»:

— Գետնափոր, տամուկ նկուզներուն մէջ աղօտ լոյսեր պըլ-պըլացին և՛ւ ձմրան ցուրտին և՛ւ ամրան տօֆթին, ու թաղուած ժայռու վրայ, Մեծ վարդեաներ, հաւատաքին ուժովը զօանպնդուած ու յոյսին արփակեղ երաղանքներով արբշիո, հանդարտ բայց ամեհիօրէն, անջնջելին՝ հայ խոչալը՝ քանդակեցին, Մեսրոպեան լուսածիր տառերով։

Ու Ստամպօլի շնարարոյ տէրերը և իրենց ստրուկ դարձած խլամ վոհմակները, ամբողջ քառորդ դար ոռնացին. «Ճարդ, արիւն ու աւեր՝ պէս պէս զահանդանքներով պէտք է սարսափեցնել հայ ողպազ, որ ազատութիւն կ'երագէ»։

— Հեռներու ձիւնածածկ կատարներուն վրայ արագառլաց արծիւներ թառեցան, և սաւնապառ ձորերու մէջ թիկնող կորիւններ բոյն դրին: Յոդնած և յուսաքեկ ճամբորդներ, որ խաւարէն խարխափած և հալածանքէն սարսափած կը քալէին շիրմաստաններէն, նշմարեցին ըմբոստութեան խարոյկը լեռներուն, որուն բոցերը կաս-կարմիր էին, ու բացականչեցին: «Ո՛ զարմանալի, օ՛ հրաշալի տղաք»:

Ու Երլարզի արիւնկղակ բորենիւերը — Էնվէր-Թալաաթներ — այս անզամ մշակեցին և հրամայեցին զործադրել հրէշային, ձիւաղատես ծրազիրներ, որ երբէք իժերու, զազաններու և հիդրաններու թունաւոր ուղեղներուն բջիջները խառնուած կրնան ծնանիլ. «Տարազրութիւն, սպանդանոյ ու գեհեն, պէտք է խազառ բնաջրջել հայ ցեղը, որ անհամար դարերու քանդիչ յործանքներուն կուրծք սուած, զերմարդկային ճիզեր կ'ընէ փշրելու իր ոտնակապ երկաթիւայ շղթաները ու զրկելու Ազատութիւնը: Այո՛, հինգ տարեկանէն վեր հայ անուն կրող բոլո՛ր, բոլո՛ր մանուկները պէտք է սրախողխող մահացնե՛լ՝ որ Թուրքիան ազատի հայկական հարցի մղձաւանջէն, էրզրումէն հնչած ձայներէն, ու խալամի մահիկը վայլի յարեւելից՝ փոխան խաչին»: Մ'ըրկածին հրաչափ պարմաններ և լուսադէմ, զեղանի ամազոններ, Եփրատ-Արաքսի ջուրերով հանակ առած, և Վարագ-Արագածի սուրբերու անունով ուխտուած՝ վարդակարմիր հորիզոններու հմայքներու կարօտ, և քինոտ վրէժխընդրութեան վայրկեաններուն ծարաւի, հայ կուսութեան մարմարեայ անբիծ պատիւին համար և հայ փառքին զեղեցկութեանը համար, զուսպարայաղթ խոյանքներով, խտոնեցին իրենց բոսոր արիւնը աստուածներու արիւնին հետ, անմահութեան սկիհին մէջ, ուրկէ՝ զալիք սերունդներ, անյազօրէն, պիտի ըմպեն հիւթերը զերմարդոց հոգիին, և հայ իտէալը յաղթանակեց վսեմօրէ՛ն, փառապանծօրէ՛ն, ամեհիօրէ՛ն:

Ու ականջ տուէք դահիձներու կազկանձիւնին ու թուրք խուժանի վայնասունին. «Ո՛հ, Հայաստան, Կիլիկիու զային ձեռքերնէս. վա՛յ մեր զլխին»:

— Ո՛, ևս կը լսեմ յաղթական ստնածայնը մեր տղոց, որ կ'անցնին հայրենի սարալանջերէն դէպի քանդուած սրբառեղինները իմ ցեղիս, ու անոնց կը հետեւին որբերը՝ ծալիկիունջերով, այրիները՝ աղօթքներու մրմունջներով ու ժողովուրդը համակ՝ զոտ կեցցէններով: Խունկ, մեղեղի, արցունք ու ժապիտ իրար կը խառնուին

սրբակառոյց գմբէթներուն տակ, ու մելանուշ զանգակներու դօզանջները կ'արձագանգեն Հայաստանի բուրումնաւէտ ծոցէն. «Ազատ ենք այլեւս, և յաւէտ ազատ պիտի մնանք»:

Ու հաւատացէ՛ք, որ վեց դարու մեր մեռելները ծափ կուտան իրենց ցուրտ հողակոյտիրէն:

Նիկոսիա

ՏՕՔԹ. Ռ. ԹԱԳԻՈՐԵԱՆ



Հ Յ Ո Ճ Ե Վ Տ

(ՍԻՐՈՅ ԳԱՐԵՒՄ ՎԵՐՋԻՆ ԷԶԸ)

ՊԱՐԻԿԻ ՄԸ ՈՐ ԵՍ ԱՅՆՔԱՆ ՍԻՐԵՑԻ.

Ծաւրեցի, ու զայն կ'ուղղեմ հասցեխիդ,
Զերդ ծաղկի փունջ մ'որ բոյն ունի եւ ժպիս,
Հոգիին՝ զայն բռւրաստանեն բաղեցի,
Դոյզըն նրւեր մե՛զ՝ ո՞վ պարիկ, ո՞վ նուրի:

Ես հո՛ն դրի սերս ամբողջ կիրքս ժան
Տենջ սնիլս բոց ու երազներս արգաւանի,
Նովսանձս, արցունիս, հեծիլտութներս յուսանաս
Թաքրափեցի այդ եզերուն մեջ առաս:

Պիտի կարդաս, չի հասկընաս պիտի, դուն,
Մռայլ իմաստն նոն գալարուող ցաւերուն,
Պիտի մեկդի նետես, հազիւ մեղմ յուզմունք
Թը հոգիեղ ներս սպրդած. տիբ մ'արցունք


Հազիւ սահած այժերեկ վար. զի հոգիդ
Մանուկ է դեռ զգալու սերն այնքան բիրտ:
— Օր մը, սակայն, պիտի բանաս զայն նորեն,
Եւ պիտ՝ կարդաս. ու այս անգամ տարօրեն

Յուզում մ'հոգիդ պիտի գրկէ, պիտ՝ յիշես
Տժգոյն տղան որ քեզ սիրեց խենթի պէս,
Որուն, սակայն, դուն չի նանշցար սիրտն համբուն,
Չի շափեցիր խորունկութիւնն իր սիրոյն....

Պիտի յիշե՞ս, ոզեկոչես անձկօրեն
Սէրը անոր, զիրզ անցեալիդ ընդմեջեն,
Բայց սիրոյդ տեղ անոր սրտին մեջ անծիր
Պիտի գտնես սեւ աւերակ, պալ մոխիր....

Մ. ՌՍԿԵԱՆ





DEPARTMENT OF STATE
WASH. D. C.
MAY 1945



ՌՈՍՈՒ

(ՍՏԵՓԱՆ ԶՕՐԵԱՆ)

Գուղափարի ճամբուն վրայ մեծ եւ լուսավառ
արշալոյներու կարօսով անձկայրեաց
վերջին մեծ զոհիք



ՄԵՐ ԶԱՀԵՐԻ

Մենք կը սիրենք երզը գեղջուկին, կը սիրենք գեղը բնութեան, ծաղիկը մարգերուն, կը սիրենք լոյսը և մանտանդ ջահակիրներն այն հաւատքին՝ որ հայ ցեղը կոթողեց ամրակուռ, այն յոյսին՝ որ սահմիրան եղաւ և այն զազափարին՝ որ մեր մթամած հորիզոնը միշտ շողարձակ պահեց. ու այսօր, ընկճուած, յոզնաբեկ՝ կ'աւաղենք կորուստը այդ ամենուն Ո՛չ ոք կը հպանցի մեր վէրքերուն, ոչ ոք կ'սփոփէ մեր վիշտը և այս ինքնալքումի պահուն դարձեալ անոնց յիշատակն է որ մեղ կը զօդէ կիանքին ու մեր ուղին կը բանայ դէպի ապագան:

Կը տեսնե՞ս, Հայորդի՛, որ մեր գեղօնները գողօններ են դարձեր, մեր ջահակիրները ջահերու ալէս կը վառին անծանօթին մէջ և մեր խաւարակուռ ճամբան կը լուսաւորեն Ո՞ւր են Վարուժան, Սիամանթօ, Զարդարեան, Ակնունի, Զօհրապ և ամէնը, ու ամէնը անհամար։ Մին արուսեակ է դարձեր, մին՝ երեւակ, մին լուսնի պէս անդունդն ի վար կը հայի, մին զերթ արեւ՝ աչքեր կը խատացընէ. ջահեր ամենքն ալ՝ որ երբենն ջահակիրներ էին:

Երբ կ'զգաս թէ քայլերդ կը խարխափին տարտամին մէջ, նայէ՛ անոնց, Հայորդի՛, երբ կ'զգաս թէ հոգիդ կ'ալեկոծի անծանաշին ի խնդիր և դատողութեանդ նաւը կը վարանի յործանուտ ալիքները ճեղքել և նաւահանգիստ հանգրուանել, նայէ՛ անոնց։

Նայէ՛ անոնց երբ ցեղին սիրտը կ'ուզես տեսնել. Նայէ՛ անոնց երբ դիւցազնութիւնը, փառքը և վեհութիւնը կ'ուզես պատկերել ներկայ ընչաքաղաց նենդ ու հեղդ մարդկութեան դիմաց։

Ո՞ր մէկ սրբութեան ուխտաւոր առելի ջղուտ, տոկուն և վսեմ եղաւ քան անոնք՝ որ տիեզերական վեհագոյն մտատիպարը՝ պատիւը և ճշմարտութիւնը՝ մինչեւ վերջ և մինչեւ աստղերը բարձր բռնեցին։ Եթէ արար աշխարհ անգէտ է և անտարբեր, կուն, Հայորդի՛, ծառացի՛ր անոր դէմ և ցոյց տուր թէ ի՞նչ կ'արժէին մեր ջահակիրները, զաղափարի կարապետները, որոնք այսօր այլեւս չկան, բայց անմահութեան ջահերուն պէս մեծափայլ կը վասին պիղծ հոգիներու դէմ յանդիման, ու մեզ դէպի իրենց կը ձգտեն։

Որքա՞ն բարձր կը շողան մեր ջահերը, ինչպէ՞ս պիտի նաւենք, սուրա՞նք դէպի վեհը. բայց պէտք է, պէտք է սլանանք յարատեւ, զի այսպէս կ'ուղեն անոնք, մեր ջահերը, Հայորդի՛, այսպէս կը պատզամեն լուսաբարբառ։

Մարտէյ, 1919

Թ. ԵՂԻՉԵ



ԹԱԳՈՐ ՍԵՆԵՆԱ

Ո՞վ չենալ կոյս, կը փափաք՞ս
Հանգեցնելու զլուխըդ կուրծիս.
Իմ սրտիս մէջ խոր, անյատակ
Սենեակ մը կայ պայծառ ու տաք,
Ուր ես լրեռած, ո՞վ չենալ կոյս,
Կ'ապրիմ մինակ, անտէր, անյոյս...
Չորս պատին մէջ այդ սենեակին
Յարմար տեղ կայ մեր երկուքին։

Չա՞ս աղջիկներ եկան բացին
Անցուդի պէս դուռն առանձի՞.
Բայց այցին իրենց անձան, աներգ
Սենեակն այդ իմ՝ դարձուցին մե՞րկ,
Ուր ես լրեռած, ո՞վ չենալ կոյս,
Կ'ապրիմ մինակ, անտէր, անյոյս...
Չորս պատին մէջ այդ սենեակին
Յարմար տեղ կայ մեր երկուքին։

Բայց անցորդի պէս չըլլալ որ
Ուզես անցնիլ գոնեն անոր.
Դուն ինձ համար մայր ես քէ քոյր,
Իմ որբ կեանքին ընկեր եկուր.
Եկուր, հոգի՛ս, արագընթաց
Արեգակը մար շմտած
Վազէ՛ եկուր, կուենք դաշինք,
Նոյն յարկին տակ մեկտեղ ապրինք.

Աղմբկայոյզ ու բազմամարդ
Սրբահ մը չէ՛ օֆեղազարդ.
Պարզ եւ անօռէ, անսեթեւեք
Սենեակ մ'է փոքր — բայց օդաւէս —
Խրնիրին մեջ իմ հեք հոգւոյս,
Ուր պատկերս լոկ, ո՛վ չբնալ կոյս,
Պիտի գտնես... Անոր կողէին
Պիտի կախեմ պատկերդ բուկին.

* Եկուր, ո՛վ կոյս, որ ըլլայ լոյս
Խրնիրին մեջ իմ հեք հոգւոյս,
Քեզմով միայն ամեն բան հոն
Պիտի ունենայ կարգ ու կանոն.
Պիտի տխուր չըլլամ ա՛լ ես
Թէ որ երջանիկ տեսնեմ քեզ...
Իմ սերս ահա, չբնալ հոգի՛ս,
Միակ զարդը Սիրս-սենեկին...

Հենրիկ Իբսեն
Գ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

HENRIK IBSEN





ԿՈՅՐԵՐԸ

(ՊԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ)

ՀԵՂԻՆԱԿ
ՄՈՐԻՍ ՄԵԹԵՐԼԻՆԿ

ԹԱՐԴՄԱՆԵՑ
Վ. ԳԵՂՐԳԵՅՆ

ԱՆՁԵՐ

ԵՐԵՑԸ

ԵՐԵՔ Ի ԾՆԷ ԿՈՑՐԵՐ
ԱՄԵՆՀՆ ՏԱՐԵՑ ԿՈՑՐԸ^Ը
ՀԻՆԴԵՐՈՐԴ ԿՈՑՐԸ^Ը
ՎԵՅԵՐՈՐԴ ԿՈՑՐԸ^Ը
ԵՐԵՔ ՏԱՐԵՑ ԿՈՑՐ ԿԻՆԵՐ ԱՂՕԹՔԻ ՄԵԶ
ԱՄԵՆՀՆ ՏԱՐԵՑ ԿՈՑՐ ԿԻՆԸ^Ը
ԴԵՌԱՏԻ ԿՈՑՐ ԿԻՆԸ ՄԸ
ԿՈՑՐ ԽԵՆԴ ԿԻՆ ՄԸ

Հիւսիսային շատ հին անտառ մը, յաւէրժական տեսքով,
աստղագարդ երկինքի մը տակ կէս զիշերին և զիշերուան տարածամ
պահուն, ալիւոր քահանայ մը սեւ կրկնոցի մը մէջ փաթթուած նստած
է: Իրանը և զլո խը թիթեւօրէն հակած ու մահացուօրէն անշարժ՝
կը կաթնի հոկոյ և անձաւու կալնիի մը կոճղին Դէմքը մեղրամամի
անյարիր գալիւթիւնը ունի, որուն վրայ կը բացուին իր մանիշա-
կագոյն շրթունքները Աչքերը ան' ինդան և սեւեռուն՝ երբեք յոյսի
նշոյլը ցոյց չեն տար, և որոնք կը թուին հեռաւոր անցեալի անվերջ

վիշտերով և արցունքներով արիւնոտած ըլլալ։ Զիւնասպիտակ մօրուքը ցանցառ ոլորներով դէմքին վրայ կը թափի՝ որ աւելի պայծառ է և յոգնած՝ քան զինք չրջապատող անտառին ամբողջ մուայլ լոռութիւնը։ Վատիտ ձեռքերը փայտցած՝ միացած են իրարու՝ երանքներուն վրայ։ Ա.ջ կողմը, վեց տարեց կոյրեր նստած են քարերու, փայտերու և չոր տերեւներու վրայ։ Ճախ կողմը, իրարէէ բաժնուած արմատախիլ ծառերով և ժայռերու խոշոր կտորներով՝ նոյնպէս վեց կոյր կիներ՝ նստած են տարեց կոյրերուն դէմ։ Իրենցմէ երեքը կ'աղօթեն ու անընդհատ կ'ողբան խուլ ճայնով մը։ Ուրիշ մը շատ տարեց է։ Հինգերորդը, համրի և խելազարի երեւոյթով՝ ծնկուըներուն վրայ։ Նիրհած մանուկ մը կը կրէ։ Վեցերորդը շատ երիտասարդ է, վարսերը մարմնոյն շուրջ կը ծփան Տարեց կոյրերու նման անոնք ալ մութ ու լայն համազգեստներ հազած են։ Շատերը կ'սպասեն արմուկնին կոթնցուցած իրենց ծնկուըներուն և դէմքերնին իրենց ձեռքերուն մէջ, և ամենքն ալ անօգուտ շարժումի մը վարժութիւնն իսկ կորսնցուցած ըլլալ կը թուին։ ու կղզին հեղձուցիչ և մտահոգող մոնչիւնին զլուխնին իսկ չեն դարձներ։ Տխուր խոշոր ծառեր, զեղձիներ, լալկան ծուռիներ և նոճիներ իրենց հոծ հոլանիին տակ կը ծածկեն զանոնք։ Օղիններու վախտ թաւուտ մը կը ծաղկի Երէցին շատ մօտը, զիշեր ատեն։ Արտակարգորէն մութ զիշեր մըն է, հակառակ լուսնի, որ հոս հոն կարծես կը ճգնի փարատել պահիկ մը՝ սաղարթներու խաւարը։



- Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Տակաւին չեկա՞ւ։
Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Սրթնցուցի՞ք զիտ
Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Ես ալ կը քնանային
Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Տակաւին չեկա՞ւ ան։
Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Ոչ ոքի զալը կը լսեմ ես։
Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Ժամանակ է որ կուրանոց վերադառնանք։
Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Հասկնա՞նք, ուր կը գտնուինք մենք։
Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ. — Անոր մեկնելէն ի վեր կը ցրտէ։
ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Որ և է մէկը զիտէ՞ թէ ուր կը զտնուինք մենք։
ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Շատ երկար քալեցինք, կուրանոցէն բաւական հեռու պէտք է ըլլանք։

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Օ՛, կիները մեր դիմա՞ցն են
ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ. — Մենք ձեր դէմը նստած ենք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Սպասեցէք ձեր մօտը զամ, (կը կանգնի
եւ կը խարիսխիկ) ո՞ւր էք, խօսեցէ՞ք որ իմանամ թէ ո՞ւր կը
գտնուիք դուք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ. — Հոս՝ քարերուն վրայ նստած
ենք մենք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — (Կը յառաջանայ, ծառին կոնդին ու ժայ-
ռերու կտորներուն կը զարնուի.) Մեր միջեւ բան մը կայ...

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Աւելի լաւ է որ իւրաքանչյուրս գտնը-
ւած տեղերնիս մնանք:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Ո՞ւր նստած էք դուք: Կ'ուզէ՞ք մեր
մօտը զալ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ. — Մենք չենք համարձակիր
ոտքի կանգնիլ:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Երէցը ինչո՞ւ համար մեզ իրարմէ բաժնեց

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Կիներու կողմէն աղօթքի ձայներ կը
լսեմ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Այո՛, երեք տարեց կոյր կիներն են որ
կ'աղօթեն:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Աղօթելու ժամանակը չէ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Պահ մը վերջ արդէն ննջարանը պիտի
աղօթենք: (Երեք տարեց կոյր կիները կը տարունակեն իրենց աղօթքը):

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Կ'ուզէի հասկնալ թէ որո՞ւ մօտ նստած
եմ ես:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Կարծեմ թէ ես մօտղ կը գտնուիմ: (Իրենց
տուրքը կը տօսափեն):

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Իրարու չենք կրնար դպչիլ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Սակայն և այնպէս իրարմէ հեռու ալ
չենք: (Եր տուրքը կը տօսափիկ եւ ձեռքի ցուպով հիմներուդ կոյրին
կը դպչի՝ որ կ'սկսի նշալ խուլ կերպով): Խուլը մեր մօտն է:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Ամբողջին ալ ձայնը չեմ լսեր. քիչ առաջ
վեց հոգի էինք մենք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Հիմա կ'սկսիմ հասկնալ. կիներն ալ հար-
ցաքննենք, անհրաժեշտ է զիտնալ թէ ինչ պարտինք ընել. տակաւին
երեք կոյր՝ կիներուն աղօթելը կը լսեմ. արդեօք միասի՞ն են
անոնք:

**ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ. — ԱՆոնք իմ քովս՝ ժայռի մը
վրայ նստած են:**

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ես չոր տերեւներու վրայ նստած եմ:
Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Հապա զեղանի կոյր կինը, ան ո՞ւր է:
ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ. — Ազօթողներուն մօտն է:
Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ո՞ւր է խենդն ու իր զաւակը:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑ ԿԻՆԸ. — Կը քնանայ, մի՛ արթնցնէք՝ զինք:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ո՛հ, որքան հեռու կը գտնուիս մեզմէ,
ես ճիշդ մեր դիմացը ըլլալ կը կարծէի քեզ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ինչ որ պէտք է զիտենք զրեթէ. մինչեւ
Երէցին վերադառնալը խօսինք քիչ մը:

**ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ. — Երէցը մեզ յանձնարարեց որ
լոռթեամբ սպասենք զինք:**

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Եկեղեցիի մը մէջ չենք գտնուիր:
**ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ. — Դուք չէք զիտեր թէ ուր
կը գտնուինք մենք:**

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ես կը վախնամ, երբ ա՛լ չեմ խօսիր:
Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Դիտէ՞ք թէ ուր զնաց Երէցը:
Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ինձի կը թուի թէ ան մեզ շատ երկար
երեսի վրայ ձգեց:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Շատ ծերացած է կ'երեւի թէ ժամա-
նակէ մը ի վեր մեզի պէս ինք ալ չի տեսներ. չուզեր խոստո-
վանիլ ասիկա, այն վախով թերեւս՝ թէ մէկ ուրիշը կուզայ մեր
մէջ զրաւել իր տեղը. բայց կ'երկբայիմ թէ ա՛լ չի տեսներ. մեզի
ուրիշ առաջնորդող մը պէտք է, ան այլեւս չի լսեր մեզ, իսկ մենք
այսօր բազմաթիւ ենք. Միայն երեք կրօնաւորուհիները և ինք կը
հսկեն կուրանոցին վրայ և անոնք ամենքն ալ մեզմէ աւելի ծերա-
ցած են. Համոզուած եմ թէ մեզ մոլորեցուց և հիմա ճամբայ մը կը
փնտոէ: Ո՞ւր զայած է արդեօք: Մեղ հոս ձղելու իրաւունք չունի:

**ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑԸ. — Շատ հեռուները զնաց. կը խոր-
հիմ թէ լրջօրէն խօսեցաւ. կիներուն հետ**

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Կիներէն զատ ո՛չ ոքի կը խօսիր Արդեօք
մենք գոյութիւն չունի՞նք: Ի վերջոյ այս մասին զանզատիլ հարկ
պիտի ըլլայ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑԸ. — Որո՞ւն պիտի զանզատիք:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Դեռ չեմ զիտեր. կը տեսնենք, կը տես-
նենք: Բայց ո՞ւր զնաց ան կիներուն է որ կը հարցնեմ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Երկար քալելէն յոգնած է, ինծի այնպէս թուեցաւ թէ պահ մը մեր մէջ կը գտնուէր ան Քանի մը օրէ ի վեր շատ տկար ու շատ տխուր է. բժիշկին մահէն ի վեր կը վախնայ: Առանձին է, ու զրեթէ երբեք չի խօսիր: Չեմ զիտեր թէ ինչ պատահած է. բացարձակապէս դուրս ելլել կ'ուզէր, կ'ըսէր թէ կը փափաքէր վերջին անգամ մըն ալ տեսնել կղզին՝ ճմեռը հասնելէն առաջ, արեւին տակ: Կ'երեւի թէ ճմեռը աւելի երկար և աւելի խիստ պիտի ըլլայ և թէ հիւսիսէն արդէն սառնամանիքներ կը տեղան: Շատ մտահոգ է, կ'ըսեն թէ այս վերջին օրերու ընթացքին պատահած մեծ փոթորիկները զետին ողողումը յառաջ բերին ու խորտակեցին բոլոր թումբերը. կ'ըսուի նոյնիսկ թէ ծովը ահարեկած է զինք, կ'երեւի թէ առանց պատճառի կը տազնապի ան, և թէ մանաւանդ կղզիին շուրջը գտնուող խարակները այնքան բարձր չեն այլեւս: Ան տեսնել կ'ուզէր, բայց ինչ տեսած ըլլալը չիմացուց մեղի: Կը խորհիմ թէ խենդին համար հաց և ջուր բերելու գնաց: Մեզի ըսաւ թէ շատ հեռու երթալ հարկ պիտի ըլլար և թէ սպասել պէտք էր:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Մեկնումի պահուն բռնեց ճեռքերս, խեկ իր ճեռքերը կը դողդողային, կարծես թէ կը վախնար: Եւ յետոյ՝ համբուրեց զիս . . .

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ո՞հ, ո՞հ . . .

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Իրեն հարցուցի պատահածը, պատասխանեց թէ բան մը չէր զիտեր, ի վերջոյ յարեց թէ ծերերուն ախրապետութիւնը վերջանալու մօտ է թերեւս . . .

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ի՞նչ ըսել կ'ուզէր այդպէս խօսելով.

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Զկրցայ հասկնալ զինք. ինձ ըսաւ թէ փարոսին կողմը կ'երթար:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Փարոս մը կայ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Այո՛, կղզիին հիւսիսային կողմը՝ ուրկէ հեռու չենք, կը կարծեմ: Ինծի կ'ըսէր թէ մինչեւ հոս լապտերին պայծառ լոյսը կը տեսնէր, սաղարթներուն մէջէն: Այսօրուընէ աւելի տխուր տեսած չէի զինք, կը կածեմ թէ քանի մը օրէ ի վեր կուլայ ան, ես ալ լացի, չեմ զիտեր թէ ինչու, առանց զինքը տեսնելու: Ես շանցի իր հեռանալը, չհարցուցի բնաւ իրն: կ'ըսեն թէ ան լրջօրէն կը ժպտէր, կ'զգայի թէ կը փակէր իր աշուըները և թէ լուռ մնալ կ'ուզէր:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Այս բոլորին նկատմամբ բան մը չըսաւ մեղի:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Դուք չեք լսեր զինք, երբ կը խօսի:
ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Դուք ամենքդ ալ կը մըրթ-
մըրթաք անոր խօսած ատենը:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ան միայն «զիշեր բարի» ըսաւ մեզի, երբ
մեկնեցաւ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ժամանակը անցած ըլլալու է:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Երկու, երեք անգամ «զիշեր բարի» ըսաւ
մեզի գացած ատեն, կարծես քնանալու կ'երթար լսեցի զինք, զիս
դիտելով կ'ըսէր. «Դիշեր բարի, զիշեր բարի». Մէկը երբ շնչտակի
կը դիտեն՝ ձայնը կ'այլայլի:

Ե. ԿՈՅՐԸ.— Գթացէք անոնց վրայ որ չեն տեսներ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ո՞վ է ան որ առանց պատճառի այսպէս
կը խօսի:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Խուլն է, կը կարծեմ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Մուրալու ժամանակը չէ, լոեցէք:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Հաց և ջուր բերելու համար ո՞ւր զնաց
սակայն ան:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ծովին կողմը:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Այդ տարիքին մէջ այդպէս ծովին կողմը
չեն երթար:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ծովին մօտ ենք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Այո՛, լուռ կեցէք վայրկեան
մը և ահա պիտի լսէք ծովին ձայնը, կոհակներու խուլ մանչիւնը՝
խութերուն վրայ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ես միայն երեք ծերերուն աղօթելը կը
լսեմ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ուշադրութեամբ մտիկ ըրէք
և իրենց աղօթքին մէջէն պիտի լսէք ծովին մանչիւնը:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Այո՛, բան մը կը լսեմ միզի մերձ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ան քնացած էր և ահա
կ'արթնայ կարծեմ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ան սխալ մը կործեց մեղ հոս բերելով.
չեմ փափաքիր լսել այս աղմուկը:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Լաւ զիտէք թէ կղզին մեծ չէ և
թէ կուրանոցի որմափակէն դուրս՝ կը լսուի ծովին ձայնը:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ինձի կը թուի թէ այսօր մեզի մօտ է
ան, բայց մօտէն չեմ սիրեր լսել ծովը:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Ոչ ալ ես, ասկէ զատ մենք չենք
փափաքիր կուրանոցէն դուրս ելլել:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐԸ.— Երբեք մինչեւ հոս եկած չէինք, ապար-
դիւն բան է մեզ այսքան հեռուները բերել:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Այս առառւ օդը շատ պայ-
ծառ էր, Երեցը՝ ամբողջ ձմեռը կուրանոցին մէջ արգիլափակելէ
առաջ՝ ուղեց մեզի ըմբոշխնել տալ արեւին վերջին օրերը:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Բայց ես կը նախընտրեմ կուրանոցը մնալ:
ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Մեզի կ'ըսէր թէ քիչ մըն
պէտք է ճանչնալ մեր բնակած կղղեակը, ինք եւս ամբողջապէս
զայն պտըտած չէր: Կղղեակին մէջ լեռ մը կայ որուն վրայ ոչ ոք
բարձրացած է, հովիտներ կան ուր ոչ ոք կ'ուղէ իջնել և դեռ մինչեւ
այսօր մուտք չգործուած անձաւներ կը գտնուին, վերջապէս, կ'ըսէր
թէ պէտք չէ սպասել շարունակ որ արեւը ննջարանին կամարին վրայ
թառի. կ'ուղէր մեզ տանիլ մինչեւ ծովեղերք՝ ուր ինք առանձին
գնաց:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Իրաւունք ունի, պէտք է ապրե-
լու մասին ալ խորհիլ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Սակայն դուրսը դիտելու բան չկայ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Այժմ արեւին տա՞կ ենք:

Չ. ԿՈՅՑՐ.— Զիմ, կարծեր, ինձ կը թուի թէ արդէն ուշ է:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Ժամը քանի՞ն է:

ՄԻՒՄ ԿՈՅՑՐԵՐԸ.— Ես չեմ զիտեր: Ո՞չ ոք զիտէ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Արդեօք դեռ լոյս կա՞յ. (Չ. կոյրին) ուր
ես՝ դուն որ քիչ մը կը տեսնեմ:

Չ. ԿՈՅՑՐ.— Կարծեմ թէ շատ մոթ է. Երբ արեւին մէջ ենք
արտեւանունքներուս տակ կապոյտ զիծ մը կը տեսնեմ. այսպէս հատ
մը տեսայ բաւական ժամանակ առաջ, իսկ հիմա ոչինչ կը տեսնեմ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Անօթեցած ատենս կ'զգամ թէ շատ ուշ
է, և հիմա արդէն անօթի եմ:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Բայց զիտեցէք երկինքը, զուցէ կարենաք
բան մը զտնել հոն: (Ամենին ալ աշխերնին երկինք կը բարձրացնեն,
բացի երեք ի ծնէ կոյրերէն՝ որ զետին յառած են իրեւոց նայուածէները:)

Չ. ԿՈՅՑՐ.— Զինք զիտեր թէ երկնքի տա՞կն ենք արդեօք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Զայնը կը թնդայ. իբրեւ թէ անձաւի մը
մէջ ըլլայինք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Ես՝ աւելի կը կարծեմ թէ զիշեր
ըլլալուն համար այսպէս կը թնդայ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Գողցես լուսինը ձեռքերուս վրայ
կ'զգամ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— կը կարծեմ թէ աստղեր կան
երկնքին վրայ, ես կը լսեմ զիրենք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Ես ալ նոյնպէս:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ես ոչ մէկ աղմուկ կը լսեմ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ես միայն մեր շունչին ձայնը կ'առնեմ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— կը խորհիմ թէ կիները իրաւունք
ունին:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ես բնաւ աստղերուն ձայնը չեմ լուած:

ԵՐԿՈՒ ՈՒՐԻՇ Ի ԾՆՔ ԿՈՅՑՐԵՐ.— Մենք ալ չենք՝ լսած: (Գի-
շերային բռչուն մը յանկարծ սաղարբներուն կը զարմուի:)

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Մտի՛կ ըրէք, մտի՛կ ըրէք, ի՞նչ կայ մեր
վերեւը, կը լսէ՞ք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Երկնքին և մեր միջեւ բան մը
պատահեցաւ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ:— Այս ժխորին ինչ ըլլալը չհասկցայ, կ'ու-
ղէի կուրանոց դառնալ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ:— Անհրաժեշտ է հասկնալ թէ ո՞ւր կը զըտ-
նքւինք մենք:

Չ. ԿՈՅՑՐ:— Փորձեցի կանզնիլ՝ սակայն շուրջու փուշեր կան,
չեմ համարձակիր ձեռքերս տարածել:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ:— Անհրաժեշտ է զիտնալ թէ ո՞ւր կը զըտ-
նքւինք մենք:

Ա. ԿՈՅՑՐԸ.— Ատիկա չենք կրնար հասկնալ:

Չ. ԿՈՅՑՐ:— Կուրանոցէն անկասկած շատ հեռու պէտք է
եղած ըլլանք. ոչ մէկ ձայն կրնամ որոշել:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ:— Բաւական ժամանակէ ի վեր չոր տերեւ-
ներու բուրմունքը կ'առնեմ:

Չ. ԿՈՅՑՐ:— Զենէ ո և է մէկը արդեօք տեսա՞ծ է կղզին և
կրնա՞յ ըսել թէ ուր կը զտնուինք մենք այժմ:

Ա. ԿՈՅՑՐԸ.— ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Մենք ամենքս ալ կոյր
էինք, երբ հոս եկանք:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ:— Մեր աչքերը երբեք արեւին լոյսը չեն
տեսած:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Զուր տեղը չմտատանջուինք, շուտով
ԵՐԵԳԸ կը հասնի. սպասենք տակաւին, սակայն, այսուհետեւ այլեւս
իրեն հետ դուրս չելլենք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ. — Առանձին դուրս չենք կրնար ելլել:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Ամենեւին դուրս պիտի չելլենք մենք.
իմ մասիս, ես կը նախընտրեմ դուրս չելլել:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Մենք դուրս ելլելու փափաք չունինք.
ոչ ոք ուզած էր դուրս ելլել:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ. — Տօնի օր մըն էր կլղիին մէջ
և մեծ տօներուն միշտ դուրս կ'ելլենք:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Երեցը եկաւ և բաղխեց ուսերուս, մինչ-
դեռ կը քնանայի ես, և ըստ ինծի. «Ելէ՞ք; ելէ՞ք, ժամանակ
է, արեւը շատ բարձրելն է» իրաւ է որ ես արեւը չտեսայ. եր-
բեք արեւ չեմ տեսած արդէն:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ. — Ես արեւը մանկութեանս տեսած
եմ միայն:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ. — Նոյնպէս և ես, տարիներ
առաջ, երբ դեռ փոքրիկ էի, հիմա ոչինչ կը յիշեմ անկէ:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Ամէն անզամ որ արեւը երկինքին վրայ
կը շողայ, ինչո՞ւ համար Երեցը կ'ուզէ որ դուրս ելլենք, ո՞վ կը
տեսնէ արեւը Ես չեմ զիտեր թէ կէսօրի՞ն թէ կէս զիշերին կը
պարտիմ:

Զ. ԿՈՅՑՐԸ. — Ես կը նախընտրեմ կէսօրին դուրս ելլել. այդ
պահուն մեծ լոյսի մը պատրանքը կ'ունենամ, և բացուելու ու
արեւին լոյսը տեսնելու համար աչքերս մեծ ճիգ մը կ'ընեն:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐԸ. — Ես կը նախընտրեմ սեղանատունը մնալ.
քարածուխի ջերմիկ վառարանին մօտ, ուր այս առաւօտ մեծ կրակ
մը կը վառէր:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Գաւիթը՝ արեւին տակ կրնար տանիլ մեղ,
ուր որմերով շրջապատուած՝ մարդ չի կրնար դուրս ելլել, ուր վախ-
նալու բան մըն ալ չկայ, երբ մանաւանդ դուռը փակուած է: Ես
միշտ կը զոցեմ զայն: Ինչո՞ւ սակայն, աջ արմուկիս կը զարնէք
դուք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Ես քեզ չդպայ. քեզ չեմ կրնար մօտենալ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Մէկը արմուկիս դպաւ, կ'ըսեմ ձեզ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ. — Մեզմէ մէկը չէ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ. — Աստուած իմ, Աստուած
իմ, ըսէ՞ք մեզի թէ ո՞ւր կը զտնուինք մենք:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Այսպէս յաւիտեան չենք կրնար սպասել։
(Հեռաւոր ժամացոյց մը դանիդաղօրէն ժամը 12 կը զարնէ։)

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆՔ — կուրանոցէն որքա՞ն հեռու ենք։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Կէս զիշեր է։

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Կէսօր է, որ և է մէկը զիտէ՞ թէ քանին
է ժամը, խօսեցէ՞ք։

Զ. ԿՈՅՐ.— Չեմ զիտեր, բայց կը կարծեմ թէ մենք շուքին
մէջ ենք։

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Շուարած եմ. շատ երկար քնացանք։

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Անօթի՛ եմ...

ՄԻՒՍ ԿՈՅՐԵՐԸ.— Անօթի՛ և ծարաւի՛ ենք։

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Երկա՛ր ատենէ ի վեր հոս ենք։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆՔ.— Ինձի այնպէս կը թուի թէ
դարերէ ի վեր հոս կը գտնուիմ։

Զ. ԿՈՅՐԸ.— Ալ կ'սկսիմ հասկնալ թէ ո՛ւր կը գտնուինք մենք։

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Պէտք է երթալ այն կողմը, ուր կէս
զիշերը զարկաւ։ (Բոլոր գիւերային թոշուները յեղակարծօրէն կը
ինայտան)։

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Կը լոէ՞ք, կը լոէ՞ք։

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Հոս՝ առանձին չենք մենք։

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Երկար ատենէ ի վեր բանէ մը կը կաս-
կածիմ, մեզի կը լսեն։ Երէ՞ցը վերադառն արդեօք։

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ինչ ըլլալը չեմ զիտեր, մեր վերեւն է այդ։

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Միւսները բան մը չսեցի՞ն, դեռ կը լոէ՞ք
դուք։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Նորէն կը լսենք։

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆՔ.— Թեւերու բաղխում կը լսեմ շուրջաւ

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆՔ.— Աստուած իմ, Աստուած
իմ, ըսէ՛ մեզի թէ ո՛ւր կը գանուինք մենք։

Զ. ԿՈՅՐ.— Ալ կ'սկսիմ հասկնալ թէ ո՛ւր կը գտնուինք մենք։

Կուրանոցը մեծ զետին միւս եղերքն է. մենք անցանք հին կա-
մուրջը. Երէցը մեղ կղզիին հիւսիսային կողմը առաջնորդեց։ Գետին
մօս ենք, թերեւս լսենք զինք, եթէ այսնց դնէիք պահիկ մը. հարկ
պիտի ըլլար երթալ մինչեւ ջուրին եղերքը, եթէ երբեք չլերադառ-
նայ ան. . . . Մեծ նաւերը զիշեր ցորեկ կ'անցնին անոր վրայէն, և
նաւազները մեզ կը նշմարեն ափերուն վրայ, թերեւս փարսու

Մշապատով անտառին մէջ են. բայց ևս անոր ելքին ձամբան չեմ զիտեր, ձեզմէ մէկը կ'ուզէ՝ հետեւիլ ինծի:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Նստած՝ սպասե՞նք, սպասե՞նք, մեզմէ որ և է մէկը չի զիտեր մեծ զետին ուղղութիւնը, կուրանոցին բոլորտիքը ճահիճներ կան. սպասե՞նք, սպասե՞նք: Երէցը պիտի վերադառնայ, անհրաժեշտ է որ վերադառնայ:

Զ. ԿՈՅՐ.— Որ և է մէկը զիտէ՝ թէ ուրկէ եկանք մենք, ան մեզի բացատրեց երբ կը քալնինք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ես ատոր ուշադրութիւն չըրի:

Զ. ԿՈՅՐ.— Որ և է մէկը մտիկ ըրա՞ւ անոր խօսքերը:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Այսուհետեւ պէտք է մտիկ ընենք զի՞նք:

Զ. ԿՈՅՐ.— Մեզմէ մէկը կղզիին մէջ ծնա՞ծ է:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ.— Լաւ զիտէք թէ ամենքս ալ ուրիշ կողմերէ եկած ենք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Մենք ծովին միւս կողմէն եկած ենք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ճամբորդութեանս միջոցին մեռած կարծեցի ինքզինքս:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ես ալ: Միասին եկանք մենք:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Մենք երեքս աչ միեւնոյն ժողովրդապետութեան բնակիչներէն ենք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Երսեն թէ ասկէ կարելի է տեսնել զայն, ոդը պայծառ եղած ատեն, դէպի Հյուսիս Զանզակատուն չունի ան:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Մենք գիպուածով զետեզերք ելանք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ... Ես ուրիշ կողմէ եկած եմ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ուրկէ եկած էք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Այդ մասին բնաւ չեմ համարձակիր մտածել. անոր վրայ խօսած ատենս երբեք զայն չեմ յիշեր, երկար ատեն կայ որ հոն աւելի ցուրտ կ'ընէր քան թէ հոս:

ԴԵՌԱՍԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ես շատ հեռուներէն եկած եմ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ուրկէ եկած էք ուրեմն...

ԴԵՌԱՍԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Չեմ զիտեր. ի՞նչպէս կ'ուզէք ոք բացատրեմ ձեզի Ասկէ շատ հեռու է ան, ծովերէն անոլին: Ընդարձակ երկրէ մը կուզամ ես. միայն նշաններով կրնամ ցոյց տալ, այլեւս զայն չենք տեսներ: Երկար ատեն թափառեցայ, տեսայ արեւը, ջուրը և կրակը, լեռներ, դէմքեր և անծանօթ ծաղիկներ՝ անոնց նմանը այս կղզիին մէջ չի զտնուիր: Հոս խիստ

մութ է և ցուրտ Ես անոնց քաղցր հոտը անգամ մըն ալ չառի տեսողութիւնս կորսնցնելէս ի վեր բայց տեսայ իմ ծնողքս ու քոյրերս իմ ուր ըլլալս զիտնալու համար դեռ շատ փոքրիկ էի ես, ծովեզերքը կը խաղայի բայց ինչպէս որ կը յիշեմ տեսած ըլլալ . . . Օր մը լերան բարձունքէն կը զիտէի ձիւնը . . . Սկսայ որոշել բոլոր անոնք որ դժբաղդ պիտի ըլլային:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Ի՞նչ ըսել կ'ուղէք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑ ԿԻՆԲ. — Այս վայրկեանիս ալ զանոնք կը ճանչնամ իրենց ձայնէն: Յիշատակներ ունի՛ ես, որոնք մտքիս մէջ աւելի կը պայծառանան երբ իրենց մասին չեմ խսկ խորհիր:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Ես յիշատակներ չունի՛ (Թավրով խուռ. թռչաւններու բոխքը կը լսուի, որոնք սաղարբներու վրայէն կ'անցին շլուրտացնելով):

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ. — Օդին մէջ վերստին բան մը տեղի կ'ունենայ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Ինչո՞ւ համար հոս եկանք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ. — Որո՞ւն կը հարցնէք:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Մեր դիոտի քրոջ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑ ԿԻՆԲ. — Ըստին ինծի թէ ան կրնար բուժել զիս ինքը ինծի ըսաւ թէ օր մը պիտի տեսնէի և այն ատեն պիտի կը բնայի մեկնիլ կղզիէն:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Մենք բոլորս ալ պիտի ուղէինք ձգել կղզին:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Մենք միշտ հոս պիտի մնանք:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Երէցը շատ ծեր է ա՛լ, մեզ բժշկելու ժամանակ պիտի չունենայ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑ ԿԻՆԲ. — Արտեւանունքներս փակուած են, բայց կ'զգամ որ աչքերս կենդանի են:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Իմիններս բաց են:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Աչքերս բաց կը քնանամ եաւ:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Զիսոսինք մեր աչքերուն վրայ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Երկա՞ր ժամանակէ ի վեր հոս էք դուք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ. — Իրիկուն մը աղօթքի պահուն կիներուն կողմէն ձայն մը լսեցի, ձայն մը զոր չէի ճանչնար, ծեր ձայնէն կը զոշակէի թէ երիտասարդ էիք դուք և կը փափաքէի տեսնել և լսել ձեզ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑ. — Ես չնշմարեցի ատիկա:

Զ. ԿՈՅՑ. — Կ'ըսեն թէ հետաւոր աշխարհներէ եկած կնոջ մը նման գեղանի էք դուք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ. — Ես ինքզինքս տեսած չեմ բնաւ։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Մենք զիրար բնաւ տեսած չենք։ իրարու հարցում կ'ուղղենք, կը պատասխանենք, միասին կ'ապրինք, միշտ իրարու հետ ենք, բայց իրարու ինչ ըլլալը չենք զիտեր. ի զո՞ւր մէկզմէկու ձեռք կը շօշափենք. աչքերով աւելի կարեմ է ճանչնալ զիրար քան ձեռքերով . . .

Զ. ԿՈՅՐԸ. — Երբեմն ձեր ստուերը կը տեսնեմ ես, երբ արեւին տակ էք դուք։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Բնակարանը ուր կ'ապրինք, երբեք տեսած չունինք. ի զո՞ւր շօշափեցինք անոր պատերն ու պատուհանները. մեր ուր բնակիլը չենք զիտեր։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ. — Կ'ըսեն թէ մեր բնակարանը շատ հին և խեղճ դղեակ մըն է, ուր երբեք լոյս չի թափանցեր, բացի աշտարակէն, ուր կը գտնուի Երէցին սենեակը։

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ. — Անոնց համար որ չեն տեսներ, լոյսի պէտք չկայ։

Զ. ԿՈՅՐ. — Կուրանոցին շրջակայքը երբ ես հօտին վրայ կը հսկեմ, աշտարակին այդ լոյսը նշմարելով՝ ոչխարները առանձին կը վերադառնան. անոնք բնաւ չեն մոլորեցուցած զիա։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Ահաւասիկ տարիներէ ի վեր շարունակ իրարու հետ կ'ապրինք, և սակայն երբեք զիրար չենք տեսած. կարծես թէ առանձին ըլլայինք միշտ Անհրաժեշտ է տեսնել՝ սիրելու համար . . .

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ. — Երբեմն կ'երազեմ թէ կը տեսնեմ։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Ես միայն երազիս մէջ կը տեսնեմ։

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ. — Ես ընդհանրապէս կէս զիշերին կ'երազեմ. (Ռւժգին հովը կը դվրդացնէ անտար, ծառերուն սաղարբները դեզ դեզ կը բափին)։

Ե. ԿՈՅՐ. — Ի՞նչ էր որ ձեռքերուս դպաւ։

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ. — Բան մը կը թափի մեր շուրջը։

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Վերէն է կիյնայ. ինչ ըլլալը չեմ զիտեր։

Ե. ԿՈՅՐԸ. — Ո՞վ դպաւ ձեռքերուս, կը քնանայի, թողուցէք քնանամ . . .

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ. — Մէկը չդպաւ ձեռքերուդ։

Ե. ԿՈՅՐ. — Ո՞վ բանեց ձեռքերս. բարձր ձայնով պատասխանեցէք ինձի. ականջներս քիչ մը ծանր են . . .

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Մենք ալ չենք զիտեր:
Ե. ԿՈՅՑՐ.— Արդեօք մեզի լուր տալու եկան:
Ա. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Անօգուտ է պատասխանել. ան չի լսեր:
Գ. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Պէտք է խոստովանիլ թէ խուլերը շա-
փազանց դժբաղդ են:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Ալ յոզնեցայ նստելէ:
Զ. ԿՈՅՑՐ.— Հոս մնալէ յոզնեցայ:
Բ. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Խնծի կը թուի թէ մէկզմէկէ շատ հեռու
ենք մենք... Փորձենք քիչ մը իրարու մօտենալ. ցրտել կ'սկսին:
Գ. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Զեմ համարձակիր ոտքի կանգնիլ. լա-
ւազոյն է տեղերնիս մնանք:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Կարելի չէ զիտնալ թէ մեր միջեւ
ինչ կրնայ պատահիլ:

Զ. ԿՈՅՑՐ.— Կը կարծեմ թէ երկու ձեռքերս արիւնոտած են,
ուզեցի ոտքի կանգնիլ:

Գ. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Իմ կողմս կը հակիք։ (Կոյր կինը ուժգնուեն
աշխերը կը ուփե նշալով եւ կը դառնայ յանաւուեն՝ անժամժացած
Երկցին կողմը):

Ա. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Ահա ուրիշ ազմուկ մըն ալ կը լսեմ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Կը խորհիմ թէ մեր հէզ քոյրն
է որ իր աչքերը կը չփէ:

Բ. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Ան ուրիշ բան մը չըներ, զինք ամէն զի-
շեր կը լսեմ:

Գ. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Խենդ մըն է, բան մը չի լսեր:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Զաւակ ունենալէ ի վեր
ընաւ չի խօսիր, կարծես կը վախնայ...

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Հոս մնալէ չէք վախնար:

Ա. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Ո՛վ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Դուք՝ ամենքդ ալ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Այո՛, այո՛, կը վախնանք մենք:
ԴԵՒԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Շատոնց է կը վախնանք:

Ա. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Խնչո՞ւ համար կը հարցնէք:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Զեմ զիտեր թէ ինչո՞ւ կը հարցը-
նեմ... Խնծի այնպէս կը թուի թէ լալու ձայն մը լսեցի մեր մէջ:

Ա. Ի ԾՆՀ ԿՈՅՑՐ.— Մի՛ վախնաք, կարծեմ թէ խենդն էր:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Դեռ ուրիշ բան մըն ալ կայ...

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Առ միշտ կուլայ՝ երբ դիեցընելու կ'երթայ իր մանկիկը:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Միայն ինք այդպէս կուլայ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Կըսեն թէ ան երբեմն կը տեսնէ...

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ:— Ուրիշներուն լացը չենք լսեր...

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ.— Լալու համար տեսնել հարկ է . . .

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ծաղիկներու բուրմունքը կը չնչեմ շուրջու:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ես միայն հողին հոտը կ'առնեմ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ծաղիկներ, ծաղիկներ կան խմ շուրջու:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ես միայն հողին հոտը կ'առնեմ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Հովին մէջ ծաղիկներու բուրմունքն չնչեցի...

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ես միայն հողին հոտը կ'առնեմ:

ԱՄԵՆԻՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Կը կարծեմ թէ անոնք իրաւունք ունին:

Զ. ԿՈՅՐ.— Ո՞ւր են Պիտի երթամ քաղել զանոնք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Զեր աջ կողմը կանգնեցէք: (Զ. կոյրը կը կանգնի եւ առխարիսափի կը յառաջանայ եւ կը զարնուի մացառներու, ծառերու եւ օլիններու զորս կը տապալէ եւ կը նմլէ իր անցքին վրայ):

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Կը լսեմ, դուք կը խորտակէք դալար ցողունները, կեցէք, կեցէք:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ծաղիկներով մի՛ զբաղիք այլ վերադարձի մասին խորհեցէք:

Զ. ԿՈՅՐ.— Այլեւս չեմ համարձակիր եա դառնար:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Պէտք չկայ վերադառնալ սպասեցէք: (Ոսքի կը կանգնի). Ո՞հ, որքան պաղէ զետինը, սիտի սասի, (անվարան կը յառաջանայ անձանօր եւ բառամած օլիններու կողմը, սակայն կանգ կ'առնէ տապալուած ծառի մը եւ ժայռերու կտորներու տողեւ, ծաղիկներու մօս.) անոնք այսակղ են. չեմ կրնար անոնց հասնիլ ձեր կողմն են:

Զ. ԿՈՅՐ.— Զանոնք քողել կը կարծեմ: (Առխառիսափի կը բաղէ շխալուած ծաղիկները եւ անոր կը նուիրէ զանոնիք. զեւերային բռչունները կը բռչին):

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ինծի կը թուի թէ ատենօք այդ ծա-

զիկները տեսած էի, անոնց անունը բնաւ չեմ յիշեր . . . Բայց որքա՞ն դալուկ են անոնք, և անոնց ցողունը որքա՞ն կակուղ է. զրեթէ չեմ ճանչնար զանոնք, կը կարծեմ թէ մահուան ծաղիկներ են անոնք... (Իր մազերուն մեջ օղիններ կը զետեղէ):

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Զեր մազերուն շրջիւնը կը լսեմ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Ծաղիկներ են ասոնք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Մենք մէկզմէկ պիտի չտեսնենք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Ես ինքզինքս ալ պիտի չտեսնեմ . . .

Կը մախմ. . . (Այդ պահուն անտառին մեջ հովլը կը բարձրանայ, ծովը կը մռնչէ յեղակարծուեն եւ ուժգին՝ մօքը ելուղ խութերուն դէմ):

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Երկինքը կ'որոտայ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Կարծեմ թէ փոթորիկ մըն է որ կը բարձրանայ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Ծովն է, կը խորհիմ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ծովն է ատիկա: Ուրեմն մենէ երկու քայլ հետու է. մեր մօտը Մնոր ձայնը կը լսեմ շուրջս. պէտք է ուրիշ բան մը եղած ըլլայ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Ոտքերուս առջեւ կոհակներու մխորը կը լսեմ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Կարծեմ ծովն է որ կը պտուտքի չոր սաղարթներուն մէջ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Կը խորհիմ թէ կիները իրաւունք ունին:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Հովը հոս պիտի գայ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ուրկէ կուզայ հովը:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ծովին կողմէն:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Միշտ ծովուն կողմէն կուզայ և կը շրջապատէ մեզ, և արդէն ուրիշ տեղէ չի' կրնար գալ . . .

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Սյլեւս՝ ծովին մասին չմտածենք:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Բայց անհրաժեշտ է խորհիլ՝ քանի որ ան մեզի պիտի հասնի:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Զէք պիտեր թէ ծովն է արդեօք . . .

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ես կը լսեմ անոր կոհակներուն ձայնը, որպէս թէ երկու ձեռքերս զոցած և անոր ջուրերուն մէջը մխորձած ըլլայի: Հոս չենք կրնար մնալ: Անոր ջուրերը թերեւս մեզ շրջապատած են:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Ուր կ'ուզէք երթար:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Հոգ չէ թէ ուր, հոգ չէ թէ ուր, այլեւս չեմ ուզեր լսել այդ ջուրերուն ձայնը: Երթա՞նք, երթա՞նք:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ինծի կը թուի թէ ուրիշ բան մըն ալ կը լսեմ. ակա՞նջ դրէք. (Հեռաւոր եւ զահավէծ ոտքի դոփիւն մը կը լսուի չոր տերեւներուն վրայ):

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Բան մը կը մօտենայ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Կուգայ, կուգայ, կը վերադառնայ...

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Մանուկի պէս՝ փոքրիկ քայլերով կուգայ ան:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Զմեղադրենք զի՞նքը, այսօր:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ինծի կը թուի թէ մարդու մը ոտքին ձայնը չէ ասիկա: (Խուռոր տուն մը անտառ կը մտնէ եւ կ'անցնի կոյրերուն առջեւեն. լուռիւն):

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ո՞վ կայ հոն. Ո՞վ էք դուք: Դթացէ՛ք մեր վրայ, այսքան երկար ատենէ ի վեր հոս կ'սպասենք մենք... (Նունը կանգ կ'առնէ եւ կուգայ իր քարերը կը դնէ կոյրին ծունկերուն վրայ). Ա՛հ, ա՛հ, ի՞նչ դրիք ծունկերուս վրայ. ի՞նչ բան է ասիկա: Կենդանի՞ մըն է. կարծեմ թէ շուն մըն է. ո՛հ, ո՛հ, շունն է, շունն է, կուրանոցին շունն է: Հո՛ս եկուր, հո՛ս եկուր: Մեզ ազատելու կուգայ: Հո՛ս եկուր, հո՛ս եկուր:

ՄԻՒՍ ԿՈՅՐԵՐԸ.— Հո՛ս եկուր, հո՛ս եկուր:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Մեզ փրկելու կուգայ, ան հետեւեցաւ մեր քայլերուն, մինչեւ հոս: Զեռքերս կը լզէ իբրեւ թէ դարեր յետոյ զտած ըլլար զի՞ւ:

ՄԻՒՍ ԿՈՅՐԵՐԸ.— Հո՛ս եկուր, հո՛ս եկուր:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Թերեւս մէկը կայ իր հետ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ո՛չ, ո՛չ, մինակ է. ո՛չ ոքի զալը կը լսեմ: Մեղի ուրիշ առաջնորդ պէտք չէ, լաւագոյնն ալ չկայ: Մեզ մեր ուզած տեղը պիտի կրնայ տանիլ. մեղի պիտի հնաղանդի...

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ես չեմ համարձակիր հետեւիլ իրեն:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ես ալ նոյնպէս:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Ինչո՞ւ համար Ան մեզմէ լաւ կը տեսնէ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Մտիկ շընենք կիներուն խօսքը:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Երկինքին մէջ բան մը փոխուեցաւ, ազատօրէն կը շնչիմ, օղը մաքուր է հիմա...

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ծովին հոյն է որ կ'անցնի մեր բոլորտիքէն:

Զ. ԿՈՅՐ.— Ինծի կը թուի թէ օրը պիտի բացուի, կը կարծենմ որ արեւը կը բարձրանայ...

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ.. — Կը կարծեմ որ շուտով օդը
պիտի ցրտէ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Մենք մեր ուղին պիտի գտնենք, զիս կը
քաշէ կը տանի, զիս կը քաշէ կը տանի՝ ուրախութենէ զինովցած.
չեմ կրնար զինք կեցնել. հետեւեցէ՛ք ինծի, հետեւեցէ՛ք ինծի. մենք
տուն կը վերադառնանք. (Ոտքի կը կանգնի, ուներ կը բաւկուտ զինք
եւ կը տանի Երեցին անշարժ դիակին վրայ):

ՄԻՒՍ ԿՈՅՑԵՐԸ. — Ո՞ւր էք, ո՞ւր էք. ո՞ւր կ'երթաք. զզուշացէ՛ք:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, մի հետեւիք դեռ
ինծի, ես պիտի վերադառնամ նորէն. (Կանգ կ'առնէ) ի՞նչ կայ: Ո՞հ-
ո՞հ, խիստ սառ բանի մը զարնուեցայ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ի՞նչ կ'ըսէք, ձեր ձայնը զրեթէ չի լսուիր:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ես դպայ... կը կարծեմ թէ դէմքի մը դպայ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ի՞նչ կ'ըսէք: Զեզ կարելի չէ հասկնալ
այլեւս. ի՞նչ ունիք, ո՞ւր կը գտնուիք, շատ հեռո՞ւ էք արդէն մենէ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ո՞հ, ո՞հ, ո՞հ, ինչ ըլլալը չեմ զիտեր. մեր
մէջ մեռած մը կը գտնուի:

ՄԻՒՍ ԿՈՅՑԵՐԸ. — Մեռած մը մեր մէջ. ո՞ւր կը գտնուիք.
ո՞ւր կը գտնուիք:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Մեռած մէկը կայ մեր մէջ. կ'ըսեմ ձեզի
Ո՞հ, ո՞հ, ես մեռածի մը դէմքին դպայ. մեռելի մը մօտ նըս-
տած էք. պէտք է որ մենէ մէկը յանկարծամահ եղած ըլլայ: Բայց
խօսեցէք վերջապէս՝ որ զիտնամ թէ ո՞վ կ'ապրի Ո՞ւր էք,
պատասխանեցէ՛ք, պատասխանեցէ՛ք, բոլորդ միասին: (Կոյրերը կը
պատասխանեն յաջորդաբար, բացի խենդ կոյր կնոջմէն ու խուլ են.
Երեք տարեց կոյր կիները դադրեցուցած են իրենց աղօքը):

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Այլեւս չեմ կրնար որոշել ձեր ձայնը.
սակայն և այնպէս կը խօսիք դուք. (Բոլորն ալ կը դողդողան):

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Երկուքը չպատասխանեցին. ո՞ւր են. (Եր
ցուպով հինգերորդ կոյրին կը դպի):

Ե. ԿՈՅՑ. — Ո՞հ, ո՞հ, պառկած էի ես, թողէք որ քնանամ:

Զ. ԿՈՅՑ. — Ինքը չէ. խենդ կի՞նն է արդեօք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆ. — Խենդը իմ մօտս նստած է իր
շունչը կը լսեմ ես:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — կը խորհիմ... կը խորհիմ որ Երէցն է.
ուտքի կանգնած է ան. եկէ՛ք, եկէ՛ք, եկէ՛ք:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ. — Ուրեմն դեռ կ'ապրի ան:

ԱՄԵՆՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Ռ՞ւր է:

Զ. ԿՈՅՑՐ.— ԵՐԹանք տեսնել: (Բոլորն ալ ոսքի կը կանգնին բացի խենդէն եւ Ե. կոյրէն, ու առխարիսափ կը յառաջանան դեպի մեռէլը):

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Հո՞ս է. ի՞նքն է:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Այո՞ւ, այո՞ւ, ես զայն կը ճանչնամ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլանք մենք:

ԱՄԵՆՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Հայր, հայր, դո՞ւք էք. հայր, ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ ունիք, պատասխանեցէք. ահաւասիկ բոլորս ձեր շուրջը կը գտնուինք:

ԱՄԵՆՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Զո՞ւր բերէք, գուցէ դեռ կ'ապրի . . .

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Փորձենք, թերեւս մեզ կարենայ կուրանոց առաջնորդել . . .

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Անօգուտ է. իր սրտին բաբախումը չեմ լսեր . . .

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Առանց բան մը ըսելու՝ մեռաւ ան:

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Պէտք էր գոնէ մեզ առաջուընէ իմացներ:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Ո՞հ, որքան ծերացած է: Առաջին անգամ է որ իր դէմքին կը հպիմ . . .

Գ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— (Դիակը շօսափելով) Մենէ մեծ է ան. . .

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Իր աչքերը լայնօրէն բացուած են՝ ձեռքերը միացած՝ հողին աւանդած է. . .

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Այսպէս, ուրեմն, առանց պատճառի մը մեռաւ ան:

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Ան կանգնած չէ, այլ նստած՝ քարի մը վրայ:

ԱՄԵՆՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Աստուած իմ, Աստուած իմ, ես այս բոլորէն, բոլորէն տեղեկութիւն չունէի . . . Երկար ատենէ ի վեր հիւանդ էր ան. Այսօր տանջուած ըլլալու է. չէր տրտնջար, միայն մեր ձեռքերը սեղմած ատեն կը զանդատէր. Մարդիկ միշտ չեն կրնար հասկնալ, երբեք չեն կրնար հասկնալ. . . Երթանք, աղօթել իր շուրջը, ծո՛ւնը դրէք: (Կիները կը ծնրադրեն ողբալով):

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Ես չեմ համարձակիր ծնրադրել. . .

Բ. Ի ԾՆԷ ԿՈՅՑՐ.— Մարդ իր ինչ բանի վրայ ծնրադրելն իսկ չի դիակը. . .

Գ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Հիւա՞նդ էր մեղի բան մը չըսաւ այդ մասին...

Բ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Ես լսեցի որ ան ցած ձայնով կը խօսէր մեկնած պահուն կը խորհիմ թէ մեր գեռատի քրոջն էր որ կը խօսէր. ի՞նչ ըսաւ արդիօք:

Ա. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Չուզեր պատասխաներ

Բ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Զէ՞ք ուզեր ալ պատասխանել մեղի. ո՞ւր կը գտնուիք. խօսեցէք:

ԱՄԵՆԵԿՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Դուք զի՞նք շատ չարչարեցիք. մեռցուցիք. բնաւ քալել չէիք ուզեր, ճաշելու համար կ'ուզէիք ճամբան գտնուող քարերուն վրայ նստիլ . . . Ամբողջ օրը մրթմրթացիք . . . Ես կը լսէի անոր հառաջանքները. ի վերջոյ ան կորսնցուց իր կորովը:

Ա. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Հիւա՞նդ էր, զիտէի՞ք դուք պատիկաւ

ԱՄԵՆԵԿՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Մենք բան մը չէինք զիտեր: Բնաւ տեսած չենք զի՞նքը. և արդէն մեր խաւարամած խեղճ աչքերով ի՞նչ բան տեսած ունինք: Ան չէր տրսնջար . . . իսկ հիմա, շատ ուշ է արդէն . . . Ես երեք հոգիի մեռնիլը տեսած եմ, բայց ոչ այսպէս... հիմա՝ ա՛լ կարզը մերն է . . .

Ա. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Ես զի՞նքը չարչարեցի. . . բան մը չըսի:

Բ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Նոյնպէս և ես, մենք իրեն հետեւեցանք առանց բան մը ըսելու . . .

Գ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Խենդին համար ջուր բերելու զացած ատենը մեռաւ . . .

Ա. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Ի՞նչ պիտի ընենք մենք, ո՞ւր պիտի երթանք:

Գ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Ո՞ւր է շունը:

Ա. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Հոս է. մեռելին մօտէն չուզեր հեռանալ:

Գ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Քաշեցէք, հեռացուցէք, հեռացուցէք զայն:

Ա. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Մեռելին բաժնուիլ չուզեր:

Բ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Մեռելին մօտ չենք կրնար սպասեր Չենք կրնար հոս. խուռարին մէջ մեռնիլ:

Գ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Մնա՞նք միտախն. չբաժնուինք իրարմէ. իրարու ձեռք բանենք. ամնենքս ալ նստինք այս քարին վրայ. . . ո՞ւր են միւաները Հո՛ս եկէք, հո՛ս եկէք:

ԱՄԵՆԵԿՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Ո՞ւր էք:

Գ. Ի ԾՆԵԿ ԿՈՅՑՐ.— Հո՛ս, հոս եմ ես, ամենքս ալ ժողվը.

ւած ենք Աւելի մօտեցէք ինծի. ո՞ւր են ձեր ձեռքերը: Շատ ցուրտ է:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ո՞հ, որքան պաղ են ձեր ձեռքերը:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ի՞նչ կ'ընէք դուք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ես ձեռքերս կը դնէի աչքերուս
վրայ՝ կարծելով թէ յանկարծ պիտի տեսնէի...

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ո՞վ է այսպէս լացողը:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Խենդն է որ կը հեծկլայ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ան չ^բ զիտեր եղելութիւնը:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Կը խորհիմ թէ մենք հոս պիտի
մեռնինք . . .

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Թերեւս մէկը զայ...

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Կը խորհիմ թէ կրօնաւորուհիները կու-
րանցէն դուրս պիտի ելլեն...

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Անոնք զիշեր ատեն դուրս
չեն ելլեր:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Անոնք բնաւ դուրս չեն ելլեր:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Կը խորհիմ թէ մեծ փարոսին պահապան-
ները պիտի նշմարեն մեզ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Անոնք իրենց աշտարակէն վար
չեն իշներ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Թերեւս տեսնեն մեզ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Շարունակ ծովին կողմը կը
դիտեն անոնք:

. Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Օգը կը ցրտէ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Մտի՛կ ըրէք չոր սաղարթներու
խարշափը. կարծեմ թէ օդը կը սառի:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ո՞հ, զետինը որքա՞ն կարծ է:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Զախ կողմս շուկ մը կը լսեմ, որուն
ինչ ըլլալը չեմ կրնար հասկնալ...

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Ծովն է որ կը մոնջէ խութերու
դէմ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Կը կարծէի թէ կիներն էին:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Կը լսեմ սառնամանիքներու
խորտակումը՝ կոհակներու տակ...

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Ո՞վ է որ այսպէս կը կափկափէ. Ան մեզ
ամենքս ալ կ'երեցնէ քարին վրայ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՐ.— Զեռքերս ալ չեմ կրնար բանալ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Վերստին շուկ մը կը լսեմ,
որուն ինչ ըլլալը չեմ կրնար հասկնալ...

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ո՞վ է որ այսպէս կը կափկափէ մեր
մէջ Քարերը կ'հրեցնէ ան:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Կը խորհիմ թէ կին մըն է:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Կը խորհիմ թէ խենդն է, որ
ամենէն աւելի ուժով կը կափկափէ:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Իր տղուն ձայնը չի լսուիր:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Կը կարծեմ թէ կաթ կը
ծծէ տակաւին:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Ինք միայն կրնայ տեսնել թէ
ո՞ւր կը գտնուինք մենք:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Հիւսիսի հովն է որ կը լսեմ:

Զ. ԿՈՅՑՐ.— Կը խորհիմ թէ այլեւս աստղ չկայ երկնքին վր-
բայ. պիտի սկսի ձիւնել:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Եթէ մենէ մէկը քնանալու ըլլայ, պէտք
է արթնցնել զինք:

ԱՄԵՆ Ն ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Սակայն իմ քո՛ւնս կուզայ...

(Հողմակոծուրիւն մը իրար կը խառնէ չոր ՏԵՐԵՒՆԵՐԸ):

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Կը լսէ՞ք չոր տերեւներուն խար-
շափը. կարծեմ թէ մէկը կուզայ մեր կողմը . . .

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Քամին է. լսեցէ՞ք:

Գ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ա՛լ ոչ ոք պիտի զայ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ.— Մեծ սառնամանիքները պիտի տեղան

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Հեռուէն քայլերու դոփիւնը կը լսեմ:

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Միայն տերեւներու խարշափը կը լսեմ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Մենէ հեռու ոտքի ձայներ կը լսեմ:

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ես միայն հիւսիսի հովին ձայնն է որ կը լսեմ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Դէպի մեր կողմը մէկը կուզայ,

կ'ըսեմ ձեզի:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐ ԿԻՆԸ.— Խիստ դանդաղ ոտքի ձայներ
կը լսեմ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑՐԸ.— Կը կարծեմ թէ կիները իրաւունք
ունին: (Մեծ վարիլներով կ'սկսի ձիւնել):

Ա. Ի ԾՆՔ ԿՈՅՑՐ.— Ո՞հ, ո՞հ, ի՞նչ է որ այսքան սառ՝ կը
թափթիի ձեռքերուս վրան:

Զ. ԿՈՅՑՐ.— Կը ձիւնէ:

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Սեղմենք զիրար:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Լսեցէք, ոտքի ձայներ կան:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ի սէր Աստուծոյ, լոեցէք
վայրկեան մը:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Իրարու կը մօտենան, իրարու կը
մօտենան. լսեցէք: (Նոյն պահուն խենդին մանկիկը կ'սկսի նշալ
յեղակարծուն խաւարին մեջ):

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Մանուկը կ'ուլայ:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Փոքրիկը կը տեսնէ, կը տեսնէ, և
քանի որ կ'ուլայ՝ պէտք է որ բան մը տեսած ըլլայ: (Մանուկը իր
բազուկներուն մեջ կը գրկէ եւ ոսքի ձայներ եկած կողմը կը յառա-
ջանայ. միւս կիները կը հետեւին եւ անձկօրէն կը տրջապատեն զայն):
Անոր ընդառաջ կ'եթամ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Ուշաղրութիւն ըրէք:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ի՞նչպէս կ'ուլայ. ի՞նչ կայ. մի՛ լար
մի՛ վախնար. մենք հոս ենք, վախնալու բան մը չկայ շուրջդ:
ի՞նչ կը տեսնես. բանէ մը մի՛ վախնար. այսպէս մի՛ լար, ի՞նչ կը
տեսնես, ըսէ՛, ի՞նչ կը տեսնես:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Քայլերու ժխորը հոս կը
մօտենայ. լսեցէք, լսեցէք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Շրջազգեստի մը շրջիւնը կը լսեմ
չոր տերեւներու վրայ:

Զ. ԿՈՅՐ.— Կի՞ն մըն է արդեօք:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐԸ.— Քայլերու ձա՞յն մըն է . . .

Ա. Ի ԾՆԷ ԿՈՅՐ.— Չոր տերեւներու մօտ՝ ծովն է թերեւս
որ կը մանչէ . . .

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ո՞չ, ո՞չ, քայլերու ձայներ են, ոտ-
քի դոփիւններ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Հիմա պիտի հասկնանք, արդ
լսեցէք չոր տերեւներու լսաւշափը:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ես կը լսեմ, կը լսեմ անոնց ձայնը՝
զրեթէ միք մօտը. ակա՞նջ զրէք, ակա՞նջ զրէք: Ի՞նչ կը տեսնես,
ի՞նչ կը տեսնես:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Ո՞ր կողմը կը նայի մանուկը:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՐ ԿԻՆԸ.— Կը հետեւի շարունակ քայլերու
բարձրացուցած ժխորին. գիտեցէք, գիտեցէք, երբ զինքը կը դար-
ձընեմ, ան վերատին դիտելու համար նոյն կողմը կը դառնայ . . .

կը տեսնէ, կը տեսնէ, կը տեսնէ, պէտք է որ տարօրինակ բան մը տեսած ըլլայ:

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ.— (Կը յառաջանալ) Բա՛րձր,
մեր զլուխներէն վե՛ր բարձրացուցէք զայն, որպէս զի կարողանայ դիտել:

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑ ԿԻՆԸ.— Բաժնուեցէ՛ք, բաժնուեցէ՛ք: (Կը բարձրացնե մանուկը կոյրերու խումբեն բարձր). Ոտքի ձայները դադրեցան մեր մօտը...

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ.— Սնոնք հոս են, մեր մէջը...

ԴԵՌԱՏԻ ԿՈՅՑ ԿԻՆԸ.— Ո՞վ էք դուք. ո՞վ էք դուք: (Լոռւթիւն):

ԱՄԵՆՔՆ ՏԱՐԵՑ ԿՈՅՑ ԿԻՆԸ.— Դթացէ՛ք մեր վրայ. (Լոռւթիւն. մանուկը աւելի յուսահատօքն կուլայ):

ՎԵՐՋ.

Էջ 89 վարեն Բ. Տոլին վրայ զետեղել.

Բ. Ի ԾՆՔ ԿՈՅՑ.— Ես ծովին ձայնը բնաւ չլսեցի:



Յ Ե Գ Ո Ւ Ա

Քիչ անգամներ եռ պատկերդ հոգիիս մեջ կը վերծնի,
Բայց կ'զգամ որ ժեզ կը սիրեմ միւս ամենէն աւելի։
Թարմ օրերուս վաս արեւը մքազնեցիր, զիտեմ, դու,
Սակայն կ'ուզեմ անեանալ առանց աշերդ մոռնալու։

Եւ մանաւանդ անուտ ձայնդ զգուանեռով լի, հնչուն,
Որ կը նմլ էր սիրս յոյզով՝ մեջէն բոլոր ձայներուն,
Նրկար ատեն կուրծս դողդոջ՝ ընդարւացած կը մնար
Մատուքներէ նոր ազդրւած իբր մենիկ մի ժնար։

Գեղեցկազոյն տրուցներով խիստ շատերը նանչցայ ես,
Ճակատն իրենց անսգիւտ էր ու խօսուածնին մեղրի պէս,
Ես երգեցի անոնց համար; բարեկամներս բո՞ղ պատմեն,
• Քեզի համար, սակայն, լացի, մայրս զիտէ, ո՞հ արդէն։

Այո՛, լացի. սակայն ցանցառ են արցունեներս ալ հիմայ
Հեծկլտուններ չունիմ այսօր, հաւաշանէս կը մնայ,
Ու կը հասնի ուտ այն ժամը՝ ուր աշերը կը ժլա՛տին
Եւ տիրութիւնս ալ այն ատեն տեղի կուտայ տաղտուկին։

Թունեցուցած ըլլալովդ ծաղիկը բարմ տարիքիս
Պիս՝ չկրնամ զիեզ ատել երբ ծերութիւնը պատէ զիս.
Թող վերածնի եռ պատկերդ հոգիիս մեջ տարունակ
Եւ բող ներեմ եռ հոգիիդ՝ իբր աշերուդ յիշատակ։

ԹՐԴՄ. Գ. ՇԱՊԱՆԵԱՆ
Աղեքսանդրիա, 1917

ՍԻՒԼԻ-ԲՐԻՒՏՈՒ





ՀԵՆՐԻԿ ԲԵՍԹԱԼՈՅՅԻ
ԶՈՒԻցերիացի Մեծ Մանկավարդ
(1746 — 1827)



ՀԵՆՐԻԿ ԲԵՍԹԱԼՈՅՑԻ ԻՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

ԶԱՐՁԱՐԱՆՔԻ ՃԱՄԲԱՇԵՐՈՒՆ ՎՐԱՑ ԻՅՆՈՂ
ՃԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա.

La prospérité d'un peuple dépend beaucoup plus
que son système d'éducation que de ses institutions
ou de son gouvernement.,,

Dr. G. Le Bon (Psychologie de l'Education)

ԵՕՀԱՆ ՀԵՆՐԻԿ ԲԵՍԹԱԼՈՅՑԻ ծնած է 12 յունվար
1748ին Ցիւրիխ։ Զուիցերիոյ հիւսիսային այն մասին մէջ, որ Պատի
Մեծ-Դքսութեան արեւելեան սահմաններուն վրայ կ'իյնայ, և ուր
ապրող բնակիչներ բողոքական են ու վերմանախօս՝ մեծ մասամբ:
Իր լեռները հազիւ 800 մէթր բարձրութիւն մը ունին, որոնց կո-
ղնրէն հոսող հազարաւոր ազբերակներ կը կազմեն Տհիւրի, Տօէսսի,
Կլատտի և Լիմմատտի նման զեղեցիկ զետակներ, որոնք օրն ի բուն
կը վազեն դալարազեղ ու կանաչ մարզերու և հովիտներու
մէջէն։ Բուսականութիւնը ճոխ է հոն, ու ամէն կողմ կը տեսնուին
մրգաստաններ իրենց ընտիր և պտղատու ծառերով։ Հարուստ արօ-
տավայրեր կը սնուցանեն հազարաւոր եղներու և ոչխարներու ան-
գեայներ, որոնք լեռներու կողերուն վրայ և մարմանդներու մէջ կ'ա-
րածեն ամբողջ օրը, իրենց բառաջով ու մայիւնով հովիտներու քաղ-
ցըրաբոյր ծմախները լեցնելով։ Բամսպակի, մետաքսի և երկաթեղէնի
յատուկ գործարաններ՝ հիմնուած ամէն կողմ՝ աշխատանքի առաս-
նիւթ կը մատակարարեն բանուորներուն։ Ցիւրիխ հոչակաւոր եղած
է մանաւանդ իր գպրոցներով, որոնք Զուիցերիոյ գպրոցներուն լա-
ւազոյններէն կը համարուէին։ Այսօր ալ անոնք առաջին տեղը կը

դրաւեն աշխարհի ամէն կողմ ցրուած կրթական յարկերուն մէջ։ Մինչեւ իսկ Ցիւրիխի արդի պինուորական վարժարանը յառաջլիմութեան շատ աւելի դրական ապացոյցներ տուած է, քան ուրիշ երկիրներու մէջ նոյն նպատակով հիմնուած հաստատութիւններ¹։

Դեռ ԺԲ. դարուն, Ցիւրիխ Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկը եղած է։ — ազատ քաղաք, ուր մտաւորական շարժումը միշտ վա՛ռ մնացած է։ Բնութիւնը անբաղդատելի գեղեցկութիւններով օժտած է Եւրոպայի այս մասը, ուր ամէն տարի հաղարաւոր զբոսաշրջիկներ կը տեղան զուարձանալու։ Ամէն ինչ սիրուն, «ամէն ինչ ցիւթական հմայքով մը պճնազարդուած է», պիտի ըսէր օր մը՝ Բեսթալոցի, Ալպեաններու հսկայական բարձունքէն դիտելով Զուիցերական լիճները, որոնք լևոներու ստորոտը կը մրջնա

Դեռ պատանի՝ Բեսթալոցի իր ուսումը աւարտեց իր ծննդավայրին մէջ։ որ ԺԲ. դարու յառաջլիմութեան վառարաններէն մէկը կը համարուէր։ Այդ թուականներուն Ցիւրիխը կը մրցէր Լայպցիկի հետ, ինչպէս Պոտմէրը Կոորդէախ հետ՝ ուր երեւան եկած գրական նոր շարժում մը աշաղրութեան առարկայ կը դառնար։ Հոն՝ 1758ին կէսնէր² իր Հովուերգուքի մեջնորդը կը հրատարակէր։ 1767ին, Լայպցիր՝³ մին Բեսթալոցի լաւազայն բարեկամներէն, իր «Հելուետիական Երգեր»ը լոյս կ'ընծայէր ձիչդ այդ թուականներուն էր որ Ցիւրիխ գերման բանաստեղծներուն ժամադրավայրը կը դառնար։ Վիլանտ,⁴ հոն՝ 1753ին Պոտմէրի ասպնջականութիւնը կը վայելէր, և դեռ իրմէ առաջ, 1750ին Քլոպսմօք⁵ յաղթական կ'ընդունուէր, արջապատուած

¹ ՏԵՍ Jean Jaurès — l'Armée Nouvelle էջ 236

² Կէսնէր (Սալունի) Զուիցերիացի նկարիչ եւ բանասեղծ, ծնած է Ցիւրիխի մէջ 1730ին եւ մեռած՝ 1788ին։ Վ. Գ.

³ Կօնան Գոսպար Լալարէր, հեղինակ բնագույնան քեօրիային, ծնած է Ցիւրիխի մէջ 1741ին եւ մեռած՝ 1801ին։ 1767ին նրանու սիրուեցած իր Schweitzerlieder «Հելուետիական Երգեր»ը, որով իր նոշակը շիմեց ու սիրուեցաւ։ Վ. Գ.

⁴ Քրիստօն Մատքէն Վիլանտ, (Գերմանացւոց Վոլքէրը) գերման գրագէտ։ ծնած է 1733ին եւ մեռած՝ 1813ին Սուլապի մէջ (Գերմանիա)։ Թարգմանած է Շեխտերի 22 բաներութիւնները։ Վ. Գ.

⁵ Ֆեկտէրիք Կորլիս Քլոպսմօք, գերման մեծ բանաստեղծներէն մէկն է, ծնած 1724ին եւ մեռած 1803ին։ Գոսպական մի ք մը՝ որ Վիեգիլիոսը եւ Հովերուը ուսում սիրելէ ետք գերմաններէն դիւցսպերգութիւն մը գրեց, որուն յաջորդեց իր «Messias»ը։ Վ. Գ.

ինը երիտասարներու և երիտանարդուհիներու կողմէ ու ծաղիկներով դրասաննգուած նաւակով մը զգայական պտոյտներ կը կատարէր, իր հիացողներուն Միսիա անուն անտիպ բանաստեղծական գործէն հատուածներ կարդալով :

Այս երգերուն մօտ, մտաւոր նոր և հումկու հոսանք մը կուգար իր հզօր ձայնը հնչեցնելու, հոսանք մը, որուն վերապահուած էր Եւրոպան մտաւորապէս յեղաշրջող ազդակներուն ամենէն զօրաւորներէն ըլլալու . այդ հոսանքը երեւան կուգար Ռուսոյի հրատարակած Ընկերային դաշնագրութիւն, ձառ անհաւասարութեան վրայ, Էմիլ, և լն գործերով, որոնք նոր դարու ոգիով յլացուած՝ զաղափարական մեծ շարժում մը կը պատրաստէին: Ժնէվցի մեծ իմաստասէրը, առաջին անգամ ըլլալով նորագոյն կամ լաւ եւս արդիական մանկավարժութեան մը հիմքերը կը դնէր իր Էմիլով և նոր Հելոխով. իսկ իր Ընկերային Դաշնագրութիւնով վեր ի վայր կը շրջէր սքօլասթիք և աստուածապետական ըմբռնումը ընկերային և պեկան արդի կազմին մասին: Ռուսօ իր այս գործնրով անհատին իրաւունքներուն ջատագովանքը կ'ընէր. զոյց կուտար անոր աղատ ապրելու և իրբեւ աղատ քաղաքացի ընկերային կեանքով շահագրգըռուելու անժխտելի իրաւունքները: Իր Էմիլով դեռ աւելի առաջ կ'երթար և հասունցած քաղաքացիին շահերը մատնանշելէ աւելի՝ մանուկ անհատին բարոյական և մտաւոր կարսղութիւններուն հանդէալ յարգալիր կեցուածք մը կը թելազրէր բոլոր անոնց՝ որ անոր դատիարակութեան գործով պիտի զբաղէին: «Սխալ է միշտ տղայոց պարտականութիւններուն մասին խօսիլ և երբեք՝ իրաւունքներուն»:
Ոչ ապաքէն «մանուկը մեզի չափ լաւ կը բնորոշէ գունհկութիւնը ազնուականութենէն, ստորենութիւնը՝ արժանապատութիւնէ, և երբեմն նոյնիսկ մեզմէ աւելի, որովհետեւ իրեն համար սրամաշուք մընէ ինքզինքը փոքրիկ զգալը. ան կ'ուզէ հասունցած անհատ մը դառնալ»²: Բնապաշտ իր խորքին մէջ, Ռուսօ կ'ուզէր մանուկը զըպրոցին արգելափակ պատերէն դուրս հանել՝ և աղատ բնութեան ծոցին մէջ աննախապաշար դաստիարակութիւն մը տալ անոր:

Անտարակոյս Ժնէվցի մեծ փիլիսոփային միտքերը ամենէն առաջի՞ր իոկ հայրենիքին՝ Զուիցերիոյ մէջ, արձագանգ պիտի գտնէին, հոն էր ամենէն աւելի ան ուշադրութեան աւարկայ պիտի զառնար: Արդարեւ համակրանքն ու հալածանքը հաւասարապէս իր բաժինը

¹ J. Jacques Rousseau — Emile.

² J. F. Herbart — Comment Elever nos Enfants Էջ 17

եղան։ Պէրնի և Հոլանտայի մէջ գասապարտեցին Էմիլի մէջ յայտնած միտքերը մինչեւ իսկ ժնէվ իր ծննդավայրը, ընդվզեցնող կեցուածք մը ունեցաւ իր այս մեծ զաւկին հանդէպ, ուր քանի մը տարի ետք (1754ին), սակայն, պիտի տօնուէր իր փառքը¹։ Ֆրանսա սկիզբը նոյնքան աններող կեցուածք մը ունեցաւ Ռուսոյի հանդէպ։ Հալածանքը հոն ալ ծայր տուաւ։ Ընկերային նոր իրաւակարգի մը անդրանիկ սերմերը իրմով ծաւալեցան ֆրանսայի մէջ, ուր Մարտոյի նման երիտասարդ և կարմիր յեղափոխականներ՝ դեռ ֆրանսական յեղափոխութեան նախօրեակին «ունկնդիրներու ընդհանուր խանդավառութեան և ծափերու մէջ Ընկերային Դաշնադրութիւնը կը կարդային»², կ'ըսէ Գօմբայրէ։ «Իր դարուն ամենէն հազուազիւտ ուամկալար փիլիսոփաներէն մէկը եղաւ Ռուսո և ասոր համար իր Ընկերային Դաշնադրութիւնը ահաբեկիչներու աւետարանը դարձաւ» կ'եղբակացնէ կիւսթալ լըպօն³։ Վերջապէս Ժամանակակից մանկավարժութեան հայրը՝ Ռուսո, Նէօշաթէլի ինքնակալին դիմեց օդնութիւն գտնելու համար Բովանդակ Եւրոպա գաղափարային նոր խմորումի մը մէջ էր, Ռուսոյի բաղդին կ'ենդարկուէին նաեւ Տիտըրո, Ալամպէր, Վօլթէր և ուրիշներ, անոնք մանաւանդ՝ որ հիմքը կը դնէին Փըրանսական մեծ համայնազիտարանին։ Նոր շարժումը լայն շրջան մը կ'ընէր ազատական Եւրոպայի մէջ։ Երիտասարդութիւնը խանդավառութեամբ կը հետեւէր անոր, «և ժան Ժակի ծայնն էր որ ամենից հուժկու որոտաց յեղափոխական ֆրանսայի ականջներին, նրա ողին էր, որ մի քանի տարի շարունակ սաւասնում էր խօլական թափօրների արիւնաներկ կրկէսի վրայ, բոցավառում էր ու թեւ տալիս դաժանադէմ Ժակօրիններին, Ռօբեռզիէռներին ու Դանտոններին։ Նախագահում էր և նորաստեղծ հանրապետութեան արմատական որոշումներին, սօցեալական ընդարձակ ոչֆօրմների ծրագիրներին ևլն»⁴։ Բեսթալոցցի անմասն չէր կրնար մնալ գաղափարական այդ կազդուրիչ հոսանքէն։ «Ամէն կողմ, կը զրէ Բէնլօշ, նուանդով կ'աշխատէին կրթական բարենորոգութեան, Նորդպարոցուսոյցները (néo humaniste) կը հետապնդէին դառական ուսումնասիրութիւններու վերանորոգումը Մարդասիրական գաղափարներով (philanthrop-

¹ Gustave Lanson.— Hist. de la littérature Française էջ 761

² Gabriel Compayré.— J. J. Rousseau et l'Education de la nature էջ 25

³ Gustave le Bon.— La Révolution Française էջ 3

⁴ Միհ. Վարանդեան.— Բողոքը նորագոյն պատմութեան մէջ. տպգ. Ժբնէկ 911, էջ 30

roniste) տողորուողներ կը զովարանէին ուսուցման մէջ «Աւօդրութիւն գրաւող հն սրբներու գործ սծութիւնը»¹: Ի քնէ զզայուն և արթընամիտ՝ ու դեռ շատ երիտասարդ մարդկային թշուառութիւններու ականատես՝ Բեսթալոցցի անսահման գորով ու գութ ունեցաւ բոլոր անոնց համար որ դժբաղդ էին ու ճնշուած բռնութեան ամրակուռ և ժանգուտած կապանքներուն տակ Ռուսօն, անկասկած Բեսթալոցցիի ու շաղրութիւնը պիտի գրաւէր, ինչ որ անխուսափելի էր արդէն: Բեսթալոցցի պարզապէս յափշտակուած էր *Contrat Socialement* և *Emile*ով: Այդ խանդավառութիւնը սակայն անզիտակ ու մանկունակ պատրանք մը չեղաւ երբեք, այլ լուրջ ու բանադատուած յափշտակութիւն մը, որ շեշտուեցաւ շատ խոր ու ամուր դրոշմներով մինչեւ վերջին օրերը իր կեանքին: Եւ իր մանկավարժութեան լայն զծերուն մէջ Բեսթալոցցի գերազանցապէս ռուսոյապաշտ մը մնաց: Երիտասարդութեան տարիներուն յաջորդող իր ծերութեան օրերուն իսկ՝ խօսելով Ռուսոյի մասին, ան կ'ըսէր. «Ռուսո հերքիւլեան ուժով մը խորտակեց մարդկային մոքին ու հոգիին կապանքները, ան մանուկին մէջ արթնցուց ձեւ ներէցութեան և ինքնազիտակցութեան ոգին, ու բնութիւնը մայր ճանչցաւ նույնիս դաստիարակութեան»:

Քանդ կը հաստատէ թէ. «ո՞չ մէկ զիրք կրցած է զինք այնքան ցնցել, որքան Էմիլը». Հէրդէր, կ'աղաղակէր. «Եկո՞ւր Ռուսո, առաջնո՞րդս եղիր»: Քարոլինի համար Էմիլը «երկնային զիրք» մընէր: Կէօթէ, «ուսուցիչներու Աւետարանը» կը կոչէր զայն. Շիլէր, Նոր Սոկրատը կ'անուանէր Բեսթալոցցին: Բայց ո՞չ Քանդը, ոչ Կէօթէն, ոչ Շիլէրը և ո՞չ ալ այն հոչակաւոր փիլիսոփաներն ու մանկալարժները, որոնց մէջ պէտք է դասել Ժան-Բոլ Ռիխթըրը, Ֆրէօլիէլը, Հայնսը, Ժաքօվինը, Հիւմը, Ճօն Մըրլէյը և նոյնիսկ Հէրպէրթ Սրէնսըրը, ժամանակակից Անգլիոյ վերջին ամենէն մեծ տեսաբան-մանկալարժը, կրցան այնքան խորապէս զզալ ու սիրել Ռուսօն, որքան զզաց ու սիրեց Բեսթալոցցին ինք էր մանաւանդ, կը զրէ «Իօմբայրէ»², որ ջանաց ժողովրդականացնել Ռուսոյի գործը Նոյնքան անվարանօրէն: Իր լուրջ մէկ ուսումնասիրութեան մէջ Հարալտ Հէօֆֆտինսկ կ'ըսէ. «Շնորհիւ մանաւանդ Բեսթալոցցիի և Պաղէտոնի՝ Ռուսոյի մանկալարժական հայեացքները ԺԹ դարուն յաղթող հանդիսացան և մուտք գործեցին դաստիարակչական գործին մէջ»³:

¹ Pinloche.— La Réforme de l'éducation en Allemagne au XVIII siècle

² Gabriel Compayré.— J. J. Rousseau էջ 96

³ Harald Höffding.— J. J. Rousseau et sa philosophie էջ 155

Հերակարտով աւելի լաւ պիտի կրնայինք ուսումնասիրել Բեսթալոցցին, Կ'ըսէ Տք. Մակէր, գերման հեղինակ մը, (Գօմբայրէի յիշատակութիւն) սխալ պիտի չըլլար աւելցնել թէ Բեսթալոցցին ուսումնասիրած ատեն Ռուսօն զանց առնել համբակութիւն պիտի նշանակէր, որովհետեւ իր դրական ու բացասական գծերուն մէջ ան Ռուսոյի հետեւող մը եղած է^{1:}

Մինչդեռ Ժընէվ կը դատապարտէր Ռուսօն, հետեւելով Ֆըրանսոյի օրինակին, Ցիւրիխ պաշտպան կը կանգնէր անոր։ Յեղափոխուած՝ երիտասարդութիւնը կը համախմբուէր քաղաքական և ընկերային պահանջներով։ Անստորազիր հրատարակութիւններ հրապարակ կ'ելլէին յարձակողական և խիզախ ոգիով մը գրուած, հին կարգերու դէմ պայքարի դրօշակը տակաւ կը պարզուէր։

Պայքարի այդ օրերուն էր որ կը հասուննար Բեսթալոցցի, թէեւ տակաւին քսան տարեկան, բայց նոր վարդապետութեան երդուեալ հետեւող մըն էր։ Անզամ մը պետութեան դէմ լարուած դաւադրութեան մը մէջ իր, Լավաթէրի և ուիշներու մասնակցութիւնը տեսան ու շատերուն հետ զինքն ալ տուզանքի ենթարկեցին։ Երիտասարդական այդ պայքարներուն մէջ է որ Բեսթալոցցիի նկարագիրը դարբնուեցաւ և ան մնաց (միշտ ազատական՝ և բոնաւորներու դէմ՝ պաշտպան խելձերուն ու ձնշուածներուն)։²

Հասարակական կամ լաւ եւս ընկերային կեանքի մօտ ընտանեկ ան կեանքն ևս խոր ազդեցութիւն մը ունեցաւ իր նկարագրի կաղմութեան մէջ։

Հայրը վիրաբոյժ Ցիւրիխի մէջ՝ մեռաւ երբ դեռ ինք վեց տարեկան էր, թողլով իր ընտանիքը թշուառութեան մէջ։ Իր գորովի մօր խնամքը լայն տեղ մը բռնեց Բեսթալոցցիի նկարագրին կաղմութեան մէջ, ան իր զաւակը սիրեց անսահման սիրով մը, ինչպէս սիրած էր իր միւս զաւակները, մանչ մը և աղջիկ մը, և զոհեց իր բոլոր հանգիստն ու երջանկութիւնը ու ջանաց խնամու դաստիարակութիւն մը ընձեռել իր փոքրիկներուն։ Գօմբայրէ բաղդատական քանի մը տողերու մէջ վեր հանելով Ռուսոյի և Բեսթալոցցիի նկարագիրներուն տարբերութիւնը՝ ընտանիքի մէջ կը զտնէրուն պատճառը Արդարեւ, Ռուսօն մօր Է զուրկ՝ անհոգ հայր մը ունեցաւ, այդ իսկ զուցէ եղաւ պատճառը, որ օր մը, հայրը ինք ալ անտարբեր զտնուեցաւ իր զաւակներուն հանդէպ, զանոնք յանձնեց պետութեան խնամակալութեան³ ու ջատագով եղաւ ընկերային այն

¹ Poul-Monroe.— Histoire de l'éducation, էջ 307.

² G. Campayré.— Pestalozzi, 14-15

³ J. J. Rousseau.— Les Confessions

իրաւակարգին, ուր պետութիւնը պիտի ստանձնէր ծնողքի դեր նորածիններու նկատմամբ։ Շատ ուշ միայն Ռուսո ըմբռնեց իր զործած սխալը¹։ Բեսթալոցցի լնդհակառակը ընտանեկան յարկին տակ փնտուց մեծագոյն դաստիարակները՝ հայր և մայր՝ պիտի ըլլային մանուկին առաջին քայլերը առաջնորդողները անոնց պիտի ըլլար, ուրեմն, մեծագոյն պատասխանատուութիւնն ու վարձատրութիւնը մանուկին նկարագրին և անհատականութեան կազմութեան գործին։

Կրթութիւնը ընտանիքէն — ծնողքներ առաջին դաստիարակները մանուկին, — Բեսթալոցցիի մանկավարժութեան մաս կը կազմէր։ Իր վէպերէն մէկուն մէջ՝ Լիննարտ և Գերդրուդ², վէպ՝ որ մեծ ընդունելութիւն գտաւ և որուն համար Պէրնի իյնայողական Ընկերութիւնը 50 տուքադ և ոսկի շքադրամ մը զրկած էր իրեն, «Լաւագոյն Քաղաքացիին» արձանագրութեամբ, և զոր Բրուսիոյ Լուիզ Թագուհին կարդալէ վերջ յարած էր։ «Կը փափաքէի անսնել Բեսթալոցցին և ըսել իրեն։ — Յանուն մարդկութեան ընդունէ իմ շնորհաւորութիւններս»³, Բեսթալոցցի կը նկարագրէ որ Արները և զիւղին երէցը, Գլիզֆին (վէպին անձնաւորութիւններէն մին) ուսուցչութեան պաշտօնի կը կանչեն այն պահուն միայն՝ երբ կ'ըստուգեն որ այս վերջինը իր տանը մէջ արդէն անձամբ խնամու դաստիարակութիւն մը կուտայ իր զաւակներուն։

«Կրութիւնը ընտանիքէն», դաստիարակութեան մէջ նոր ուղղութիւն մը չէր որ կը քարոզէր Բեսթալոցցի իր այս խօսքերով. Ռուսո արդէն տարիներ առաջ ըստած էր նոյն խօսքերը. «Ուշադիր մայր մը իր զաւակին կիրքերը կրնայ սանձահարել»⁴։ Ուստի և կը ռնայ անոր նկարագիրը կազմել, կ'աւելցնէ Հելվէցիուս, եթէ սակայն աղախիններ ու ծառաներ կարնեան դաստիարակութեան պահանջած պայմանները (բացնել)⁵։ Եւ արդէն ո՞չ ապաքէն մանուկին թերութիւնները ծնողներու թերութեանց հետեւանքն են, և ժառանգականորէն ծնողքներէ իրենց զաւակներուն փոխանցուած ունակու-

J. J. Rousseau. — Emile Նութեղէս Lettre à Mme. B... 17 Janvier 1770

¹ Այս վեպը սարդէն ուսւահայերէնի բարգմանուած է։

² Է. Պալապանեան. — Արեւելեան Մամուլ. 1896 թիւ 11, Բեսթալոցցի

⁴ J. J. Rousseau.— La Nouvelle Héloïse ՀԱՑ. 5, էջ 158

⁵ Helvétius.— De l'Homme V. V.

թիւններ, ինչպէս կը հաստատեն քնապաշտ փիլիսոփայութեան հետեւողներ¹:

«Ընտանեկան կրթութիւնը հանրային վաղահաս կրթութենէն զերադասելի է, կ'ըսէ Տքթ. կարնիէ. ան տղայոց մէջ կը ջնջէ իրենց բնութեան և խառնուածքին կնիքը. լաւ մայր մը միայն ընդունակ է չարիքի սերմերը արմատախիլ ընել տղուն մէջն²: Ֆրէզ պիտի ըսէր. «Մայրը առաջին մանկութեան ճարտարագէտն է»:

Բեսթալոցցի դաստիարակութեան մէջ ծնողքին զլխաւոր գեր մը վերապահելով՝ իրեն նպատակ ունէր զտնել եղանակ մը, որ ամենէն աւելի զինք կարենար մօտեցնել մանուկը բարի և զզայուն քալաքացի մը դարձնելու: Ծնողքին սէրն ու զուրգուրանքն անհրաժեշտ կը նկատէր այդ բանին համար. մանուկը չոր ու ցամաք անհատ մը դարձնելէ առաջ՝ ան կը փափաքէր տեսնել զայն ընտանեկան տաքուկ միմնոլորտին բարիքներով շրջապատուած. իր այս իշխն համար թերեւս յիշէր Ռուսոյի մէկ խօսքը Էմիլի մէջ. «Թողէք որ իրենց մանկութեան զուարձանան փոքրիկները, որովհետեւ կեանքը, ապացան, շատ դառնութիւններ վերապահած է անոնց»:

Դեռ շատ երիտասարդ, Բեսթալոցցի ինքոյինքը ուսումնասիրութիւններու նուիրեց: Աստուածաբանութիւնը, որուն պահ մը հետեւած էր, շուտով տեղի տուաւ աւելի դրական և հիմնական ուսումնիքը: Ազատութիւնը մինչեւ իր երակներուն մէջ զզացող զուիցերիական արդի մանկավարժութեան հիմնադիրը՝ Ռուսոյի յառաջ տարաւ իր ուսումնասիրութիւնները: Բնապաշտութիւնը հիմքը կազմեց, ուրեմն, իր փիլիսոփայութեան, որուն վրայ հիմնուած՝ ուսումնասիրեց արդի ընկերային կեանքի օրէնքները և կարգ ուսարքը: Ի բնէ հակամէտ քաղաքական կեանք մը ապրելու, հետամուտ եղաւ ուսումնասիրելու մարդկային հին ու նոր օրէնքներն ու իրաւակարգերը Դեռ քսան տարեկան էր, երբ սպարտական օրէնքնըսպիտութեան մասին ուսումնասիրութիւն մը կատարեց: Բայց միայն դաւանական և դասական հեղինակներու զործերը չէին որ կը հետաքրքրէին զինք, կը զրէ Գոմբայրէ, այլիւ ընկերային կեանքը, զոր խորապէս ուսումնասիրելու համար արդէն պարսրտ հող կար: Բեսթալոցցի իր դպրոցական արձակուրդները կ'անցնէր մերթ իր հաւոււն՝ քարոզիչ Բեսթալոցցիի մօտ, և մերթ ալ Ռիխթէրշվայլ՝ բժիշկ Հոյի՝ իր մօրեղբօր մօտ Անոնց ընկերակցութեամբ կ'այցելէր աղքատներուն և թշուառներուն կը դիտէր չքաւոր ժողովուրդին ու

¹ H. Spencer. — De l'Education intellectuelle, morale et physique
էջ 176

² Dr. P. Garnier. — Le Mariage et ses façons. Education des enfants 575

հէզ զիւղացիութեան տառապանքը, կը լսէր անոնց տրտունջները և իր սիրտը անսահման գորովով ու զթութեամբ կը լեցու էր: Այդ շըրջանը, ուրեմն, կերտեց իր մէջ պատուաւոր և զգայուն մարդը: Յեղափոխութեան մը զաղափարը, որով կը կարծէր յեղաշրջել մարդկային անարդար իրաւակարզը, ծնած էր իր մտքին մէջ. և արդէն իր նախնիքները ազատական նոյն զաղափարներու համար չէր որ զեռ ժարուն իսաւիայէն զաղթած էին Զուիցերիա: Բեսթալոցցիի համար յեղափոխութիւնը դպրոցով, կրթութեամբ, դաստիարակութեամբ միայն կարելի էր յառաջ բերել, որուն համար պատրաստը ևցաւ ինք և օր մը, հակառակ ամէն կարգի դժողակ զրկանքներու, կամովին հայրը եղաւ հազարաւոր որբ և անտէր մանուկներու, զորս խնամեց և դաստիարակեց բարի եւ հարազաւ հօր մը նման:

Բեսթալոցցի ամուսնացաւ երբ զեռ քսան տարեկան էր: Իր կինը, Աննա Շիւլթէս, արժանի ընկերուհի մը եղաւ իրեն ու մինչեւ իր մահը բաժնեց իր երջանկութիւնն ու վիշտերը: Ընտանեկան այդ քաղցրութիւնը, որ հազուադէպօրէն կրնար վրդովուիլ, թերեւս աւելի խոր պատճառներ ունէր, որովհետեւ Բեսթալոցցի: Իր ամուսնութենէն առաջ ապագայ իր ընկերուհիին կ'իմացընէր իր ունեցած հակումներն ու թերութիւնները: Աննա Շիւլթէսի գրած իր նամակներէն մէկուն մէջ կ'ըսէր ան. «Մարդկային տառապանքին հանդէպ անտարբեր երբեք պիտի չկրնար մնալ ինք. և եթէ հարկ ըլլայ, պատրաստ է խորտակելու իր երջանկութիւնը ուրիշներու վիշտն ու կակիծը ամոքելու համար, թէ ամուսին մը ըլլալէ առաջ քաղաքացի մըն է ինք, — քաղաքացի մը մանաւանդ Ռուսոյի հասկացողութեամբ — թէ պիտի տառապի ինք և թէ պէտք է մանաւանդ տառապիլ ու զոհուիլ զիտնալ. թէ հարկ է անհատական և ընտանեկան երջանկութիւնը ստորադասել համայնական և ընդհանուր երջանկութեան»¹: Ապագայ մեծ մարդը կը թագնուէր այս տողերուն ներքեւ, ան որ մարդկութեան մեծագոյն բարերարներէն մին պիտի դառնար օր մը, քաղաքակրթութեան անիւը աստիճան մը եւս առաջ մղելով: «Եւ պէտք չէ մոռնալ և թագնել երբեք որ միայն միծ անհատականութիւնն է աղբիւրը և առանցք քաղաքակըրթութեան»²:

Աննա Շիւլթէս հակառակ իր ծնողաց սեւ կամքին՝ իր ձակատազիրը միացուց Բեսթալոցցիի ձակատազրին: Իր վճիւր բնաւդառն չեղաւ իր կեանքին ապագայ օրերուն համար: Սիրեց իր ամու-

¹ G. Compayré.— Pestalozzi, էջ 18

, Georges Brandès.— Le Grand Homme, էջ 62

սինը գորովով մը՝ որ միայն կեանքի խմաստութիւնը բնազդօրէն զգալու բացառիկ ընդունակութիւն ունեցող իր սեռէն էակներու տըրուած է, և հապարտ զգայ ինքղինքը ընկերուհին տեսնելով անոր, որուն կոչումը նուիրական էր և որուն փառքը ապագայ դարերու հետ աւելի պիտի մեծնար: Նախ յօդուածազիր և ապա ուսուցիչ եղաւ Բեսթալոցցի, և ինքղինքը նուիրեց մարդկութեան, որ երբեք չյամեցաւ իր անունը մեծ մարդոց այն փաղանգին մէջ զետեղելու, որոնք քաղաքակրթորթեան ջահակիրները եղան: 17 փետրուար 1827 Բեսթալոցցի զոցեց իր աչքերը յաւիտեան՝ մըմնջելով. «Առանց վշտի կը մեռնիմ ես: Կը ներեմ թշնամիներուո և կ'օրհնեմ բարեկամներս»:

ԲԵՍԹԱԼՈՅՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Բ

Բեսթալոցցիի մանկավարժութիւնը հանգիտութիւն մը ունեցաւ իր կեանքին հետ Բանաստեղծ ի բնէ խառնուածքով՝ պօհեմի կեանքը եղաւ իր սիրած ու ապրած կեանքը: Իր հագուելակերպին մէջ որքան անփոյթ, նոյնքան անտարբեր մնաց իր մասին եղած քննադատութիւններուն: Մանկավարժական դրութիւն մը փիլիսոփայական հասկացողութեամբ՝ զրեթէ բացակայեցաւ իր մօտ իր երկերը, որոնք 15 հատորներու մէջ ամփոփուած են, յաճախ ինքնակենսագրութիւններ են՝ մերթ վէպեր, երբեմն կրկնութիւններ՝ շատ անզամ կեանքի նոր փորձառութիւններէ քաղուած սկզբունքներ, բայց երբեք փիլիսոփայական կամ խմաստասիրարան դրութիւն մը, ինչպէս ըրած են օրինակի համար. Տէքարթ մը, Սրինոզա մը, Քանդմը, Հէկէլ մը, և լն և լն Եւ արդէն Բեսթալոցցիի կը պակսէր այդովին: Խառնուածքով՝ ծայրայելորէն զգայուն և ընկերային՝ ֆօրմիւլներու և տեսարանական դարձուածքներու անձուկ կաշկանդումներուն չէր կրնար հանդուրմել բնաւ: Դիտել մանուկը Եւ ֆնել ու ուսումնասիրել անոր հոգե-քնախօսական կարողութիւնները, ուսումնասիրել նաև բնութիւնը Եւ այս երկու ուրոյն ազդակներուն միջեւ գտնել զարգացման գիծեր, միուրեան եզրեր՝ ու իբրեւ օրէնք, իբրեւ հեմարտութիւն կիրարկել զանոնք դաստիարակութեան գործին մէջ, — ահաւասիկ իր փետական ածածը, իր դաւանածը:

Այս տեսակէտով իր մանկավարժութիւնը Ռուսոյի բնապաշտ փիլիսոփայութեան ձգտող զիծ մը ունի իր մէջ, բնապաշտութիւն մը

որուն վրայ, սակայն, ինչ ինչ փոփոխութիւններ և նորութիւններ պիտի աւելցնէր վերջը Բեսթալոցցի, բնութեան կոյր օրէնքներէն ձերբազատելու համար մանուկը: 1775ին, երբ դեռ քսան և ինը տարեկան էր, Բեսթալոցցի Նէօհոֆի (Aargam) մէջ իր սեփական կալուածին վրայ բացաւ իր դպրոցը, որ ձեռական աշխատութիւններու սահմանուած հաստատութիւն մըն էր զլխաւորապէտ իր քսաններեք տարեկանին զաւակ մը ունեցաւ՝ Ժաբրլին, որուն վրայ կատարեց մանկավարժական առաջին փորձերը: Ժաքըլին փորձառութեան աղբիւր մը եղաւ իրեն համար, Ժաքըլին զոր անսահման գորովով մը սիրեց ինք, անոր սրտին ու հողիին մէջ կարդաց մանուկին սիրտն ու հողին: Սիրեց զայն, ինչպէս կը սիրէր իր բոլոր աղքատ և որր աշակերտները, որ փողոցներէն ժողված՝ Նէօհոֆի իր դպրոցին մէջ կը կերակըրէր ու կը կրթէր՝ իր զաւկին հետ հաւասարապէտ:



ԺԱՆ-ԺԱԳ ՌՈՒՍՕ

Ու եղբակացուց իր մանկավարժական հայեացքները կարգ մը խօսքերու մէջ: Ինչպէս «Ամենաշնչին արժեք մը իսկ պիտի չունենային ուսուցման բոլոր եղանակները, որոնք մանուկին զուարքութիւնն ու նախաձեռնութիւնը կը փնացնեն» :

Մանկավարժութեան մէջ հարողուած բոլոր այն խօսքերը, որոնք իրականութեան նետ ոչ մէկ աղերս ունին, անիմաս նաևարտակութիւններ են:»

«Ծիծալը, ժպիտը, երկնային պարզեւներ են, բողէք որ ծիծալին ու զուարենան մանուկները, մանաւանդ ջանացէ՛ք անոնց մէջ զուարքութիւն արբացնող առիթներ սեղծել:»

«Մի՛ ձգէք մանուկները բառերու լաբիւրինքոսին մէջ, աշխատեցէ՛ք իրողութիւններով ու փասերով կազմել ու զարգացնել անոնց միտքը:»

«Բնութիւնը մեծագոյն դասիարակն է:»

«Մանուկը բնութեան եւ իր միջեւ միջնորդի պետք չունի»
«Ինչ որ առողջ չէ իր սերմին մէջ, պիտի վիժի երբ որ մեծնայ»
«Ծանօթութիւնը իր մօտեն կ'սկսի ուրկէ հետզինետէ կը ծաւալի».

Կեռ կարելի է երկարել շարքը իմաստալից և փորձառապէս
ձեռք բերուած այս խօսքերուն, որոնցմէ ոմանք իրմէ առաջ և իրմէ
վերջ ալ յեղյեղուած են արդէն։ Յիշատակենք մէկ քանի օրինակ։

«Տղայոց միտքը վերացական գաղափարներ կը խնողեն, ինչ որ
չեն կրնար ըմբոնել, մինչդեռ բնութիւնը զանոնք իրեն կը կանչէ
այնքան տօսափելի իրողութրւներով։»

«Պէտք է ուսումնասիրել, բնել բնութիւնը որ պիտի զգու-
ացնէ մեզ իր օրենքներուն հակասող բոլոր անպատճութիւններէն։»

«Իեր դաստիարակութիւնը սոսկ իմաստակութիւն է՝ մեզի ամեն
ինչ կը սորվեցնեն բնութեան օրենքներու նի՛շդ հակառակ։»

Այս տողերը թիւրկոյինն են, որ զրած է Բեսթալոցցիէն առաջ:
Բաղդատական ուսումնասիրութիւն մը եթէ փորձէինք ընել, դևո
պիտի կրնայինք Տիտրոյէն, Ռուսոյէն, Ֆէնէլոնէն նմանօրինակ տո-
ղեր բերել, հաստատելու համար այն ծշմարտութիւնը թէ բացարձակ
մերու մը բոլոր կլ իմաներու եւ բոլոր պայմաններու տակ՝ յանախ
անհասկեալի է, ինչ որ ինք, Բեսթալոցցի իսկ կ'ըսէր. «Անգղն ու
արծիւը իրենք իսկ պիտի չկրնային ուրիշ թուչուններու բոյնին մէջ
հաւկիթներ գտնել, եթէ նախապէս այս վերջինները ձգած շըլլային
հոն գանոնք»։ Եւ ինչպէս կը խոստովանի թոլովոյ. «Դործնականին
մէջ, շատ մը ուսուցիչներ, իրերու հարկադրութեամբ կը զործեն,
ինչպէս Եասնախա Բոլիանայի ուսուցիչներէն մին, որ զերման նոր
մեթոտով մը ուսուցանելու տեղ, որ զերազանցապէս յիշողութիւնը
զարգացնելու դրութեան մը կը վերաբերէր, ամէն ինչ զոց կը սոր-
վեցնէր, առանց դրութեան և առանց արդիւնքի»։¹

Եւ արդէն ԺԹ դարու ո՛չ մէկ մանկավարժ այդ տարամեր-
ձութիւնը (exclusivisme) քարոզեց, կը զրէ Մէնտուս։ Ուրեմն
կ'արժէ աւելի մօտենալ Բեսթալոցցի զործին և գտնել բուն իսկ այն
խորունկ զիծերը. որոնք իբր մանկավարժ երեւան կը հանեն ուսու-
ցանելու իր անմխտելի կարողութիւնները։

Հսկնք անմիջապէս որ Բեսթալոցցի ամբողջ իր կեանքին մէջ
մնաց զերազանցապէս մանուկներու դաստիարակը, իր դերը պար-
փակուեցաւ աւելի ա՛յն հաստատութիւններէն ներս՝ որ նախակըր-
թարսնի վարի մէկ քանի կարգերը կ'ընդգրկէ։ Կրթական այդ յարկը

¹ Tolstoï. — La liberté dans l'école, էջ 264

P. Mendousse. — Du Dressage à l'éducation, էջ 112.

եղաւ իր նախասիրած վայրը և կատարելապէս անընդունակ ու վարչապէս անձեռանահաս ճանչցուեցաւ ան հաստատութիւններուն մէջ որ վարժարան անունին տակ ծանօթ են և ուր կոչուեցաւ պաշտօնավարել, ինչպէս պարագան է իվէրտոնի մէջ իր տեսչութեան իր ընկերային դաւանանքներուն ծառայելու և մանկավարժութեան մէջ իր առաջադրած զաղափարները իրազործելու համար Բեսթալոցցի կը դաւանէր բարելաւել զիւղացիութեան տնտեսական և մտաւորական կեանքը, այն զիւղացիութեան մանաւանդ, որ աւատապետներու ծանր լուծին տակ տքնածան կը հեծէր:

Մինչդեռ Ռուսոյի տեսակէտով «աղքատը ուսման պէտքը չունի, իր վիճակը կը հարկադրէ զայն, և պիտի չզիտնար ուրիշ մը ունենալ», Բեսթալոցցի աւելի եռանդուն ու գործնական՝ կը ջանար համայնացնել կրթութիւնը : «Այս տեսակէտով ան շարունակից Ռուսոյի աշխատանքը, երբ յուզուած ամբոխին բարոյական անկումէն՝ ժողովրդացին կրթութեան դրութիւնը որդեգրեց»¹:

Ի ընէ երազներով ու յոյսերով ապրող՝ Բեսթալոցցի կարծեց թէ զիւղական ազարակ մը բաւական պիտի ըլլար ապահովելու իրեն հարստութիւն մը զոր ուխտած էր տրամադրել զիւղացիութեան տընտեսական բարելաւման Ռուսոյ սկսաւ հողամշակութեան և առջի պատերութեամբ հիմնեց Նէօհոֆի իր անդրանիկ դպրոցը, 10էն 20 տարեկանի մօտ 20ի չափ աշակերտներով, մեծ մասամբ որբ, ումանք կատարելապէս ստահակ:

Աշակերտներու ընտրութեան մէջ Բեսթալոցցի ընաւ խորութիւն չէր գնիեր, մանաւանդ աւելի աշակրութիւն կը դարձնէր անոնց որ խնամքի և օժանդակութեան շատ աւելի մեծ պէտք ունէին Աշակերտներէ սմանք, հակառակ իր ծայրայել բարութեան, ձեռք մը ձրի զգեստի և զոյզ մը կօշիկի տիրանալէ վերջ՝ ալ անդամ մըն ալ երեւան չէին ելլեր²: Բեսթալոցցի իր ըրածին անզիտակ մէկը չէր սակայն, երբ ինք խսկ կ'ըսէր թէ. «ամենազուեհիկ մարդկութեան մը նմոյշներն էին իր աշակերտները»³ ։ Բայց չէ⁴ որ ճշմարիտ մանկավարժին դերը կը կայտնար ուսուցման այն եղանակը զտնել, որով ամենէն աւելի վստահօրէն պիտի կրնար մանուկին էութեան մէջ թագնուած յոտի կողմերը չէզոքացնել ու բարիին և զեղեցիկին զզացումը արթնցնելով կազմել անոր կամքը և նկարագիրը Ահա այս խոր համոզումով Բեսթալոցցի մօտեցաւ իր զործին, և անձնուիրութեամբ լեցուն՝ առաջ տարաւ զայն ամէն տեսակ բիրտ զրկանքներու կործք տալով:

¹ J. J. Rousseau.— Emile, I

² Harald Höffding.— J. J. Rousseau et sa philosophie էջ 154-55

³ G. Compayré.— Pestalozzi, էջ 22

Նէօհոֆի (Նոր-Ազգարակ) իր դպրոցը մտաւոր և ձեռական աշխատանքի յատուկ դպրոց մըն էր, ուր յաճախող աշակերտներ օրուան մեծ մասը կ'անցնէին պարտէզին և պանրատան մէջ։ Ամրան և զարնան՝ բացօղեայ աշխատանքներ կը կատարէին, իսկ ձմրան՝ դաշտային և պարտէզի ձեռական աշխատանքին սենեկի աշխատութիւնը կը փոխարինէր, ուր երկսեռ աշակերտութիւնը մանել, հիւսել և տարազագործել կը սորվէր վարպետ ջուլհակներու մասնաւոր խնամքին առարկայ։

«Նախնական ուսումը ձեռարուեսին հետ համբնիքաց» Բեսթալոցցիի որդեգրած հիմնական սկզբունքներէն մին էր, — սկզբունք՝ զոր իրմէ վերջ որդեգրեցին շատեր, Ֆրանսայի, Ամերիկայի, Գերմանիոյ մէջ։ Եւ որ այսօր շատ մը դպրոցներու ծրագրին մաս կը կազմէ։

Նէօհոֆի մէջ Բեսթալոցցի իր աշակերտներէն ամենէն ընդունակներուն կը հայթայիթէր միեւնոյն ատեն մտաւոր զբաղումներ, ու շադրութիւն դարձնելով մասնաւորապէս լեզուներու, կրօնի և բարոյագիտութեան։

Իր առօրեայ կեանքը համակ գործունէութիւն և սէր էր, այս բառերուն մէջ պէտք է փնտռել բովանդակ արժէքը Բեսթալոցցիի մանկավարժութեան։ Եւ արդէն մեթոտի մը յաջողութիւնը կախուած է զայն կիրարկելու եղանակէն, և եթէ «բեսթալոցցեան դրութեամբ հիմնուած դպրոցներ մինչեւ այսօր շատ մը երեւելի անձեր չեն ընձեռած, կ'ըսէ Հէրպէրտ Սբէնսըր, պատճառը այն է որ համբակ արհեստաւորի մը ձեռքին մէջ լաւագոյն գործիքն իսկ յոռի գործ կը տեսնէ»²։

Զրկանքը, որ շուտով կը յաջորդէր Նէօհոֆի իր այս ձեռնարկին, բնաւ չյուսահատեցուց զինք։ Ան յանձն առաւ կորովի ու բարոյականի մեծագոյն դասը իր անձին օրինակով իսկ սորվեցնել աշակերտներուն, ուստի ապրեցաւ զրկանքի մէջ, բայց հպարտ եղաւ ըսելու։ «Մուրացիկի պէս կ'ապրիմ ես աշակերտներուս մէջ, որպէս զի անոնք սորվին մարդու պէս ապրիլ» Բեսթալոցցի իր աղքատիկ աշակերտներուն հետ կ'անցնէր ամբողջ օրը։ Կը շնչէր նոյն օդը, կը ճաշէր նոյն սեղանէն, կ'ուրախանար անոնց հետ, ու կ'արտասուէր անոնց համար, ամէն անզամ երբ զրկանքը կը մօտենար իր հաստատութեան դոներուն։

Եթէ Ժաքլին մանկավարժորէն Բեսթալոցցիի առաջին փորձա-

¹ René Le Blanc.— La Réforme des l'école primaires — supérieures. Omer Buys.— Méthodes Américaines d'éducation générale et Technique.

² H. Spencer.—l'Education intellectuelle, morale et physique, 111

ուսթեան հանգրուանը դարձաւ՝ Նէօհոֆը իրեն ընծեռած մանկավարժական բոլոր նոր տեսութիւններուն հետ՝ նիւթական քայքայումի առաջնողեց զինք. և հակառակ իր մէկ քանի անձնուէր բարեկամներու նիւթական ջանքերուն, որոնց մէջ կ'արժէ յիշատակել Պալցի մարդասէր իզրլինը և մանաւանդ Էլիզապէթ Նէօֆը՝ աղախին մը, որ ինչպէս Պապէլի իր սպասուհին՝ նիւթական և բարոյական ամէն զոհողութիւն շխնայեցին փրկելու զինք Նէօհոֆի մէջ իրեն սպառնացող վտանգէն ի զուր, սակայն: 1780ին Նէօհոֆ վերջապէս կը փակէր իր դոները: Հոն էր որ Բեսթալոցցի զրեց իր մէկ քանի ընտիր գիրքերը. Լինարտն ու Գերդրուտը (1782ին), ճշմաւորի մը Երեկոն (1780ին), Քրիստոֆ եւ Էսլենը (1782ին), և լու:

Սթանսի դպրոցը, որ 18 տարի վերջ գործունէութեան երկրորդ շրջանը պիտի կազմէր իր կեանքին, երբեք չունեցաւ իրեն համար այն կազդուրիչ կախարդանքը՝ զոր ապրեցաւ Բեսթալոցցի Նէօհոֆի մէջ, ուր ժաքըլինի հայր եղած էր, և ուր ապրեցաւ ինք իր վերջին օրերը ու զրեց Կեանիս ձախտագիրը և Կարապի Երգը անունով տեսակ մը ինքնակենսագրութիւնները:

1798ին Հէլվէտիական Դաշնակցութիւնը Սթանի իր վարժարանին տնօրէն կը կարգէր Բեսթալոցցին, ճիշդ այն պահուն որ Նարոլէն Պոնարարդ իտալիա կ'արշաւուէր: Սթանսի դպրոցը հազիւ քանի մը ամիս կեանք ունեցաւ, որոնք բաւական եղան սակայն իր անունին շուրջ համակրանք ստեղծելու:

Ճօքէ լրագրողը, որ առիթը կ'ունենար Սթանսի վարժարանը այցելելու, այսպէս կը նկարագրէր զայն. «Երբ դասարանէն ներս մտայ, աշակերտներ այնքան մեծ խանդով ու ոշագրութեամբ իրենց զործին փարած էին, որ հազիւ զլուխնին իր կողմս դարձուցին Ռմանք կը զծագրէին, ուրիշներ թուաբանական խնդիրներ կը լուծէին: Բեսթալոցցի առանձինն կը վարէր դպրոցը. իրեն աջակից ունենալով աշակերտներուն ամենէն կարողներն ու յառաջադէմները: Այս վերջինները կ'օգնէին աւելի փոքրիրուն Աշակերտներ երեքական հոգի խմբակներուն բաժնուած՝ իրենց մէջտեղը կ'ունենային առաջնորդ մեծը՝ որ թեւերով իր փոքրիկ ընկերները զրկած՝ կը բացարէր ու կը սորվեցնէր անոնց իրենց դասերը: Այս կերպով փոքրիկներուն մէջ ինքնապիտակցութեան ողին կ'արթննար, ու դպրոցը կը դառնար ընկերական սիրոյ վառարան մը»: Պիւղինքէր երէղը՝ Սթանսի այցին՝ հիացումը սապէս կը յայտնէր. «Աչքերու հաւատալ կը դժուարանանք, այս յարկին տակ տղաք փոխագարձ սիրոյ լաւագոյն զասը կը սորվին: Աէրը, կը յարէր Բեսթալոցցի, սէրը դըպրոցական զործին մէջ ամէն ինչ է: «Համոզուած եմ, կը շարունա.

կէր ան, որ իմ սէրս միայն պիտի կարենայ ուղղել աշակերտներուն յոռի կողմերը իմ սրտուկս միայն պիտի կրնամ կազմել անտնց մէջ գորաւոր նկարագիր մը ։

Եթէ Նէօհոֆի դպրոցը զրկանքի երկար շղթայ մըն էր իրեն համար, Սթանսը ո՛չ նուազ անձկութեան օրեր վերապահած էր իրեն։ Եւ ինք որ մը Հելվէտիացիներուն ուղղած իր մէկ ճառին մէջ կը յորդորէր զիրենք Նաբոլէսնի յաղթական բանակներուն կողքին քաղաքակրթութեան դրօշը պարզած դէպի կոիւ սլանալ՝ կոռւելով Ֆրանմայի՝ քաղաքակրթութեան նոր ջահակիրին կողքին, օր մը յուսահատ ու պատրանաթափ՝ տարամերժ այլուրութիւն մը պիտի փնտոէր Պոնաբարդեան բոնակալութիւնը պախարակելու², որուն հետեւանքով Սթանսի 90ի չափ որբերը դուրս կը թափէին դպրոցէն զոր կը գրաւուէին զինուորներ հիւանդանոցի վերածուելու համար։ Սթանսի մէջ Բեսթալոցցի կորսնցուց իր առողջութիւնը, այլեւս չէր կրնար տոկալ ամէն կարգի բիրտ զրկանքներու, սկս տարիւն թքնել՝ և դէպի վեր՝ Ալպեաններու բարձունքին վրայ՝ կիւրնիկէլ փնտոել կազդոյր իր քայքայուած առողջութեան, ուրկէ, օր մը դիտելով Հելվէտիական կանաչ դաշտերը և անհուն հորիզոնները, պիտի ըսէր. «Կը հիանամ բնանկարի զեղեցկութեան վրայ, բայց կը մտածեմ մանաւանդ այն խելք մարդոց մասին, որոնք այս զեղածիծալ հովիտներուն մէջ կը բնակին, որոնք կը տանջուին իրենց յոռի կրթութեան, ազիտութեան և ալքատութեան պատճառով։»

Սթանսի դպրոցին յաջորդեց Պիւրկտորֆը, ուր Բեսթալոցցի կրցաւ տիրանալ անժխտելի համբաւի մը, որ այլեւս իր անունը պիտի անմահացն! ը. Պիւրկտորֆը Բեսթալոցցիի հոչակին կենդանի ցիշատակարանը եղաւ, ուր արէն. կողմէ կրթական մշակներ և մանկավարժներ կը վագէին ուսումնասիրելու համար ուսուցման նորագոյն այն եղանակը որ փառքի ճամբան բացաւ Բեսթալոցցիի առջեւ։ Պէրնի կրթական յանձնախումբի քննիչներ 1800ին Բեսթալոցցիի մէկ դասախոսութեան ներկայ գոնուելէ վերջ իրենց հիացմունքը անձամբ կը յայտնէին անոր ըսելով. «Չեր աշակերտները զարմանալի յառաջդիմութիւններ ըրած են. անոնցմէ ամենէն ճկունները արգէն իրեւ զեղազրող, իրեւ զծազրիչ և թուաբանագէտ կը ճանչցուին... Դուք յոյց տուիք թէ ինչպիսի ուժ մը զոյութիւն ունի ամենէն փոքրիկ տղայոց մօտ և թէ ի՞նչ կերպով այդ ուժը պէտք է մշակել ու զարգացնել։»

Պիւրկտորֆի դպրոցը, ուր չորսէն հինգ տարեկան մանուկներու Ա. ու Բ. սորվեցնելու կոչուած էր Բեսթալոցցի՝ հետզհետէ

բարձրացուց իր ծրագիրը, և երկրորդական վարժարան մը դարձաւ. — հակադրութիւն մը Բեսթալոցցիի խառնուածքին, որովհետեւ իր դերը զերազանցապէս կը պարփակուէր մանկապարտէզ-նախակրթարանի մէջ. Վարչական կարգ մը կարողութիւններէ թափուր՝ իր վարժարանը յաճախ ամուլ քաշքուքներու կ'առաջնորդուէր, բայց իր ծայրայեղ անձնութիւնը, իր բարոյական անձը, ամէն ինչ էր վարժարանին ի նպաստ, որուն համար այցելու մը կ'ըսէր. «Վարժարան մը ըլլալէ աւելի ընտանեկան յարկ մըն էր ան»:

1804ին, Պիւրկտորֆի վարժարանը իր յաջողութեան գաղաթնակէտին հասած՝ կը զոցէր իր դռները, քաղաքական դէպքեր պատճառ կը դառնային ատոր, ու Պիւրկտորֆի դպրոցը զրաւուելով կը վերածուէր իբր կեդրոնատեղի այդ շրջանին ժողովրդային իշխանութեան:

Բայց որքան ատեն որ անոր դռները բաց մնացին, ան տեսակ մը այցելավայր մնայ ամէն կարգի հետաքրքիրներու։ Ուսանելու համար մինչեւ խտավիայէն, Գերմանիայէն, Սպանիայէն, Ֆրանսայէն ու Անգլիայէն աշակերտներ խումբ խումբ կը փութային, շատ անզամ ետ կը դառնային անոնք տեղի չգոյութեան պատճառով։

Այցելուներու այդ բազմութեան մէջ կ'արժէ յիշատակել անունները մանաւանդ Տիկ. ար Սթաէլի, Ֆրէօպէլի (որ չվարանեցաւ բնաւ Բեսթալոցցին իր ուսուցիչը կոչել)։ Մէն ար Պիւրոնի և Վիւրթէմպէրկի թագուհին Այս բոլորը, սակայն, զինք չէին զոհացներ, Բեսթալոցցի կ'ըսէր. «Ինչ որ կ'ուզիմ ըլլալ, խտէալներուս համար Զուիցերիան շատ նեղ է։ Իմ գաղափարներս համաշխարհային են» (Cosmopolite)։ Ու առիթէն օգտուելով 1802ին անդամ ընտրուեցաւ, Հէլվէտիական դեսպանութեան մը, որպէս զի կարենայ Պոնաբարդը իր դատին ի նպաստ շահիլ Նաբոլէոն, որ քաղաքական շատ աւելի մեծ երազներ կը սնուցանէր, «Ա. ու Բ.ով զբաղելու ժամանակ չունիմ», պատասխանեց՝ կտրուկ։ Թալէյրան, որ քիչ վերջ նիֆի մէջ բեսթալոցցեան մեթոտին գործնական մէկ կիրարկութեան ներկայ կ'ըլլար. «Այդ բոլորը շատ են ժողովուրդին համար, ըստ, ծամածութեամբ մը»։ բազմարուեստեան դպրոցի հիմնադիրը՝ Մօնժ, «Մեզի շատ են այդ բոլորը», առարկեց բեսթալոցցեան դրութեան համար։ Եթէ սակայն կայսերապաշտ ողիով սնած ֆրանսան անընդունակ էր թափանցելու տարողութեան բեսթալոցցեան մանկավարժութեան՝ իր ժամանակի ամենէն մեծ մանկավարժները՝ որոնք Բեսթալոցցիի հետու իրմէ վերջ քաղաքակիրթ մարդկութեան համար դաստիարակութեան նոր orientationներու պիտի առաջնորդէին ապազայ դարերը՝ դնահատեցին Բեսթալոցցին։ Այսպէս Ֆրէօպէլ բնաւ չվարանեցաւ.

Բեսթալոցցին իր ուսուցիչը դաւանիլու Խոկ Հէրպարդի, (գերման մեծ մանկավարժ) 1799ին Պիւրկտորֆ այցէն կրած տպաւորութիւնները այսպէս կը նկարագրէ Մօքսիօն. «Նոյնիսկ աշնան ան ընդունուեցաւ Բեսթալոցցիէն, որ Պիւրկտորֆի մէջ կը դասախոսէր Ան ներկայ եղաւ աշակերտներու փորձերուն և խորապէս թափանցեց որ ուսուցիչը (Բեսթալոցցի) 55-ն 8 տարեկան փոքրիկներու մէջ մեծ եռանդ և ուշադրութիւն ստեղծած է՝ ու մանաւանդ հրաշալի արդիւնքներ ձեռք բերած»¹: Բայց ո՞րն է այն մերուը որ հիմքը կը կազմէ բեսթալոցցեան մանկավարժութեան Ըսինք արդէն թէ փիլիսոփայական առումսի մանկավարժական մեթոտ մը չունէր Բեսթալոցցի. — մեթոտ մը որ հիմնուած ըլլար հոգե-բնախօսական երեւոյթներու վրայ, — ուսումնասիրուած ու բացատրուած մանրամասնութեանց մէջ:

Խօսելով Բեսթալոցցիի մանկավարժութեան մասին, Գօմբայրէ կ'եզրակացնէ. «Պէտք է խոստովանիլ որ դժուարին է բնորոշել ու ճշգել զայն»²: Մէն տը Պիրոնի ուղղած իր մէկ նամակին մէջ, Բեսթալոցցիի մանկավարժական գործին վրայ խօսելով Տէսթիոթ տը Թրասի կը զրէ. «Այնքան յեղելուած ու խօսուած Բեսթալոցցիին մեթոտը կարծեմ հեղինակին մոքին մէջ ալ վերջնական ձեւ մը ըստացած չէ: »

1803 ին Շթայնմիւլլը Բեսթալոցցիի մանկավարժական դրութեան մասին խօսելով, կ'ըսէր. «Իր մերուը իր ձեռք բերած առօրեայ փորձառութիւններն էին: » Ուիլիմէն՝ Խվէրտոնի իր աշակերտներէն մէկը, տարիներ վերջ կը զրէր. «Խնչպէս մնզի, նոյնպէս մեր ուսուցիչներուն համար Բեսթալոցցիի մանկավարժական մերուը անծանօթ բան մըն էր: »

Հակառակ ամէն բանի, սակայն, Ցիւրիխցի մեծ քաղաքացին ունեցաւ ուսուցման մէջ մերու մը, որ եթէ ոչ խորապէս ու մանրամասնորէն, զոնէ մասամբ պարզեց իր մերուի բացատրութիւն անուն գործին մէջ ուր որոշ կերպով կ'ըսէր. Ես մանկավարժութեան համար պահանջուած հիմնական սկզբունքները դրի, երբ ընդունեցի դէմյանդիման տեսութիւնը (մտատեսութիւն՝ ըստ Գ. Լուսինեանի) իբրև խարիսխ դաստիարակութեան գործին. ահաւասիկ իմ անհատական գործառորոշետե դէմյանդիման տեսութիւնը (intuition) հիմքն է մարդ-

¹ Marcel Mauzion. — L'Education par L'instruction et les théories pédagogiques de Herbart. էջ 9

² G. Compayré. — Pestalozzi.

կային իմացականութեան բոլոր ծանօթութիւններուն :

Ի՞նչ է դէմյանդիման տեսութիւնը որուն վրայ շատ անզամ-ներ անդրադարձած է Բեստալոցցի իր երկասիրութեանց մէջ:

Պղատոնի համար Intuitionը այն ուժն է որով մեր գերզզա-յական վիճակին կամ կեանքին կրնանք թափանցել:

Նէլինկ՝ գերման փիլիսոփան, կ'ընդունի որ դէմյանդիման տեսութիւնը այն գործողութիւնն է, որով մեր իմացականութիւնը բացարձակը իր ամբողջութեան մէջ կ'ընդգրկէ:

Տէքարդ Intuitionը կ'անուանէ այն գործողութիւնը, որով մարդ-կային իմացականութիւնը գաղափար մը կամ խորհուրդ մը կը յը-ղանայ: Իրեն համար Intuitionը հակաղրութիւնն է արտածական (déductif) ըմբռնումին, որ միեւնոյն ժամանակ ամբողջութեամբ չի գործեր, այլ մեր մտքի կարգ մը շարժումները կը կցորդէ, երեւոյթէ մը ուրիշ երեւոյթ մը յառաջացնելով¹:

Քանդի anschauungն է Intuitionը, որ իրերու վերաբերեալ անմիջական ծանօթութիւն մըն է²:

Ինչ որ միտքը կը ճանչնայ ուրոյն գործողութեամբ մը և ոչ յաջորդական գործողութիւններով, Intuitionն — դէմյանդիման տե-սութիւն, կը դաւանի իտմօն Գօպլօ³:

Քարիլ Ֆլամարիոնի համար Intuitionը կարգ մը ծանօթու-թիւններ ուղղակիւ և անմիջ սկանօրէն ընդունելու հոգեկան կարո-ղութիւնն է մարդուն մէջ⁴:

Մ. Մօքսիօն կ'ընդունի իմացական դէմյանդիման տեսու-թիւն մը (Intuition intellectuelle) յատուկ բանաստեղծներու, ար-ուեստագէտներու և փիլիսոփաններու⁵, ինչ որ կը մխտէ Քանդ, ա-ռարկելով թէ իմացականութիւնը գէպքերու և տպաւորութիւններու շարայարումներով կը կազմուի, հետեւարար ուրեմնական կազ-մական ան:

Բայց ինչ է ան՝ anschauungը Բեսթալոցցիի համար: — Այն ինչ որ է զրեթէ Տէքարդի և Քանդի համար: Բեսթալոցցի նոյն-պէս կ'ընդունի թէ Intuitionը այն ուժը կամ կարողութիւնն է որով արտաքին աշխարհի տպաւորութիւնները անմիջականօրէն կազ-դեն մեր ներքին ու արտաքին աշխարհին վրայ: Ան փորձառութիւն մըն է բղխած ուղղակի մեր անձէն:

¹ Descartes. Discours sur la méthode

² Emmanuel Kant. Critique de la raison pure

³ Ed. Goblot. vocabulaire philosophique

⁴ C. Flammarion. Dictionnaire encyclopédique illustré ՀՅ. 5

⁵ M. Mauxion. l'Education par l'instruction ԵԶ 34

Բնաթարոցցեան բացասարութեամք, արտաքին աշխարհի իրերն ու երեւոյթները մեր մտքին վրայ ուղղակի և անմիջականօրէն ազգելու, մեր արտաքին ու ներքին աշխարհին մէջ ցնցումներ, մնձ ու փոքրիկ տպաւորութիւններ յառաջ բերելու անժխտելի ուժը ունին: Աւելի պարզ օրինակով մը, արտաքին աշխարհը պէտք է նմանցնել ձայնագրի (phonographie) այն ասեղին, որ սկսւածելին (ըլէթին): մեր ուղեղին վրայ գծելու կարողութիւն ունի. ինչպէս որ մեր փափաքած զեղեցիկ երգը ձայնագրելու համար ջանալու ենք որ սկսւածեղին խրաքանչիւր դարձին անոր գեռ կոյս երեսին վրայ սխալ խազ մը չգծուի. այնպէս ալ, և աւելի, ուշագիր ըլլալու ենք որ մանուկին հոգիին ու մտքին վրայ սխալ ու զարտուղի խաղեր չփորագրուին:

Զանալու ենք մանուկը գնել արտաքին աշխարհի այն սլատկերներուն և երեւոյթներուն գէմյանգիման՝ որոնք արագ և բաւագոյն եղանակով կը կերտեն ազնիւ ու հզօր նկարագիր մը:

Բնաթալոցցիի համար, այս տեսակէտով, ուսուցիչը իր կարգին կինդանի պատկեր մը կամ երեւոյթ մընէ, արդ, որքան առեն: որ երեւոյթ մըն է ան արտաքին աշխարհին անժխտելի մաս կազմակ, ուրեմն իր անձը, իր ապրելակերպը, բարոյական իր կեանքը աղբեկը մը պիտի գառնայ աշակերտին համար որուն պիտի երկարէ ան իր շրթունքները, իր պապակը, իր ծարաւը յազեցնելու:

Բնաթալոցցի կը պահանջէ որ ուսուցիչը իր անձին օրինակով մեծապոյն զիտելիքը ջամբէ տշակերտին: Առանց գեռ աւելի խորերը, աւելի մանրամասնութեանց մէջ մանալու, կը տեսնենք որ Բնաթալոցցի համար Intuitionը անժխտելի աժ մը, օրէնք մըն է, կեանքն իսկ՝ որմէ խուսափիլ անհնարին է:

Եւ յետոյ առարկայացնելով իր մեթուր, կ'եղրակացնենք. — Արտաքին աշխարհը և իր երեւոյթները գպրոցէն ներս փոխանակ տեսականօրէն և ի բացակայութեան ներկայացուելու, առարկայականօրէն ու փորձառական, intuitif որևէ յանդիմանական ճամբով ներկայացնել, հիմքը, խարիսխն իսկ կը կազմէ Բնաթալոցցեան մանկավարժութեան Այն խո՛ր համոզումը թէ՝ իրերը առարկայօրէն ու փորձառական ճամբով մէկ անգամէն աւելի լու կը ճանչցաւին երբ մանուկին զգայարանքներուն շօշափելի կը դարձնենք զանոնք, քան տասը քսան անզամ ի բացակայութեան անոնց ձեւին ու յատկութեանց մասին ճառած ատեննիս, ուռացիան բնապաշտութեան առաջնորդեց զինք, ասոր համար ան նախընտրեց բնական աշխարհագրութեան առ մը բաց գաշտի մը կամ բնութեան զրկին մէջ աւանդել, քսան գ

գպրոցական չորս պատերու մէջ արդելափակ՝ քարտէսներու վրայ՝ ինչպէս կ'ընդունէր բուսաբանական, կենդանաբանական, հանքաբանական դասընթացք մը աւանդել բնութեան զրկին մէջ։

Ասոր համար չէ՞ր որ կ'աղաղակէր ան. «Մի՛ ձգէք որ մանուկը բառերու լաբիւրինթոսի մը մէջ մոլորի, կենդանի օրինակներով մշակեցէք իր միտքը» — Գիտական դրութեամբ մը մանուկը դաստիարակելու համար կոչուած զիտուն մանկավարժներու կարծիքը մէկ ու կէս դար վերջ տարբեր բան մը պիտի չըլլար. նմանութեան նոյն եզրերը կ'ունենանք Տօք. Թուլուզի մօտ. «Le but de l'éducation scolaire est de former l'esprit est non, comme on le croit communément, de transmettre des connaissances»¹.

Բարոյականի հետ աղերս ունեցող նիւթերու մասին նոյնքան բծախնդիր՝ քաւողներէ և ֆլիչէ խօսքերէ աւելի ան ջանաց իր անձին օրինակովը լաւազոյն դասերը տալ ուրիշներուն։ Տառապանքը, որ անքաժանելի պիտի մնայ մտքի և որաի մարդուն համար, վարժեցուց իր աշակերտներուն, անոնց մէջ և անոնց հետ արտասուելով իր բոլոր մեծ գործերուն մէջ սէրը ընտրեց իրեն զօրավիրու Ամէն ինչ փորձառականօրէն մանուկին աւանդել, զաղափարի միսթիք ոլորտներու մէջ մտնելէ առաջ պարզէն բարդ, ծանօթէն դէպի անձանօթ դիմել. մանուկին հեռաւոր առարկաներու և երեւոյթներու մասին խօսելէ առաջ իր իսկ անձին, իր իսկ շրջապատին մասին խօսիլ յանձնարարեց։

Մեծն ու սպառնալիքը, իբրեւ հնացած ձեւ, արտաքսեց իր գպրոցէն, և ի՞նչ հարկ ծեծի ու խարազանի, կ'ըսէր թեսթալոցցի, երբ սէրը կրնայ հրաշքներ գործել։ Իրմէ շատ առաջ Ֆէնէլոն ըսած էր. «Ճանանք հաճելի դարձնել գպրոցը»². Արթնցնենք մանուկին մէջ ձեռներէցութեան և ինքնազիտակցութեան ոգին՝ կեանքը իր սեփական ուժերով ապրելու, սանք անոր առիթ զեղեցիկ զսհողութիւններու հոգեպարար զմայլանքը ապրելու, և մանաւանդ ջանանք միշտ աշխոյժ, միշտ զուարթ արամազրութեան մը մէջ պահել զայն, որովհետեւ «խաղն ու զուարթութիւնը պէտք է ուսման առանցքը կաղմենն»³. ահա այս բոլորը եղան իր քարոզած սկզբունքները, որոնք զինք հանդիսացուցին մանուկին՝ որով և մարդկութեան մեծագոյն

¹ Dr. Toulouse.— Comment Former un esprit Գ. Ա. III, ԵՒ
Dr. Maurice de Fleury.— Nos Enfants au collège ԵԶ 246-47

² Fénelon.— De l'éducation des filles.

³ Dr. Ed. Claparède.— Psychologie de l'Enfant, ԵԶ 219

բարերարարներէն մին, իր համբաւը տարածելով աշխարհի ամէն կողմ։ Բեսթալոցցի արժանի էր այդ համբաւին ու համակրանքին որ պղատոնական ինչ մը չմնաց սոսկու Դաստիարակութեան մէջ իր քարոզած սկզբունքները մշակոյթի լայն ասպարէզ մը դարձան ապագայ բոլոր մեծ մանկավարժներուն համար, որոնք իրեւ դաստիարակ, իրեւ ուսուցիչ մարդկային ճակատագիրը կը դարբնենու ՚իրեթէ դար ու կէս վերջ՝ այսօր, արդիական սկզբունքներով ղեկավարուող բոլոր դպրոցները որդեգրած են բեսթալոցցեան դրութեան շատ մը տեսակէտները, յիշենք, Ֆրանսայի մէջ երկսեռ ամենէն աղատ դաստիարակութեան մը նմոյշը՝ Collège de Normadeն ու անիշխանական Աէպաստեան ֆուխն Ecole des Rochesը։ Իր մէկ հոյակապ գործին մէջ Տքթ. Կիւսթավ Լը Պօն¹, բաղդատական վերլուծումով մը երեւան կը հանէ զերման և ամերիկեան մանկավարժութեան առաւելութիւնները լատին մանկավարժութեան վրայ։ Առաւելութեան այդ բաժնին մէջ զանց կարելի չէ առնել բեսթալոցցիի դերը, որ Ռուսոյի հետ բնապաշտ փիլիսոփայութեան մը և մանկավարժութեան մը հիմքը դրաւ, որ սիրեց մանուկը՝ —ապագայ մեծ մարդը, ուստի և սիրած եղաւ մարդկութիւնը, որ զինքը պետի չմոռնայ երբեք։

Վ. ԳէՈՐԳԵԱՆ

¹ Dr. G. Le Bon.— Psychologie de l'éducation



ԵՐԱԾՈՒՅՈՒՆ

ԶԱՀԱԿԻՐ Ա. հատուին գտած զերմ ընդունելութենէն խրախուսուած՝ երբ Բ. հատուր հրապարակ կը հանեմ, երբեք յաւակնութիւնը չունիմ լիակատար ու անքերի գործ մը կատարած ըլլալու։

Մեծութիւններու ուսայնին մեջ սպառած երբեմն, կ'զգամ խորապես՝ թէ անհատներու եւ ազգերու հասունութեան համար ինչե՛ր անհրաժեշտ էն, բո՞դ սորվին անոնք միայն ասիկա, որ իրենց համբակութիւնն ու սովորութիւնը, իբրև անժխտելի կարողութիւն։ միամիտներու պարտադրել կը փորձեմ։

Եւ յետոյ, կատարելութիւնը օրենք մըն է, իսկ բացարձակը՝ ժիսումը ստոր (Օկիւս Քօնդ): Ո՞չ գրաւոր եւ ո՞չ ալ բերանացի զնահատանքներ, այս գործին Ա. հատուին հրատարակութեան առքիւ ստացուած գրագետ բարեկամներէ, պիտի կրնային մոլորեցնել զիս։

ԶԱՀԱԿԻՐ ին հրատարակութիւնը փորձ մըն էր եզիպտահայ երիտասարդ մտառուականութիւնը գրական ձեռնարկի մը զաղափարին լծելու. ուրախ եմ ըսելու որ նպատակիս մեջ երբեք վրիպած շեմ. եւ երբ այսօր հեռաւոր այլուրութիւններու կարօտվ լեցուն եւ ուղեւորի յոզեած գուազս ձեռք առած կը պատրաստուիմ հայրենի գեղեցկութիւններու դառնալ, ինծի վերջին խօսք մը միայն կը մնայ արտասանել բոլոր անոնց՝ որ տարագրի այս հորիզոններուն տակ գրական եղբայրակցութեան մը միակ սփոփարար ու բաղց նուիրականութիւնը ուխտեցին ԶԱՀԱԿԻՐ ին։

— Երբա՛նք, երբա՛նք, դէսի բնագաւառ, այսունետեւ հոն միայն պիտի տրախ Հայուն պատեհութիւնը մեծ ու տիրական գեղեցկութիւններու բազինը հոյակերտելու։

Այդ հաւատքով կը մեկնի անս այս տողերը սուրագրովը։

ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

| | Էջ | |
|--|-------------------|-----|
| Ուխտաւորք | Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ | 5 |
| Սուրիս կայծերուն առջեւ | ՄԻԱՄԱՆԹՈ | 9 |
| Ալպօմբ | Վ. ԳԵՂՐԴԵԱՆ | 11 |
| Յարութիւն | Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ | 15 |
| Լոեց տարակս | ՏՔ. Մ. ՍԱԼԲԻ | 17 |
| Կը մեռնի յուշն | ՀՐ. ՆԱԶԱՐԵԱՆՑ | 27 |
| Հին յիշատակ մը հեռաւոր | ՀՐ. ՆԱԶԱՐԵԱՆՑ | 27 |
| Դանիել վարուժանին | ԱՆԱՑԻՍ | 28 |
| Այսուհետեւ | Վ. ԳԵՂՐԴԵԱՆ | 32 |
| Տերն ող տառապեցաւ | Զ. ՄԱՍԻԿԵԱՆ | 33 |
| Մրիքարով հնչեակ (բրգմ.) | ԺԱՆ ՌԻՇԼԲԵՆ | 40 |
| Անսպատի աղջնակս | ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ | 41 |
| Քեզի | ՏԻԿ. Զ. ԹԻՒՐՍՊԵԱՆ | 44 |
| Կռուով Դաւիթը (բրգմ.) | ԽԱՆԴԱՄՈՒՐ | 45 |
| Վիպերգ (բրգմ.) | ԷՏՄՈՆ ՀԱՐՕՔՈՒՐ | 51 |
| Ֆրանսացւոց եռամեայ տիրա- պետութիւնը Եգիպտոսի վրայ | Յ. ՍՈՒՅԵԱՆ | 52 |
| Անյայց զերեզմաններուն | Վ. ՊԵՐԵՄՐԵԱՆ | 59 |
| Գիշերաւորդիկին երգը | ԼԵՅԱՆԻ | 61 |
| Մուրատի ափերուն բով | Ա. ՊՈՂՈՍԵԱՆ | 63 |
| Բանդուրանիզմը Պոլսոյ մէջ | Վ. ԵԿՆԻԳՈՄՇՈՒԻԵԱՆ | 64 |
| Սէն - Մօրիցին | ՏԻԿ. Ա. ԼԱՂԱՅԵԱՆՑ | 76 |
| Հայ իտեղին յալբանակը | ՏՔ. Ռ. ԹԱԴԻՈՐԵԱՆ | 77 |
| Հրաժես | Մ. ՈՍԿԵԱՆ | 79 |
| Մեր ջաները | Թ. ԵՂԻՇԵ | 81 |
| Թափուր սենեակ (բրգմ.) | Հ. ԻՊԱԿԵՆ | 82 |
| Կոյրերը (բրգմ.) | Մ. ՄԵԹԵՐԼԻՆԿ | 84 |
| Ներում (բրգմ.) | ՄԻՒԼԱ ԲՐԻՒՏՈՄ | 108 |
| Բերալոցցի | Վ. ԳԵՂՐԴԵԱՆ | 110 |
| Երկու խօսք | Վ. ԳԵՂՐԴԵԱՆ | 132 |



ՎՐԻՊԱԿ

| Էջ | ՏՈՂ | ՄԽԱԼ | ՈՒՂԻՂ |
|-----|-------|---|---------------------|
| 12 | վարեն | 17 պայծառ | պայծառը |
| 69 | վարեն | 5 եկաւ | եկան |
| 70 | վերեն | 1 գտած | գտան |
| 70 | » | 23 բանախսօսութիւններ | բանախսօսութիւններու |
| 71 | վարեն | 2 կը դիւրեր | կը դիւրէր |
| 78 | վերեն | 2 թիկնող | թիկնեղ |
| 78 | » | 12 բնաջրջել | բնաջրջել |
| 79 | վարեն | 7 քոյն | քոյր |
| 102 | » | 4 կիներ | կիներ |
| 112 | » | 14 կը թելագրէր | կը թելագրէր |
| 112 | » | 2 հոն եր | հոն եր որ |
| 57 | վարեն | 8 ըլլալովին մօս աւելցնել . «կը ջանային ամեն տեղ ու ամենուն հետ լաւ յարաբերութիւններ ստեղծել ու սեր մերմու- թիւն մշակել . Ամբողջ բանակին վրայ՝ ... » | |



ՎԵՐՆԵՐԻՆ ՀՅԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔԸ

| | | |
|--------------------|-------------------------|---------|
| Պահուսի Զայներ | (Եթերթուածներ) | ոպառուծ |
| Պղնձե Երզեր | » | » |
| Շամանակալ | » | » |
| Պահուսի | (Երական համարժեություն) | » |
| Զամանակիր (Ա. Փիլ) | » | » |

ԳԻՒ 15 ԴԲԸ

ԵԿՐԱԿՈՅՑԻ ՀԱՄԱՐ՝ 5 ՖՐԱՆԳ
ԱՄԵՐԻԿԱՆՑԻ » 1 ՏՈՒՆԻ

ՀԱՍՏԱՏ

VARTAN KEVORKIAN

B. P. 868, le Caire

Egypte